

Հայկական գիտակիետագործական համակաց  
Armenian Research & Academic Repository



Այս աշխատանքը պրեսազգային և թերթագրական մասնակիցների  
ոչ առևտության հայտապահության 3.0 արշավագրավ

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial-  
ShareAlike License 3.0 Unported (CC BY-NC-SA).


Դա է պարզ էս.

Կատարելու և սեղմանելու համար պահպան և բարեկայացնելու վեհական իրավունքը  
կերպության համար պահպան և բարեկայացնելու վեհական իրավունքը


You are free to:


Հաստիք - <http://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/>:

Տպագիր - <http://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/>:










*EPR*

891.99


Հ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵԼԻՔ

# ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ՊԱՐՈԱԴՆԵՐ




ԶԱՒԵՇ—ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾ



36

ԼՕՍ ԱՆՁԵԼԸ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ

1926



COPYRIGHT, 1926, BY A. MELIK  
ALL RIGHTS RESERVED.

PRINTED BY YANKEE PRESS  
2016 MAPLE AVENUE, LOS ANGELES, CALIF.

ՀԵՂԻՆԱԿԻՑ ՆՈՒԷՐ ԱԼԵՔ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆԻՆ

*Ride si sapi.*

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՍԻՍԱԿ, Իրաւագիտութեան ուսանող  
ՄԻՍԱՔ, Արձանագործութեան ուսանող  
ԳԻՍԱԿ, Բժշկութեան ուսանող  
ՍԵՒԱԿ, Ճարտարապետութեան ուսանող  
ՓԱՅԼԱԿ, Նկարչութեան ուսանող  
ՇԱՀՆԱԶԱՐՕՎ, Տնտեսագիտութեան ուսանող  
ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ, Տանտիրուհի  
ԶԻԶԻ, Խանութպանի աղջիկ  
ՏԻԿԻՆ ԱՐՓԵՆԻԿ  
ՕՐԻՈՐԴ ՎԱՐԴԵՆԻԿ  
ՈՍՏԻԿԱՆ

Դէպքի վայրն է Փարիզ:

# ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ՍԱՐՍԱՆԵՐ

---

## ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Վեցերորդ յարկի մի սենեակ, տանիքի տակ,  
եռանկիւնաւոր առաստաղով։ Խորքում՝ դուռ, աջ  
կողմը՝ պատուհան։ Զախակողմը՝ մահնակալ, ան-  
կողինը խառնիխուռն։ Երեք ոտքով լայն սեղան,  
չորրորդ ոտքի փոխարէն պարապ արկդ։ Սեղանի  
վրայ գրքեր, թերթեր, բուղթեր։ Լուացուելու  
խուռը պնակ, պարապ ժիշեր։ Կօչիկ։ Հնադարեան  
երկու աննոռնի արռո։ Պատերի վրայ կոտրած հա-  
յելի, ինչ որ կասկածելի պատկերներ, թերթերից եւ  
հանդէսներից կտրուած դերասանուհիների եւ պար-  
ուիների նկարներ։

Ընդհանուր աղֆատութեան հետքեր։

## ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Սիսակ, Միսաք, Գիսակ, Սեւակ։ Մէկը արռոի  
վրայ, երկրորդը սեղանի վրայ, միւսները գլորտում  
են մահնակալի վրայ։

**ԳԻՍԱԿ.**— Անշուշտ, այդպէս է։ Մեր համալսա-  
րանի բժշկական մասնաճիւղի դիազննական աշխա-  
տանոցին վերատեսուչը՝ Մուսիօ Քառնիէ խոստա-  
ցած է քառթ մը տալ ինձ, որպէսզի փրօֆեսօր Վո-  
րօնովին ներկայանամ։ Ուրիշ կերպ անկարելի է այդ  
մեծանուն ոռւս գիտնականին հետ տեսակցիլ նոյն  
իսկ վայրկեանի մը համար, այնչափ զբաղուած է։

**ՍԵՒԱԿ.** — Կը կարծե՞ս թէ մամուլին մէջ այդ-  
չափ աղմուկ հանած իր գիտական նորութիւնները  
իրապէս լուրջ արժէք մը ունին:

**ԳԻՍԱԿ.** — Խե՞նթ ես: Եթէ ես այսչափ կարեւո-  
րութիւն կ'ընծայեմ՝ կը նշանակէ որ արժէք ունին:  
Դրեթէ վեց շաբաթ եղաւ, ինչ անոր հետ ժամադիր  
ըլլալու փորձերը կ'ընեմ եւ նոր միայն յաջողեցայ,  
Մուսիօ Քառնիէյին շնորհիւ: Այդ տեսակցութենէն  
օդտուելով՝ անպատճառ շարք մը յօդուածներ պիտի  
դրեմ սկզբանական թերթերէն մէկուն, որոնք, անշուշտ  
առաջին էջին վրայ պիտի դրուին:

**ՍԵՒԱԿ.** — Կը կարծե՞ս թէ փրօֆեսօր Վօրօնօվին  
գիւտով իրապէս հնարաւոր է ծեր մարդ մը կամ պա-  
ռաւ կին մը երիտասարդութեան վերադարձնել: Ինձի  
պարզ զուարձաբանութիւն մը կը թուի այդ ամենը:

**ԳԻՍԱԿ.** — Ոչ թէ կը կարծեմ, այլ բացարձակ  
համոզուած եմ: Պիտի գիտնաս, որ ուրիշ մեծանուն  
ուուս գիտնական մը՝ փրօֆեսօր Մեչնիքով՝ յայտ-  
նագործեց ծերութեան միքրօպները, որոնք եթէ հը-  
նարաւոր ըլլայ մեոցնել մարդկային մարմնի մէջ՝  
ալ ծերութիւն կոչուած չարիքը պիտի անհետանայ  
աշխարհի վրայէն: Մեչնիքով մեռաւ, չկրնալով մի-  
ջոց մը գտնել այդ ծերութեան միքրօպները ոչնչա-  
ցընելու համար, սակայն, իր հետեւորդներուն առ-  
ջեւ ճամբայ մը բացաւ գիտական հոյակապ հետազօ-  
տութիւններ ընելու այդ ուղղութեամբ: Փրօֆեսօր  
Վօրօնօվ, թէեւ տարբեր հողին վրայ կեցած՝ սա-  
կայն նոյն վսեմ նպատակը կը հետապնդէ:

**ՍԵՒԱԿ.** — Իրա՞ւ է թէ ան կենդանիներու մար-  
մինէն այլեւայլ միսեր անդամահատելով՝ զանոնք  
ծերերու մարմնին վրայ կը փոխադրէ, այդ ձեւով  
անոնց վերադարձնելով երիտասարդական աշխոյժն  
ու կենսունակութիւնը:

**ԳԻՍԱԿ.** — (Հեղինակաւոր երեւյթով) կապիկներ եւ այծեր առայժմ:

**ՄԻՍԱԿ.** — Երբ հարստանամ՝ տիւղինա մը կապիկներ պիտի գնեմ եւ զանոնք քչիկ մը քաղաքակըրթեմ, եթէ ոչ խելքիս չի պառկիր անտառներէն նոր բերած այդ մեր ցեղակիցներէն ինձ պէտք եղած միսերը փոխ առնելու դաղափարը: Կը վախնամ որ անոնց կապկային հոգերանութիւնն ալ ինձի փոխանցուի:

**ՄԻՍԱՔԻ.** — Երբ կ'ընդունիս որ ինքդ կապիկներու ցեղակից ես՝ պատճառ մը չունիս անոնց հոգերանութենէն խորշելու:

**ՄԻՍԱԿ.** — Տափակ սրախօսութեամբդ կը հաստատես որ ինքդ բաղադրեալ ապուշ մըն ես: (Գիսակին): Դուն այն ըսէ, Գիսա՛կ, եթէ փրօֆեսօր Վօրօնօվին գիտը ընդհանուր դործածութեան դրուի՝ ալ աշխարհի վրայ պառաւ աղջիկ չպիտի՞ մնայ:

**ՄԵԽԱԿ.** — Մեր ուղածն ալ այդ է: Պառաւներէն ի՞նչ օդուտ:

**ՄԻՍԱՔԻ.** — Կեցցե՛ն բոլոր մատղաշ աղջիկները: Վի՛վ լա ժէօնէս:

**ՄԵԽԱԿ.** — (Գիսակին) Ե՞րբ յոյս ունիս թէ պիտի տեսնուիս փրօֆեսօր Վօրօնօվին հետ: Ես շատ հետաքրքրուած եմ մանրամասնութիւնները հասկընալու:

**ԳԻՍԱԿ.** — (Հպարտ) Հաւանաբար յառաջիկայ ուրբաթ օրը: Անոր հետ տեսնուիլ շատ աւելի դըժւար է, քան Ֆրանսայի նախագահին հետ: Աշխարհի ամեն կողմերէն հաղարաւոր մարդիկ կուղան, նոյն իսկ արքայական ծագում ունեցող մեծանուն անձեր, որոնք կը փափաքին գիտական հեղինակաւոր խօսք մը լսել անկէ՝ կենսական ծանրակշիռ հարցերու շուրջ: Ո՞ր մէկուն դոհացում տայ: Անկարելի է:

**ՄԻՍԱՔ.** — Դուն, Սեւակ, Դարդէյի նոր մարմարէ արձանը տեսա՞ր, «Խորհուրդ» անունով։ Կը ներկայացնէ ծեր մարդ մը, որ գրկին մէջ առած է նորածին մանկիկ մը, եւ անոր ոտքերուն մօտ կատու մը՝ իր ձագերով։ Ծերունիին նահապետական ալեհեր գլուխը, իր օտարոտի խոհուն նայուածքը, որ կը թափառի մանկան եւ կատուի ձագերուն վրայ, կարծես լուծելու համար կենսական գերազոյն խորհուրդները՝ անբնական կատարելութիւն մըն են։ Ինձի կը թուի թէ այդ ծերունիին մէջ կը մարմնանայ քաղաքակրթութեան սանդուխէն շարունակ վեր բարձրացող մարդկային ցեղին հաւաքական իմաստութիւնը, բոլոր գոյութիւններուն գաղտնիքն ըմբռնելու։ Եւ այդ քարեղին արձանին ի՞նչ հոյակապ կեցուածք, դէմքի, ջիղերու ի՞նչքան նուրբ ձեւաւորում, հայեացքի ի՞նչ գերբնական խորունկութիւն։ Զքնաղ ձեռակերտ մըն է այդ արձանը, որուն նմանը չեմ կարծեր թէ հանդիպած ըլլամ ոեւէ տեղ։

**ՍԵՒԱԿ.** — Տեսայ, բայց չհաւնեցայ։ Ծերունիին աջ ձեռքը այնչափ երկար է, որ կանգնած վիճակին մէջ ծունկէն հինգ մատնաչափ վար պիտի կախուի։ Դեռատի աղջկան պէս ողորկ ծոծրակ մը ունի, իսկ ձախ ականջին բլթակը այնչափ ուռած է, կարծես մեղու մը խածած ըլլայ զայն։ Կատուին ձագերն ալ չորքոտանի սագերու կը նմանին, որոնք կարծես լողալու կը պատրաստուին։

**ԳԻՍԱԿ.** — Ահա՛ քննաղատ մը, որ իր իմաստութեան բոլոր գոհարները «Ֆիկարօ»ի խմբագրականներէն կը քաղէ։ Գիտնալու ես որ այդ թերթը գաղտնի թշնամանք մը ունի Դարդէյին դէմ, եւ չի համարձակելով բացօրէն հալածելու՝ հմտալից քըննական տեսութիւններու երեւոյթին տակ կը ջանայ զայն վարկաբեկել։ Դուն ալ այդ ամենը կլլելէ ետք՝

կուղես քու սեփական հապերու ձեւով մեղի ալ կը լեցնել։ Ֆի՛ տօն, փօվը տիաբը!։

**ՍԵՒԱԿ.** — Կը սխալիս։ Ես «Ֆիկարօ» թերթը կարդացող չեմ եղած երբէք, եւ չեմ այժմ։ Անձնական կարծիքս է որ կը յայտնեմ։ Կարծիքներս թերթերէն չեմ դողնար։ Այդ արհեստով թերեւս ինքդ կը դրաղիս։

**ԳԻՍԱԿ.** — Անձնական կարծի՞ք։ այդչափ հեղինակաւոր անձնական կարծիքներուդ համար աւելի լաւ է տարբեր տեղ մը փնտռես։ Երբ Պօլիս վերադառնաս եւ թիւրք բարեխնամ կառավարութիւնը քեզ յանձնէ Կալաթայի սալայատակները կարկտելու պաշտօնը՝ հոն կրնաս մասնագիտական հմտութիւնդ երեւան հանել անկաշկանդ կերպով։ Դարդէյին շուրջ խօսելու պատեհութիւններ, հոս, սակայն, բնաւ մի՛ փնտռեր։

**ՍԵՒԱԿ.** — Խորհուրդդ կ'ընդումիմ, պայմանաւ, որ ինքդ ալ Հալէալ մեկնիս ջորեսրանութեամբ զրադէլու։

**ՄԻՍԱԿ.** — Ֆի՛ . . . : Ի՞նչ անկիրթ ու կոշտ լեզու կը դարձածէք, մէկզմէկը վիրաւորելով։ Վայելչութիւնը կը պահանջէ որ երբ իրարու հետ համամիտ չէք խնդրի մը շուրջ՝ քննադատեցէք զիրար, առանց սակայն հարցը անձնականի տանելու։ Երկուքդ ալ հաստատեցիք որ պարզաբարոյ աւանակներ էք, ոչ աւել, ոչ պակաս։

**ՄԻՍԱՔ.** — Հիանալիօրէն քաղաքավարութեան խրատներ կուտաս, պարոն Սիսակ։ Աւանակ կը կոչես այս երկուքը, առանց նախապէս հայելիին մէջ նայելու, թէ ինքդ ինչ քանի կը նմանիս։ Իսկ դուն, Սեւակ, Դարդէյին շուրջ այդչափ աննպաստ արտայայտուելով՝ գեղագիտական ըմբռնումներուդ սահմանափակ ըլլալը կը հաստատես։

**ՍԵՒԱԿ.** — Կ'ուզես ըսել թէ ինքդ չափազանց նուրբ ըմբռնումնե՞ր ունիս գեղարուեստին շուրջ: Ինչո՞ւ ուրեմն անցեալ կիրակի Մօնմարթի մէջ Քաֆէ Ամէրիքէն նստած՝ այնքան խղճալի վիճարանութեան բռնուեցար Հունգարացի արձանագործ Զիչիին հետ: Զէ՞ որ ես ալ հոն էի, եւ տեսայ թէ ի՞նչպէս խաշած խեցգետինի պէս կարմրեցար, չկընալով մարդկային մարմնին սիմեթրիին օրէնքները բացատրել, գեղարուեստին մէջ կատարեալ խակութիւնդ ցուցադրելով:

**ՄԻՍԱՔ.** — Կը չարախօսես. այդ վիճարանութեան ներկայ եղան քսանէն աւելի անձեր եւ ամենուն կողմէ թէ՛ Զիչիին եւ թէ՛ ինծի որոշ կէտերուն մէջ իրաւունք տրուեցաւ: Հետեւաբար յաղթելու կամ պարտուելու ոչ մէկ խնդիր չկար հոն:

**ԳԻՍԱԿ.** — Զդէք այդ անկուտի վէճը: Աւելի աշէկ կ'ընենք, եթէ խորհինք թէ ի՞նչ ընելու ենք քանի մը ֆրանք ձեռք ձգելու համար: Կէտօրը կը մօտենայ, եւ առաւօտեան ողբալի նախաճաշէն ասդին բան մը կերած չունիմ: Բոլոր աղիքներս սուդի մէջ են:

**ՄԻՍԱԿ.** — Զուրին զօռ տուր, վա՛ռք Աստուծոյն մը ձրի է:

**ՍԵՒԱԿ.** — Ամբողջ դրամագլուխս քսանեւհինդ սանդիմ է, որ ըսել է հինգ սու: Ասկաշներու—այսինքն պատուաւոր թափառաշրջիկներու գաղտնի ճաշարան մը գիտեմ, այս գումարը շոայելելու: Սակայն հիւրեր չեմ կրնար հետս տանիլ: Վաղուընէն, սակայն, բացարձակ ծոմապահութեան պիտի հետեւիմ: Կ'ըսեն թէ առողջարար բան մըն է:

**ՄԻՍԱՔ.** — Ախալար, այս ի՞նչ անտանելի վիճակ է: Հինգ ֆրանք չի կրցի ձեռքս անցնել, որ կաւ գնէի եւ իմ «Քնացած Յաւերժահարս» արձանս աւարտէի:

**ՍԻՍԱԿ.** — Աւարտէիր՝ ի՞նչ օդուտ։ Ո՞վ պիտի կարեւորութիւն տայ։ Շատ-շատ այդ արձանը Սէյն զետը կրնաս նետել, ուր թերեւս ձուկերը սիրահարին իրեն։ Իսկ եթէ հինգ ֆրանք ձեռք ձղես եւ ինձ տաս՝ ամենին աղուոր արձան կը կանգնեցնեմ ոտամոքսիս մէջ, քու յիշատակին։

**ԳԻՍԱԿ.** — Շահնազարօվը գոնէ շուտ դար, որպէսզի անոր վերարկուն հազնիմ եւ նախորդ բնակարանս հանդիպիմ։ Թերեւս նամակ մը եւ դրամ եկած ըլլայ հօրմէս։ Այնքա՞ն ալ ցուրտ է դուրսը. հազիւ հոս նետուեցայ, ամբողջ մարմնովս դողալով։

**ՍԻՍԱԿ.** — Ես եւս փողոցը կուզեմ իջնել։ Կուզեմ ոեւէ տեղէ քսան կամ երեսուն ֆրանք պարտք առնել, յաւիտեան ետ չղարձնելու ամենահաստատ որոշումով։ Ատկէ զատ՝ կուզեմ դատական ատեանը հանդիպիլ, ուր աղմկարար դատավարութիւն մը կայ այսօր։

**ՄԻՍԱՔ.** — Շառլեմայնի ամուսնալուծման դատավարութիւնը ըսել կուզես։

**ՍԻՍԱԿ.** — Ո՞չ, Պերիէյի սպանութեան։ Անօթի դործաւոր մը ըլլալով՝ երկու ամիս առաջ այդ մարդը խանութպան մը սպանած է, իր հիւանդ կինը եւ վեց մանուկները սովէն փրկելու համար։ Ընկերվարական թերթերը սոսկալի աղմուկ հանեցին, Պերիէն տնտեսական դրութեան զոհ ներկայացնելով, իսկ պահպանողական մամուլն ալ զանոնք ոճրագործներու պաշտպան կազմակերպութիւն կը հոչակէ։ Պարզէ, երկու կողմն ալ ծայրայեղութեան կերթան։ Կուզեմ ներկայ ըլլալ այդ դատավարութեան, եւ եթէ Շահնազարօվը դայ, նախ ես պիտի հազնիմ անոր վերարկուն եւ ելնեմ փողոցը։ Դուք սպասեցէք մինչեւ վերադարձս։ Անպատճառ տեղէ մը քանի մը ֆրանք կը թոցնեմ ու կը դառնամ։

**ՍԵՒԱԿ.** — Այս ի՞նչ թշուառութիւն է, ախալար,  
չորս հոգի ենք եւ ոչ մէկը մեզմէ վերարկու ունի:  
Ստիպուած ենք մեր դղում-գլուխ Շահնազարօվին  
սպասել որ տուն գայ, եւ անոր վերարկուն փոփո-  
խակի հագնինք՝ փողոց ելնելու համար:

**ԳԻՍԱԿ.** — Եւ ի՞նչ վերարկու . . . կարծես անօթի  
շան մը դունչէն խլուած քուրջ ըլլայ:

**ՄԻՍԱՔ.** — Սիսակ, չե՞ս կրնար այդ վերարկուն  
անթիքաճիի մը ծախել, իբրեւ Նաբուգոդոնոսորէն  
կամ Եղիպտոսի Ռամզէս երկրորդ փարաոնէն քեղ  
ժառանդութիւն մնացած հնութիւն մը:

**ՄԻՍԱԿ.** — Թերեւս: Ես կրնամ իմ հոտած ծակ  
դուլպաս մէկ միլիոն Փրանքի ծախել, եթէ ապուշ  
յաճախորդ մը դտնեմ: Օրէնքը չըսեր թէ ես ինչո՞ւ  
հոտած դուլպաս մէկ միլիոնի ծախեցի: Շահնազա-  
րօվի վերարկուն կրնամ Եղիպտոսի արքայական  
քղամիդ կոչել: Օրէնքով ոչ ոք կրնայ զիս արդիլել:

**ՍԵՒԱԿ.** — Զգենք այդ: Դուն այն ըսէ, Սիսակ,  
չե՞ս կրնար Մամզէլ Զիղիէն քիչ մը երշիկ, պանիր,  
հաց եւ մէկ, երկու շիշ գինի բերել, անշուշտ տպա-  
ռիկ հաշուսով: Պատրաստ եմ մուրհակ ստորագրելու  
մէկ ամիս վերջ վճարելու պայմանաւ:

**ՄԻՍԱԿ.** — Մուրհակներդ Փարիզի բիացայի մէջ  
փոխանակուելիք ապրանք չեն: Իսկ Մամզէլ Զիղիին  
պիտի փորձեմ սիրահարիլ, թերեւս ապառիկ հաշիւ-  
ներուս համար աւելի հովանաւորութիւն ցուցնէ:

**ՄԻՍԱՔ.** — Մինչեւ որ ինքն ալ, իր հայրն ալ եւ  
իրենց սեւ կատուն ալ անօթի մնան: Արդէն իրենց  
խանութին մէջ հարիւր Փրանքի ապրանք չունէին.  
Կէսը քաշեր ես ապառիկ:

**ԳԻՍԱԿ.** — Մամզէլ Զիղի . . . Հըմ . . . : Այդ խա-  
շած շաղգամի հետ սիրաբանութիւն ընելլ՝ ամենա-  
մեծ հերոսութիւնն է, եւ արժանի՝ հիացմունքի:

## ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

**ԶԻԶԻ.** — (Դուրսէն) *Մուսիօ Սիսակ, կրնա՞մ ներս մտնել:*

**ՍԻՍԱԿ.** — (Ցատկելով) *Վա՛յ, քու խէրն անիծեմ. (դուռը բանալով) Անշուշտ, մատմուազէլ, խնդրեմ, խնդրեմ, շատ երջանիկ կ'ըլլամ: Անտրէ՛, մա տերի՛: Կեանքիս ամենէն չքնաղ վայրկեանները պիտի համարեմ, երբ ձեղ հոս տեսնեմ:*

**ԶԻԶԻ.** — (Դրան մօտ) *Շատ հիւրեր ունիք: Բայց հոդ չէ: Մուսիօ Սիսակ, հայրս զիս զրկեց ըսելու, որպէսզի խանութին պարտքը վճարէք: Դրամի խիստ կարիք ունինք եւ ա՛լ չենք կրնար սոլասել: Հայրս կ'ըսէ որ ինչքան երշիկ, կարագ, սլանիր, հաց ունէինք, դրեթէ ամենը դուք հետզհետէ տարած էք եւ ինք դրամ չունի նոր ասլրանք գնելու: Երեք ամիս եղաւ վաթսունը եւ եօթը ֆրանք քառասուն եւ հինգ սանթիմ տալիք ունիք: Հայրս կ'ըսէ որ այդ պարտքը դիւրութեամբ կրնայիք վճարել, եթէ միայն որոշէիք:*

**ՍԻՍԱԿ.** — (Հառաջելով) *Ա՛հ, Զիղի, այդ որոշումը երեք ամիս առաջ տուած եմ, եւ դժբախտ կըզդամ զիս, որ մինչեւ այժմ չկրցի ձեղ զգացնել տալ, թէ ինչո՞ւ պարտքս չեմ վճարեր: Օ՛, որչա՞փ թըշուառ եմ...*

**ԶԻԶԻ.** — *Ի՞նչ ըսել կուզէք, չեմ հասկնար:*

**ՍԻՍԱԿ.** — *Օ՛հ, մօն անժ. ի՞մ հրեշտակ, կարծեմ կը հասկնաք, սակայն ձեր կուսական ամօթխածութիւնը չի ձգեր որ ձեր քնքոյչ զգացմունքը երեւան հանէք:*

**ԶԻԶԻ.** — *Ի՞նչ քնքոյչ զգացումներ, ի՞նչ բաներ կը զրուցէք, մուսիօ Սիսակ: Ես եկած եմ հոս մեր խանութին առնելիքը դանձելու, սա չափը գիտեմ:*

Իսկ դուք երկդիմի բառախաղութիւններ կընէք, ու-  
րոնց իմաստը չեմ հասկնար:

**ՍԻՍԱԿ.** — Ա՛հ, մատմուաղէլ, մի՞թէ մինչեւ այժմ  
չհասկցաք, որ պարտքս չեմ վճարեր լոկ այն պատ-  
ճառաւ, որպէսզի ձեր յաճախակի այցելութիւնները  
վայելեմ հոս, ինչ որ մենաւոր կեանքիս մէջ ամենէն  
մեծ մխիթարութիւնը կը համարեմ:

**ԶԻԶԻ.** — (Զայրոյթով) Դուք, մուսիօ Սիսակ,  
խեղկատակութեան կը դիմէք: Եթէ դուք անկեղծ-  
օրէն տրամադիր էք ձեր պարտքը վճարելու՝ ըրէ՛ք  
այդ, եւ այնուհետեւ, եկէք ամբողջ օրը մեր խա-  
նութը նստելու, ուր պատեհութիւններ կունենաք իմ  
ներկայութեամբ ժամերով մխիթարուելու:

**ՍԵՒՍԱԿ.** — (Ցած ձայնով, Միսաֆին) Գոնէ ևս  
հրաժարելով հրաժարիմ . . . :

**ՍԻՍԱԿ.** — Ա՛հ . . . որքան . . . դժբախտ եմ . . . որ  
բնաւ չեմ գնահատուած . . . ձեր կողմէն . . . : Ա՛հ,  
մատմուաղէլ Զիզի, միթէ՞ չէք դիտեր որ մեր տե-  
սակցութիւնները բնաւ բանաստեղծական չեն կրնար  
ըլլաւ ձեր հօր խանութին մէջ . . . :

**ԶԻԶԻ.** — Ամենէն բանաստեղծականը այս է (աջ  
ձեռքի բբամատը եւ ցուցամատը իրար տփելով),  
հասկցա՞ք: Նախ այս բանաստեղծութեան վերջակէ-  
տը դրէք, այնուհետեւ միւս բանաստեղծութեան  
կրնաք անցնիլ: Աղիօ, մուսիօ:

**ՍԻՍԱԿ.** — (Հառաջանինով) Օ րեվուար, մօն անժ:  
Սիրտս յաւիտեան ձեզ պիտի փնտոէ:

(Զիզին հեռանում է:)

**ՍԻՍԱՔ.** — Խաղդ կորսնցուցիր: Պէտք չունէիր  
սիրային խօսակցութեան սկսելու մեր ներկայու-  
թեամբ: Այդ պատճառաւ խկ կատղեցաւ: Դում ա-  
պուշ մըն ես:

**ՍԻՍԱԿ.** — Ի՞նչ . . . ապուշը ևս չեմ, այլ դուն,

Եւ ան ալ ոչ պարզ ապուշ մը, այլ ապուշապետ: Ի՞նչ, դուն կը կարծես խենթ եմ որ իր հետ առանձին տեսակցութիւն մը ունենամ: Եթէ յանկարծ իր մողեսային բազուկներով վզիս պլլուի եւ սկսէ զիս համբուրել՝ կը կարծես ջիղերս կրնա՞ն դիմանալ այդ զարհուրելի փորձանքին:

### ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— (Ներս մտնելով) Մուսիօ Սիսակ, կը հաճիք սենեակի վարձքը վճարել: Ալ ձանձրացայ, կոկորդիս հասաւ: Վեց ամիս է հոս կը բնակիք եւ առաջին ամսուան վարձքը վճարելէն ետք՝ մէկ սանթիմ չէք տուած հինգ ամսուան ընթացքին: Ատկէ զատ՝ վաթսուն Փրանք եւս փոխ առած էք, որ ըսել է՝ հարիւր վաթսուն Փրանք տալիք ունիք ինձ:

**ՄԻՄԱԿ.**— (Պաղարիւնութեամբ) ԱՇ, մատամ, ո՞րքան կը ցաւիմ . . . : Ես, գիտէք, չափազանց անհանդիստ կ'զգամ եւ նոյնիսկ չափազանց անյարձար . . . : Ամեն վայրկեան հօրմէս դրամի կը սպասեմ, եւ գիտէք արդէն, պատերազմը արդելք կը դառնայ վոստային կանոնաւոր հաղորդակցութեան, եւ հասկանալի է . . . փոքրիկ յապաղումներ կրնան պատահիլ . . . եւ . . . եւ . . . :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— Պատերազմը անցեալ տարի կար, ներկայիս ոեւէ պատերազմ չկայ Ֆրանսայի եւ ձեր կառավարութեան միջեւ: Ի՞նչ հեքիաթ է, որ կ'ուզէք ինձ կլլեցնել . . . :

**ՄԻՄԱԿ.**— Այսինքն, մատամ, ասկէ չորս ամիս եւ տիսնեւեօթը օր առաջ վերջ գտաւ այն աղետալի պատերազմը, որու մասին ակնարկեցի . . . : Եւ ձեզ եւս յայտնի է, որ քոլեռա հիւանդութիւնը մեծամեծ

ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կը հանէ նամակներու փոխադրութեան գործին մէջ . . . եւ, անշուշտ . . . :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — (Հեգևիանինվ) Եւ անշուշտ ձեր հօր չէքը քոլեռայի միքրոպները կերած են — այդ չէ՞ք ուղեր ըսել: (Զայրոյթով) Մուսիօ, վերջ տուէք այդ խաղին: Կը բաւէ եղածը: Եւ քսանը չորս ժամուան մէջ դրամս կ'ուղեմ, այլապէս դատարանի սլիտի դիմեմ . . . Եւ սենեակս ալ կ'ուղեմ որ պարպէք: Չեմ կրնար այլեւս սոլասել: Ես կ'ուղեմ տանս մէջ հանդարտութիւն տիրէ: Դուք պարզապէս շուկայի փոխած էք — աղմուկ, աղաղակ, երգ: Այդ ամենը պարզապէս ջղերս տկարացուցած են: Աղիօ': (Հենանում է):

**ՄԻՄԱԿ.** — Վա՛յ, քաւթառ եահուտի: Տեսնենք թէ ի՞նչունիս կրնաս զիս ստիպել, որ վճարեմ: Հարիւր վաթսուն ֆրանք ունենամ՝ խե՞նթ եմ որ այդչափ դրամ ափող լեցնեմ:

**ՄԵԽԱԿ.** — Մուրհակ մը ստորագրէ եւ իրեն տուր: Սենեակող ալ փոխէ անմիջապէս: Ուրիշ միջոց չկայ:

**ՄԻՄԱԿ.** — Կը ստորագրեմ, պայմանաւ որ ամուսնանալէս վերջ վճարեմ, որովհետեւ անպայման միլիօնատէրի մը աղջիկ պիտի առնեմ, եւ այս մանրամունր տալիքները մէկ վայրկեանէն կրնամ մաքրել: Իսկ իր սպառնալիքները — վրաս դրէ: Վեց ամիս է, ամեն օր նոյնը կը կրկնէ:

**ՄԻՄԱՔ.** — Զօրաւոր երեւակայութիւն ունիս: Բանաստեղծ ըլլալու էիր . . . թէեւ, անշուշտ . . . անօթութիւնդ միակ կինդ պիտի ըլլար այն ատեն . . .

**ՄԵԽԱԿ.** — Ամենէն խելացի գործը որ կրնաս ընել այն պիտի ըլլայ, որ ամուսնանաս, քանի որ պատեհութիւնը ինքնին եկած է: Ըսել կ'ուղեմ Պօլսեցի որբեայրի տիկինը, անունը, շիտակը — մոռցած եմ:

**ՍԻՍԱԿ.** — Անունը դիտնալու պէտք չունիս, քանի որ, կրնաս վստահ ըլլալ՝ իմ մալս է։ Առաջին պատեհութեամբ սիրային տեսակցութիւն մը կ'ուզեմ ունենալ իր հետ։ սանկ, թեթեւ տեսակին։ Սակայն ուղեղս տակաւին շողիացած չէ որ իրեն հետ ամուսնանամ։ Իր երկու չօճուխները ո՞ւր շալկեմ եւ պտտիմ։

**ՍԵՒԱԿ.** — Ասոր համար մտահոգ ըլլալու պատճառ չունիս։ Ինքը կը շալկէ եւ քու ետեւէդ կը պտտէ։

### ՊԱՏԿԵՐ ԶՈՐՌՈՐԴ

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — (Ներս մտնելով եւ ուշադրութեամբ դիտելով ներկաները) Կօնֆերենցիա էք սարքել։

**ՍԻՍԱԿ.** — (Տեղից ցատկելով) Կ'աղաչեմ, մէկ վայրկեան, մինչեւ որ բառարանս գտնեմ, քանի որ քեզ հասկնալու համար անպատճառ բառարան մը ձեռքը ունենալու է։

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Դուն մի կօմեղիանտ ես, բայց մեր մելօ-դրամայի պէս կեանքում օպէրետային էմպուլսներ չեն սազում, որովհետեւ մեր ֆունկցիաները բուրժուա-արիստոկրատիական էմպէրատիվներ չունեն, եւ մենք սլօղիտիվ եւ րէալ մօմէնտները նկատի պիտի առնենք։

**ՍԻՍԱԿ.** — Ենթադրենք թէ բան հասկցանք։ Այժմ վերարկուդ տուր։ կարեւոր դործ ունիմ։


**ԳԻՍԱԿ.** — Կը բողոքեմ։ Կը պահանջեմ որ վիճակ նետուի, արդարութիւնը յարդելու համար։

**ՍԻՍԱԿ.** — Բայց ես կուզեմ……

**ՄԻՍԱՔ.** — Կ'երկրորդեմ։ Վիճա՛կ……

**ԲՈԼՈՐԸ.** — Վիճա՛կ…… վիճա՛կ……

**ՍԵՒԱԿ.** — (Փոքր քուղքեր ոլորելով՝ գլխարկի



A  
99603  
II

մէջ է լեցնում) Մէկ վայրկեան, տղա՛ք: Աշա՛,  
պատրաստ է:

ԳԻՍԱԿ.— Առաջ ես քաշեմ . . . :

ՍԻՍԱԿ.— Ո՛չ, առաջ ես:

ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.— Այս կօմբինացիաները ուլտրա  
կօմիւնիստական տեմպերամենտ ունեն, որոնք կասկի-  
տալիստական եւ պսեվդօ-լիբերալ մասսաների հա-  
ճար նախվ են եւ պրակտիկալ չեն:

ՍԻՍԱԿ.— Դուն ալ քու հայկական չինարէնու  
փէտ, եւ երեւակայէ թէ քեզ լսողները կը հասկը-  
նան ըսածներդ:

ՍԵՒԱԿ.— Պատրաստ է, դէ՛, քաշեցէ՛ք:

(Բոլորը մօտենալով՝ գլխարկից մէկ-մէկ քուղք  
են ժառում):

ՍԻՍԱԿ.— (Բարձրաձայն, հրճուանիքով) Վի՛վ լա  
ժիւսքի՛ս: Ես շահեցայ, Շահնազարօվ, տո՛ւր վե-  
րարկութ. (Շահնազարօվի ձեռքից վերարկուն առ-  
նելով) Հո՛ս սպասեցէք, մէկ ժամէն կը դառնամ:

ՍԻՍԱՔ.— Սպասէ՛, նամակին խնդիրը չկար-  
գադրուեցաւ:

ՍԻՍԱԿ.— Ի՞նչ նամակի . . . : Հա՛, յիշեցի:  
Թուղթ եւ գրիչը ա՛ռ եւ գրէ՛, ատկէ դիւրին ի՞նչ  
կայ: Հասցէներ—ուղածիդ չափ:

ՍԻՍԱՔ.— Բայց ի՞նչով գրեմ, ձեւը չեմ գի-  
տեր, կեանքիս մէջ ատանկ նամակ ուեւէ մէկու գրած  
չեմ:

ՍԻՍԱԿ.— Վա՛յ, քառակուսի: Հօրդ նամակ գը-  
րած չե՞ս դրամ ուղելու: Ճիշտ նոյն ձեւով: Քանի  
մը բառ փոխէ, քանի մը բառ աւելցուր կամ պակ-  
սեցուր—եղաւ, գնաց:

ՍԻՍԱՔ.— Բայց . . . կը դժուարանամ կոր:

ՍԻՍԱԿ.— Ո՛ւֆ . . . կը ջղանանամ: Ժամանակ  
չունիմ երկար բարակ խաղալու: Առ' այս թուղթը

Եւ դրէ տյսպէս. — «Վսեմաշուք տէր. — Ծանօթ ըլ-լալով ձեր տիեզերահռչակ հայրենասիրութեան եւ հայրենանուէր վսեմ զգացմանց՝ կը համարձակիմ համեստորէն ձեղ դիմելու, աղաչելով ձեր բարձր հովանաւորութեան արժանի ընել զիս, որպէսզի ես կարող ըլլամ տարիներէ ի վեր իմ փայփայած վսեմ իտէալներս իրազործել, ի շահ եւ ի պարձանս աղ-զիս Հայոց: Ես, Վսեմաշուք տէր, Փարիզի համալ-սարանին մէջ ուսանելով — կը գրես թէ ո՛ր մէկ ճիւ-ղին մէջ — վերջերս ահոելի աղէտի մը զոհ եղայ, զրկուելով այն դրամական նպաստէն, որով համեստ ծախսերս կը հողայի, — եւ ներկայիս բացարձակ յուսահատութեան մատնուած եմ: Եւ այժմ, Վսե-մաշուք տէր, պարկեշտորէն ձեղ կը դիմեմ, աղաչե-լով որպէսզի ձեր վեհանձն եւ աղնիւ ձեռքը կարկա-ռէք ինձ, օդնելու որպէսզի ձեր բարձր հովանաւո-րութեան ներքոյ ուսումն շարունակեմ, արժանանա-լու համար իմ սրբազան տենչերու իրազործման: Եւ այդ տենչանքներս, Վսեմաշուք տէր, ուրիշ բան չեն, քան ամբողջ էութեամբս նուիրուիլ մեր բազմաչար-չար աղզի — եթէ կուզես, եկեղեցին ալ աւելցուր—բարոյական եւ մտաւոր վերածնութեան նուիրական աշխատանքին»: — Հասկցա՞ր այժմ: Քիչ մըն ալ կ'երկարցնես, քանի մը փաղաքշող բառեր եւս, եւ լմնցաւ դնաց:

ՄԻՍԱՔ. — Իսկ հասցէ՞ . . . : Որո՞ւ դրեմ:

ՄԻՍԱԿ. — Ի՞նչ տանձգլուիս ես: Ահա քեզի հա-րիւրի չափ հասցէներ (Գրպանից մի քուլք հանելով) Կ'ընտրես մէկ-երկուքը, կամ հինգ, տասը: Բոլորին ալ կը գրես: Օրինակ, Բարթող Փաշա՝ Եղիսպոս, կամ Կարապետ Կիւլպէնկեան՝ Լոնտօն, կամ Փոլ Մովսէսեան՝ Ֆրէզնօ, Եւայլն, Եւայլն: Միայն թէ այս կարմիր խաչանիշը կըող հասցէներուն չգրես.

ասոնք կամ կասկածելի են, կամ չափէն աւելի կը թուած են:

**ԳԻՍԱԿ.** — (Զարմանվով) ի՞նչ վարպետորդի վարպետ ես, Սիսակ: Այսչափ հասցէներ ի՞նչով կրցեր ես հաւաքել:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — (Կատղած յարձակուելով, խում է Սիսակի ձեռքից քուղքը եւ կտոր-կտոր անում) Դուք ժուլիկութիւններ էք անում, որ ինտեմպէնտ եւ պրօդրեսիստ էլէմէնտներին չի սազում:

**ՍԻՍԱԿ.** — Ի՞նչ կ'ընես, ախաղա՛ր, իմ տունը կը քանդես:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Դուք վիրաւորում էք մեր կօլէդիական, ինչով նաեւ մեր նացիօնալիստական պրէստիժը եւ ավանտիւրիստական մախինացիաներով մեր մէջ դեմօրավիզացիա էք մտցնում: Զեր վարձունքը էտիքական կրիտիկային չի դիմանում, եւ վուլգար պալիատիվներով աշխատում էք ուղղել ձեր էկօնօմիան: Դա մօրավ դէմ է, դա մի արսուրդ է, դա մեր երիտասարդութեան դիստրուկցիա է:

**ՍԻՍԱԿ.** — Օ՛չ, պիտի խենթացնէ զիս...: Ես դիստրուկցիա-միստրուկցիա չեմ խաղցներ (Դուքս է վագում):

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — (Զայրոյթով) Դա ժուլիկութիւն է:

(Կարճ լոռութիւն)

**ՍԵՒԱԿ.** — Շահնազարօվը իրաւունք ունի: Պատւարեր գործ չէ այդ:

**ԳԻՍԱԿ.** — (Կմկմալով) Ես... եւս... համամիտ չէի Սիսակին...:

**ՄԻՍԱՔ.** — (Շփոքուած) Կարծեմ, լաւ կ'ըլլայ որ չդրեմ...:

(Կարճ լոռութիւն)

**ՍԵՒԱԿ.** — Ամերիկահայն փարա կը բռնէ՞, Միւսք:

**ՄԻՍԱՔ.** — Ես ի՞նչ գիտնամ:

**ՍԵՒԱԿ.** — Ամերիկան աշխարհի է՞ն հարուստ երկիրն է, եւ այնտեղին եկողներուն գրպանը տալէրները միշտ կը չխելչիան:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Առաւօտը մի Փլեղմատիք դէմքով երիտասարդ կար այստեղ: Նա՞ է Ամերիկայից եկողը:

**ՍԵՒԱԿ.** — Այո՛, ապուշի մէկն է: Եւ եկած է Փարիզ, նկարչութեան հետեւելու: Պարզ ներկարար մըն է:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Նա շատ օպտիմիստ էր երեւում Պարիզի մասին եւ երեւում է որ այստեղ դեռ ամեն բան օպերետային դեկորացիաների պլրիզմայով է տեսնում:

**ԳԻՍԱԿ.** — Ան ալ անօթի մէկը կ'երեւի: Վստահ եմ մուկերը կը սլարեն իր գրպանին մէջ:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — (Ականջը պատին մօտեցնելով) Այս սլատի ետեւից ինչ որ ձայներ են գալիս: Այս ի՞նչ մուզիկա է:

**ՍԵՒԱԿ.** — Կ'երեւի ամերիկահայն տուն դարձեր է:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Նա այստե՞ղ է ապրում, այս սենեակո՞ւմ:

**ԳԻՍԱԿ.** — Ի՞նչ սենեակ, ինչե՞ր կ'ըսես: Առակալի ծակ մըն է: **Շունը** մտնէ՞ սլոչը դուրսը կը մնայ:

## ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐԵՐԴ

**ՓԱՅԼԱԿ.** — (Ներս մտնելով լուացֆի խուռք տաւոր ձեռքը) Ներեցէք, հոս լուամ լաթերս: Սենեակս այնչափ մութ է, այնչափ մութ, որ օր ցերեկով մոմ

վառելու եմ, ինքզինքս տեսնելու համար։ Եւ այն-  
չափ փոքր է սենեակս, այնչափ փոքր, որ երբ քայլ  
մը կ'առնեմ՝ կամ մէկ պատին կը զարնուիմ, կամ  
միւս պատին։ (Սկսում է լուալ, սապոնը փրփրաց-  
նելով) :

(Կարճ լոռութիւն)

**ՍԵՒԱԿ.** — Աղէկ լուալ գիտե՞ս։

**ՓԱՅԼԱԿ.** — (Միամիտ) Բաւական լաւ։

**ՍԵՒԱԿ.** — Ամերիկայի դպրոցներուն մէջ լուա-  
ցարարութեան յատուկ դասընթացքներ կան, լսած  
եմ։

**ՓԱՅԼԱԿ.** — (Պարզօրէն) Աղջիկներու դպրոցնե-  
րուն մէջ ամեն բան կը սորվեցնեն, ինչ որ օդտակար  
է եւ անհրաժեշտ։

**ՍԵՒԱԿ.** — Ուրեմն դուն աղջիկներու վարժարա՞ն  
եւս գացած ես։

**ՓԱՅԼԱԿ.** — Ոչ, կը սխալիս, հայրենակից։ Ես  
միայն տղաներու վարժարանը գացած եմ, վերջը մի-  
այն երկսեռ դպրոց մը։ (Հպարտութեամբ) Իսկ լա-  
թեր լուալու արհեստը կեանքի դպրոցին մէջ սով-  
րած եմ։

**ՄԻՍԱՔ.** — Եւ հիանալիօրէն կը լուաս կոր։ Պար-  
զապէս կը սքանչանամ։

**ՓԱՅԼԱԿ.** — (Բարեկամական ժպիտով) Կը հաւ-  
նի՞ս։ (Սապոնը փրփրացնելով) Մարդս ամեն բան  
գիտնալու է ինքզինքը կառավարելու համար։

**ՍԵՒԱԿ.** — Եթէ շառիկս դուլպաներս եւ այլն  
հանեմ՝ կը լուա՞ս։

**ՓԱՅԼԱԿ.** — Դուն ինքդ ինչո՞ւ չես լուար։

**ԳԻՍԱԿ.** — Այդ սապո՞նն ալ Ամերիկայէն բերած  
ես։

**ՓԱՅԼԱԿ.** — Շուրու։

**ԳԻՍԱԿ.** — Շուրը քու քաղաքի անո՞ւնն է:

**ՓԱՅԼԱԿ.** — Շուրը անշուշտ ըսել է անգղերէնի մէջ. Փրանաերէն սիւր բառին աղաւաղումն է եւ անոր իմաստով կ'ըսուի:

**ՍԵՒԱԿ.** — Քեղի պէս քանի՞ եղբայր ունիս:

**ՓԱՅԼԱԿ.** — Մէկ հատ: Փրավիտէնս է:

**ՍԵՒԱԿ.** — Փրավիտէնս ի՞նչ բան է:

**ՓԱՅԼԱԿ.** — Քաղաք մըն-է, խոշո՞ր քաղաք մը:

**ՍԵՒԱԿ.** — Եղբայրու դպրոց կ'երթա՞յ:

**ՓԱՅԼԱԿ.** — Իրիկունները միայն կ'երթայ, իսկ ցերեկները տուշայնի գործ կ'ընէ:

**ԳԻՍԱԿ.** — Շուշանի՞ն կը գործէ: Այդ Շուշանը տիկի՞ն մըն է, թէ՞ օրիորդ:

**ՓԱՅԼԱԿ.** — (Ներողամիտ ժեւոով) Լսել կուղեմ թէ կօշիկ կը փայլեցնէ: Փրավիտէնսի մէջ եղբայրս շատ մեծ անուն հանած է իրր առաջին կարգի կօշիկ ներկող: Ամերիկացինները անոր անունը փրօֆեսօր ձէկ կոչած են:

**ԳԻՍԱԿ.** — Կ'ըսես թէ ցերեկը կօշիկ կը ներկէ, իսկ իրիկունները դպրո՞ց կ'երթայ:

**ՓԱՅԼԱԿ.** — (Հպարտութեամբ) Շո՞ւր: Բժիշկ պիտի դառնայ: Եւ կընամ սկիզբէն ըսել՝ առաջնակարգ բժիշկ մը:

**ՍԵՒԱԿ.** — Ի՞նչ ըսիր: Եղբայրու բժիշկ պիտի ըլլայ:

(Ամենիք ապօած Փայլակին են նայում)

**ՄԻՍԱՔ.** — Կօշիկ ներկողը բժիշկ կըլլայ ե-  
ղե՞ր...

**ՓԱՅԼԱԿ.** — (Նեղուած) Հապա ի՞նչ կարծեցիր:

**ՄԻՍԱՔ.** — (Հեգնական) Դուն ալ կը լուաս կոր...:

**ՓԱՅԼԱԿ.** — Ինչո՞ւ չլուաս: Խե՞նթ եմ, որ դը-

բամ ծախսեմ լուալու համար, երբ ինքս կընամ լլ-  
ւալ:

**ՍԵՒԱԿ.** — Ամերիկայէն թութիւն բերած չե՞ս:

**ՓԱՅԼԱԿ.** — Ո՞չ, հայրենակից: Ծխելու սովո-  
րութիւն չունիմ: Պատուելիները կ'արգիլէին:

**ՍԵՒԱԿ.** — Ի՞նչպէս թէ պատուելիներ: Եկեղեցի-  
ին մէջ կը ծխէիր:

**ՓԱՅԼԱԿ.** — Ի՞նչ կը խօսիս, հայրենակից: Դըպ-  
րոցին մէջ ըսել կուզեմ: Ես Սփրինկֆիլտի ինթըր-  
նէշընը Քալէճին մէջ կ'ուսանէի: Հասկցա՞ր: Քա-  
լէճին մէջ մէկ երկու անդամ ծխեցի, քիչ մնաց վար-  
ժուէի: Անդամ մըն ալ դպրոցին մէջ պատուելին վը-  
րայ հասաւ, սպառնաց վոնտել, եթէ վազ չանցնէի:  
Եւ այն օրէն դադրեցայ այդ սատանայի բուրվառը  
գործածելէ:

**ՍԵՒԱԿ.** — Դասի ատե՞ն կը ծխէիր:

**ՓԱՅԼԱԿ.** — Ո՞չ, դասարանը աւլելու ատեն:

**ՍԵՒԱԿ.** — (Ապօած) Ի՞նչպէս թէ դասարանը  
աւլելու ատեն:

**ՓԱՅԼԱԿ.** — (Միամիտ) Զե՞ս դիտեր: Ես դըպ-  
րոցին մէջ կ'աւլէի, կը մաքրէի, տղաքներուն անկո-  
ղինները կը շտկէի, դիշերային ամանները կը լուայի,  
եւ այդ ծառայութիւններուս փոխարէն ձրի ուսում  
կ'առնէի, ձրի սենեակ եւ ուտելիք: Աղուոր բան չէ՞:

**ՄԻՍԱԲ.** — Եւ վերջապէս նկարիչ եղար....:

**ՓԱՅԼԱԿ.** — (Նեղացած) Հապա ի՞նչ կարծեցիր:

(Ամենից ապօած Փայլակին են նայում)

**ՍԵՒԱԿ.** — Հայաստան եղած ատեն ի՞նչ գործով  
կը դրաղէիր:

**ՓԱՅԼԱԿ.** — Հօրս արհեստին հետեւեցայ երկու  
տարի: Վերջը Ամերիկա մեկնեցայ:

**ՍԵՒԱԿ.** — Հայրդ ի՞նչ արհեստ ունէր:

**ՓԱՅԼԱԿ.** — Աղուէս կը բռնէր Տերսիմի կողմերը  
եւ իր համեստ ապրուստը կը հոգար:

**ՍԵՒԱԿ.** — Ուրեմն դուն աղուէս բռնելու փոր-  
ձառութիւնն ա՞լ ունիս:

**ՓԱՅԼԱԿ.** — Շո՛ւր: Հապա կատա՞կ կ'ընես ինձ  
հետ:

**ԳԻՍԱԿ.** — Ամերիկայի մէջ տանձ շատ կա՞յ:

**ՓԱՅԼԱԿ.** — Ինչո՞ւ չէ: Շա՛տ: Բայց չեմ սի-  
րեր: Անգամ մը Ուստրին քովերը ազարակ մը գացի,  
ուր բարեկամիս մէկը փարա ունէր ինձ տալիք: Ինքը  
հոն հաւերուն կը նայէր: Ազարակին մէջ քանի մը  
տանձի ծառեր տեսայ: Այնքան տանձ կերայ, այն-  
քան կերայ, քիչ մնաց մեռնէի: Եւ այն օրէն այլեւս  
տանձ չեմ ուտեր:

**ԳԻՍԱԿ.** — Առնելիքիդ փոխարէն տա՞նձ կերար:  
Ուրեմն բարեկամդ փարաներդ չտուա՞ւ, երբ դուն  
այդչափ տանձ կերար:

**ՓԱՅԼԱԿ.** — Խե՞նթ ես: Այդ հաշի՞ւ եղաւ: Բա-  
րեկամս ի՞նչպէս կրնար փարաներս ուտել: Ո՞ւր  
կրնար ձեռքէս փախիլ:

**ԳԻՍԱԿ.** — Ուրեմն փարաներդ առի՞ր:

**ՓԱՅԼԱԿ.** — (Գոհունակ) Շո՛ւր: Անմիջապէս չէ,  
բայց երբ ուսումն աւարտեց եւ օֆիս մը բացաւ Նիւ  
Եօրքի մէջ՝ քանի մը ամիս վերջ ամբողջը վճարեց:

**ԳԻՍԱԿ.** — (Զարմանիքով) Ուսումը աւարտե՞ց:

**ՓԱՅԼԱԿ.** — ԶԵ՞ս հասկնար: Այդ բարեկամս  
այժմ յայտնի բժիշկ մըն է: Անոր պէս յեղափոխա-  
կան չկայ: Կը խօսի, կը խօսի անանկ աղուոր—  
պարզապէս կրակ ու բոց:

**ՄԻՍԱՔ.** — Հաւ պահողը բժիշկ կ'ըլլայ ե-  
ղեր . . . :

**ՓԱՅԼԱԿ.** — (Նեղացած) Հապա ի՞նչ կարծեցիր:

(Ամենիք ապօած Փայլակին են նայում)

**ՍԵՒԱԿ.** — Դուն յօդուած գրելու սովորութիւն  
ունի՞ս:

**ՓԱՅԼԱԿ.** — Ինչո՞ւ չէ: Առաջ կը դրէի, երբ  
ամօղիս Պօսթոնի մէջ խմբագրութիւն կ'ընէր: Անոր  
պէս հմուտ քաղաքագէտ Հայ ժողովուրդին մէջ բը-  
նաւ ծնուած չէ: Աշխարհը կը դողար, երբ ան դը-  
րիչը ձեռքն առնէր:

**ՍԵՒԱԿ.** — Ո՞ւր առած էր իր կրթութիւնը, ի՞նչ  
ճիւղի հետեւած էր:

**ՓԱՅԼԱԿ.** — Առաջ Խարբերդի մէջ տէլէքութեան  
ճիւղին հետեւեցաւ: Երբ Ամերիկա եկաւ երեք տարի  
խմբագիր եղաւ, վերջը համալսարան մտաւ եւ ա-  
ւարտեց փաստաբանութեան ճիւղը:

(Ամերիկա ապօած Փայլակին են նայում)

**ՄԻՍԱՔ.** — Բաղնիքին տէլէքը խմբագիր եւ  
փաստաբան կ'ըլլայ եղեր....:

**ՓԱՅԼԱԿ.** — (Նեղուած) Հապա ի՞նչ կարծեցիր:  
Կը տեսնեմ, հայրենակից, դուն Ամերիկայի մասին  
ոեւէ դաղափար չունիս: Հոն ինքնօդնութիւնը ըս-  
կըզրունք մըն է: Կը հասկնա՞ս:

**ՍԵՒԱԿ.** — Օտարոտի բանը այն է, որ ամօղիդ  
նախ երեք տարի խմբագիր եղած է, ուրիշ խօսքով  
ժողովուրդը կրթելու պաշտօնը վարած է, եւ վերջը  
միայն յիշած է թէ ինքն ալ բան մը սովորելու պէտք  
ունի, եւ ապա մտած է համալսարան:

**ՓԱՅԼԱԿ.** — Ատկէ ի՞նչ վնաս: Գրելը նոյնպէս  
արհեստ մըն է դերձակութեան կամ կօշկակարու-  
թեան պէս: Վարժութիւն պէտք է: Պէտք է գրես,  
որ գրիչը վարժուի: Ամերիկահայ խմբագիրներուն  
գրեթէ մեծ մասը նախ խմբագրութիւն կ'ընեն, ապա  
դալրոց կը մտնեն: Ես ատոր մէջ ոեւէ անպատեհու-  
թիւն չեմ տեսներ:

**ՍԵՒԱԿ.** — (Հեգիանիվ) Պատճառը այն է, որ  
ամերիկահայերդ ոչ թէ լրագրութիւն կը պահէք,  
այլ լրագրական մանկապարտէղ, ուր խմբագիրները  
իրենք գրչի մանկական մարզանքներով կը դրադին:  
Այդ է պատճառը որ Ամերիկան հայ ապուշ թերթե-  
րու աւանդական հայրենիքը կը մնայ:

**ՓԱՅԼԱԿ.** — Կը սխալիս: Հայութեան ամենամեծ  
մտաւորական ոյժը հոն է ներկայիս: Կուզե՞ս մէկ-  
մէկ անունները տամ:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — (Ծանր եղանակով) Ասացէ՛ք,  
խնդրեմ, սլարոն, Ամերիկայի պրօլետարական մաս-  
սաները ի՞նչ վիճակի մէջ են:

**ՄԻՍԱՔ.** — (Գիսակի ականջին) Զաւեշոը հիմայ  
պիտի սկսի: Լուրջ ձեւանանք:

**ՓԱՅԼԱԿ.** — (Բերանը քաց Շահնազարօվին նայե-  
լով) Շա՛տ աղէկ են...: Երբ հոս պիտի գայի՛  
խնդրեցին որ իրենց բարեւները յայտնեմ քեզ:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Հասկանում եմ ձեզ: Ուզում  
էք ասել որ Ամերիկայի պրօլետարները իրենց բա-  
րեւները զրկած են իրենց եղբայր Եւրօպայի պրօ-  
լետարներին: Շնորհակալ եմ: Ամերիկայում մանու-  
ֆակտուրայի խնդուստրիան սլրօդրեսիլ Փաղիսի մէջ  
է եւ այդ սլատճառով համաշխարհային էկոնոմիա-  
կան էվոլյուցիայի մէջ Ամերիկայի պրօլատարիատը—  
շատ մեծ դեր է կատարելու:

**ՓԱՅԼԱԿ.** — (Ապուտ-ապուտ նայելով: Մեքենա-  
բար) Շո՛ւր...:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Դուք ի՞նչ կարծիք ունէք  
սօցիալիստական պրօլատանդայի ակտիով Փակտոր-  
ների մասին Ամերիկայում:

**ՓԱՅԼԱԿ.** — ...Աղէ՛կ կարծիք...:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Ի՞նչ սիտուացիայի մէջ է Ա-  
մերիկայում հայ կնոջ էմանսիպացիան:

**ՓԱՅԼԱԿ.** — (Խեղճ Եղանակով) կ'աղաչեմ, ոտքը  
պազնեմ, քիչ մը աշխարհաբար խօսէ, որ ես ալ բան  
մը հասկնամ եւ ատոր համեմատ պատասխանեմ:

**ԴԻՍԱԿ.** — կ'ուզէ հասկնալ թէ հայ կնոջ ազա-  
տագրական շարժումը Ամերիկայի մէջ ի՞նչ կը ներ-  
կայացնէ, կամ ո՞րչափ զարդացած են հայ կիները  
Հոն:

**ՓԱՅԼԱԿ.** — Հէլպէթոէ զարդացած են: Ամուս-  
նացած կիները լէմօն կը քամեն իրենց էրիկներուն  
վրայ, կամ կոտոշ կը դնեն անոնց գլխուն, իսկ  
վա՛յն եկեր է այն հայ տղային գլխուն, որ փորձէ  
հայ աղջկայ մը սիրահարիլ: Կամ պիտի խենթնայ,  
կամ թռքախտ պիտի իյնայ:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Ներեցէ՛ք, ուրիշ անգամ հա-  
յերի մասին հարցումներ կ'անեմ: Այժմ ուզում եմ  
այնտեղի ընդհանուր ատմօսֆերան հասկանալ: Ամե-  
րիկայում այժմ իմալերիալիստական տենդէնցիաներ  
շատ կան: Այնտեղ էլ դիպլոմատիան բուրժուա-  
կումօպօլիտական իդէաներով է կառավարում, եւ  
Զինաստանում եւ Եազօնիայում աղբեսիվ պօլիտի-  
կային է հետեւում:

**ՓԱՅԼԱԿ.** — . . . Շո՛ւր, հապա ի՞նչ ապուր պիտի  
ուտէ . . . :

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Ասացէ՛ք, խնդրեմ պարոն,  
ի՞նչ կարծիք ունեն Ամերիկայի դիպլոմատիական  
սֆէրաներում դեղին վտանգի մասին:

**ՓԱՅԼԱԿ.** — Դեղին տենդը կ'ըսեն թէ Փանամայի  
կողմերը շատ տարածուած է բայց անոր թունաւոր  
մըսքիթօները, կամ ինչպէս քղեցիները կ'ըսեն մօս-  
քիթոսները մինչեւ Պութոն չեն հասներ:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Բոլորովին չեմ հասկանում թէ  
ինչեր էք ասում:

**ՓԱՅԼԱԿ.** — Իսկ քու խօսածներէն ես բան մը կը հասկնա՞մ որ . . . :

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Ուզում եմ ասել, էլի՛, որ Ամերիկայի դիտակամատիան ներկայումս դռները փակում է դեղին վտանգի առջեւ օրինակ Կալիֆորնիայում:

**ՓԱՅԼԱԿ.** — Այդ բանը ամեն տեղ ալ կ'ընեն: Մըսքիթօներու համար ոչ թէ գոները միայն, այլ եւ պատուհաններ ալ կը դոցեն, «սբրին»ներ գործածելով:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Ներեցէք, խնդրեմ: Դուք երկու բառ գործածեցիք, որոնց խմաստը չեմ հասկանում: Մէկը . . . մըսքի . . . մոցի . . . եւ միւսը . . . միշտ հիմայ . . . :

**ՓԱՅԼԱԿ.** — (Ներողամտութեամբ) Մըսքիթօ ըսուածը մժեղ ըսել է հայերէն: Այդ մժեղները տուն չթողնելու համար տեսակ մը երկաթէ թելէն մաղեր կը շինեն, դուռներուն եւ պատուհաններուն վրայ, որոնք «սբրին» կը կոչուին: Հասկըցա՞ր, հայրենակից:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Կատարելապէս հասկանում եմ ձեզ: Դա մի չօվինիստական տերմին է, որով ամերիկացիները իրենց արհամարհանքը արտայայտում են դեղին ցեղերի հանդէս, նրանց մժեղներին նմանեցնելով: Ռուսներն էլ խոհանոցի կարմիր ճանձերին պրուսակ են կոչում, որ նշանակում է պրուսիացի, այսինքն գերմանացի, ինչպէս նաեւ մահմեղականներ քրիստոնեաններին գեավուր են անուանում: Այդպիսի վիրաւորական էլիտեթները առաջանում են նացիոնալիստական նեղ ինստիկտներից: Բայց երբ ցիվիլիզացիան եւ կուլտուրան ամեն կողմ տարածուեն, եւ աշխարհի բոլոր ազգերը ձուլուեն կօսմօպօլիտական մի մեծ ֆամիլիայի մէջ՝ այն ժամանակ այդ տեսակ

ամօթալի ինստիկտներն էլ իրենք իրենց կ'անհետանան:

**ՓԱՅԼԱԿ.** — (Վիզը քերելով) Շուրպ...:

**ՄԻՍԱՔ.** — (Գիսակի ականջին) Իբր թէ զիրարհասկան...:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Շատ շնորհակալ եմ ձեր լուրջ պատասխանների համար, որոնց ալօղիտիվ խարակտերիսիկան ինձ շատ հաճելի է երեւում: Այժմ, ներեցէ՞ք, ուզում եմ սենեակս զնալ եւ մէկ ժամ աշխատել, որովհետեւ մի դիսերտացիա եմ սլատրաստում, որ ուրբաթ երեկոյին պիտի կարդամ ոռու պրօդրեսիստների կօնֆերենցիայում: Իսկ առայժմ, ցը' · (Հեռանում է):

**ՓԱՅԼԱԿ.** — (Ցատկելով). Ախարշ'ր, գուք հայ քրիստոնեայ չէ՞ք: Մեռոն չկա՞յ քսուած ձեր ճակտին:

**ՄԻՍԱՔ.** — Ինչո՞ւ, ի՞նչ սլատահեցաւ որ:

**ՓԱՅԼԱԿ.** — Ի՞նչպէս թէ ինչո՞ւ: Չէ՞ք կրնարկառք բերել եւ հիւանդանոց դրկել զինք: Կը տեսնէք ու ուղեղը կը շարժի: Եթէ յանկարծ կատղի՝ ալ ո՞վ կրնայ իր ձեռքէն ազատիլ:

**ՄԻՍԱՔ.** — Կը սխալիս: Մեր դավարիչ Շահնազարօվը երբ'էք խենթ չէ, եւ նպատակ ալ չունի խենթնալու: Ատկէ զատ ամենէն բարի եւ անլինաս մէկն է, որ երբեք տեսած ես:

**ՓԱՅԼԱԿ.** — Իրա՞ւ կ'ըսես: Օլուա՛յթ: Բայց, ախարշ'ր, անանկ բաներ կ'ըսէր, անանկ բաներ, կարծես մէկը քիւրտի տավուլ կը զարնէր խափայիս վրայ:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — (Վերադառնալով դրան մօտ) Քիչ մնաց սանդուխից ցաջ իջնէի, երբ յիշեցի, որ բուլվար Սէն Միշելից այն կողմը, սօցիալիստների

կլուրում այսօր մի շատ կարեւոր կօնֆերենցիա կայ, որին ուղում եմ որ ամենքդ ներկայ լինէք: Պիտի քննուի այն թէղը, թէ ինդուստրիայի ցենտրալիզացիան կառավարութեան ձեռքում աւելի օդուակա՞ր է թէ տեղական համայնքների կօնտրովի տակ: Դա ապագային վերաբերող մի շատ լուրջ պրօբլէմ է: Կօնֆերենցիան սկսում է ժամի ճշտ երեքին եւ ես ձեղ այնտեղ կը հանդիսեմ: Անպատճառ եկէ'ք: Ցը': (Հեռանում է):

**ԳԻՍԱԿ.** — (Զայրացած դառնալով սենեակի մէջ) Ինչո՞ւ չէ: Անպատճառ այդ գօնֆերենցիային ներկայ կ'ըլլամ: Տարակոյս չկայ որ անօթի փորս պիտի լեցուի այդ ապագայի փրօպլէմներով: (Կատղած) Հոս խերերնիս կ'անիծուի, ամբողջ օրը հաղորդութեան չափ սլատառ մը հաց բերանս մտած չէ, եւ ելնեմ պարապ ստամոքսով մղոններ վաղեմ, զանազան ցնդաբանութիւններ լսելու:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — (Կրկին ներս մտնելով) Սանդուխից նոր էի սկսել իջնել, երբ յանկարծ յիշեցի, որ Ալրօրա դալում, Տրոկադերօյի ետեւ, մի ուրիշ շատ հետաքրքրական կօնֆերենցիա էլ կայ: Պիտի քննութեան Ենթարկուեն ներկայ դիալոգատիայի տենդենցիաները: Այսինքն, պարզ բառերով ասեմ, բուրժուականիտալիստական իմալերիալիզմի ֆակտորները անալիզին պիտի ենթարկուեն: Զավազանց հետաքրքրական է: Երբ մէկ ժողովը վերջանայ՝ միւսին էլ կը դնանք: Ցը': (Հեռանում է):

**ԳԻՍԱԿ.** — (Մոլեգնած) Անպատճառ հոն ալ կ'երթամ: Հարսանեկան օրերս են. միմիայն գօնֆերենցիաներ... միմիայն փրօպլէմներ...: Պիտի խենթնամ: Միսա'ք, այդ ջուրի վիշ ինձի տո'ւր: Պարզապէս կը խեղդուիմ...:

**ՄԻՍԱՔ.** — (Շիշը տալով) **ԱՌ:** **Միակ մատչելի**  
**ճիշխարանք սղաւոր աղիքներուդ համար:**

**ՓԱՅԼԱԿ.** — (Դուռը բանալով) **Աւելի աղէկ կ'ըլ-**  
**լայ դուռը բաց թողունք, որովհետեւ այդ խենթը**  
**նորէն սղիտի դայ: Վա՛յ, սղապօ՛, վա՛յ: Ասանկ ալ**  
**անթիկա՞ կ'ըլլայ եղեր:**

**ՍԵԽԱԿ.** — **Տեսակ մը թմրութիւն կուզայ վրաս:**  
**Գիսա՛կ, ո՞րչափ դրամ կայ քովդ: Երկու գաւաթ**  
**սուրճին կը բաւէ՞:**

**ԳԻՍԱԿ.** — **Վրա՞ս կը խնդաս, ապո՛ւշ:**

### ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ՇԱՀՆԱԶԱՐՕՎ, ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ, ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — (Դրան մօտ) **Սանդուխից բա-**  
**ւական ցած էի իջել, երբ տեսայ որ միւս կողմից**  
**բարձրանում էր Օր. Վարդենիկ այս տիկնոջ հետ:**  
(Ներս մտնելով) **Անշուշտ, դուք ճանաչում էք, Պա-**  
**րիզի ինտելիգէնտ հայ օրիորդներից է:**

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — (Տիկ. Արփենիկի հետ, դը-  
րան մօտ) **Կրնա՞նք ներս մտնել: Արքեօք ձեզ չպիտի՞**  
**խանդարենք:**

**ՄԻՍԱՔ.** — (Ցատկելով) **Ամենեւին: Հրամեցէ՛ք**  
**ներս. ՕՐ. Վարդենիկ: Խնդրեմ:**

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ** (Ներս մտնելով Տիկ. Արփենիկի  
հետ) **Այդ դո՞ւք էք, Մուսիօ Միսաք: Եւ դուք ե՞ւս,**  
**Մուսիօ Գիսակ: Դուք ե՞ւս, Մուսիօ Մեւակ: Ի՞նչ**  
**հիանալի հաւաքոյթ. (Բոլորի ձեռքը սեղմելով,**  
**մատնանում է Փայլակին) Միայն այս երիտասարդը**  
**նոր դէմք մը կը թուի ինձի:**

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — **Խնդրում եմ ծանօթացէք:**  
(Փայլակին) **Սա ՕՐ. Վարդենիկ է, Պարիզի հայ**  
**ինտելիգէնտ կօլօնիայից մի շատ համակրելի տիպ,**

Եւ (Օր. Վարդենիկին) սա էլ Ամերիկայից եկած մի հայ ուսանող է, որ անունը թէեւ չգիտեմ, բայց շափազանց ըէալ եւ պօզիտիվ մի տիպ է երեւում:

ՕՐ.— ՎԱՐԴԵՆԻԿ.— Ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալնուս համար:

ՓԱՅԼԱԿ.— (Մէկ ոտքով լուացքի տառար ետքելով, տփոքուած, մեղաւոր դէմֆով) Ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալնուս համար:

ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.— (Բոլորին) Դուք կարծեմ ծանօթ չէք բարեկամուհիս հետ: Նոր դէմք մըն է Փարիզահայ գաղութին մէջ, հազիւ երկու ամիս կ'ըլլայ որ Պօլսէն հոս վորխաղըռուած է: Եւ հպարտութեամբ կը շեշտեմ, մեր նորակազմ Տիկնանց Բարեսիրաց Միութեան ամենէն գործունեայ անդամուհին է: Խնդրեմ ծանօթացէք:

ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.— Հա', հա', հա'...: Վարդենիկ, դուն կ'ուզես ըսել թէ ձեր մէջ ամենէն շատ ե՞ս զբաղուած եմ բարեսիրութիւններով: Հա', հա', հա'...:

ՕՐ. ՎԱԱԴԵՆԻԿ.— Անշուշտ: Եւ համոզուած եմ որ բնաւ սխալուած չեմ: Խնդրեմ ծանօթացէք: Մուսիօ Միսաք...:

ՄԻՍԱՔ.— (Տիկ. Արփենիկի ձեռքը սեղմելով) Ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալնուս համար:

ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.— Ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալնուս համար:

ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.— Խնդրեմ ծանօթացէք: Մուսիօ Մեւակ...:

ՄԵՒԱԿ.— (Տիկ. Արփենիկի ձեռքը սեղմելով) Ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալնուս համար:

ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.— Ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալնուս համար:

*ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.—ՄՈՒՍԻԹ ԳԻՍԱԿ...*

*ԴԻՍԱԿ.—(Տիկին Արփենիկի ձեռքը սեղմելով)*  
Ուրախ եմ ձեղ հետ ծանօթանալնուս համար:

*ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.—Ուրախ եմ ձեղ հետ ծանօթանալնուս համար:*

*ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.—ԱՅԵՐԻԿԱՀՆ ԵԿԱԾ ՄՈՒՍԻԹ...*

*ՄԻՍԱՔ.—ՄՈՒՍԻԹ ՓԱՋԼԱԿ:*

*ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.—ՄՈՒՍԻԹ ՓԱՋԼԱԿ...*

*ՓԱՅԼԱԿ.—(Տիկ. Արփենիկի ձեռքը սեղմելով)*  
Կը ներէք... սանկ... տնային երեւոյթով... (լը-  
ւացքի տաշտը մէկ ոտքով ետ գտնով) Ուրախ եմ ձեղ  
հետ ծանօթանալնուս համար:

*ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.—Բան մը չէ...: Ուրախ եմ  
ձեղ հետ ծանօթանալնուս համար:*

*ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.—Ես էլ եմ ուրախ, երբ ամէնքդ  
ուրախ էք միմեանց հետ ծանօթանալով:*

*ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.—Օ՛Հ, ի՞նչքան սրախօս էք,  
Պարոն Շահնազարօվ: Հա՛, հա՛, հա՛...*

*ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.—Հա՛, հա՛, հա՛...: Պարզա-  
պէս կը ճաթիմ կոր...: Հա՛, հա՛, հա՛...: Իրաւ  
որ զուարճալի է:*

*ԲՈԼՈՐԸ.—Հա՛, հա՛, հա՛...*

*ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.—Եւ ի՞նչ օտարոտի անակնկալ  
մը եղաւ, երբ յանկարծ ձեղ հանդիպեցայ, ՄՈՒՍԻԹ  
Շահնազարօվ: Վաղուց է ձեղ տեսած չէի...:*

*ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.—Ինձ համար էլ մի կօլօսալ  
սիւրպրիզ էր ձեղ տեսնել որ սանդուխից բարձրանում  
էիք, երբ ես ներքեւ էի զնում: Եւ զարմանքից քիչ  
մնաց որ բոլորովին ցած գլորուէի, որով մի զարհու-  
րելի կատաստրօֆ պիտի պատահէր:*

*ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.—Հա՛, հա՛, հա՛...: Նոյն*

իսկ վախցայ, երբ յանկարծ ձեղ տեսայ, Մուսիօ  
Շահնազարօվ: Անանկ չէ<sup>o</sup>, Արփենիկ:

Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.— Հա՛, Հա՛, Հա՛...: Պարզա-  
պէս կը ճաթիմ կոր...: Իրա՛ւ որ ես ալ վախցայ,  
Երբ էֆէնտիին ոտքը սահեցաւ սանդուխին աստիճա-  
նին վրայ:

ՄԻՍԱՔ.— (Գիսակին, ցած) Աղէկ եղաւ: Շահ-  
նազարօվ էֆէնտի...:

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.— Դա մի հասարակ էպիզօդ էր,  
բայց սոսկալի վտանգաւոր:

Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.— Ցաւալի է սակայն որ Միսակ  
էֆէնտին հոս չէ: Այժմ ի՞նչ ընելու ենք, Վարդե-  
նիկ:

ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.— Անշուշտ մեր այս երիտա-  
սարդ բարեկամներէն մէկն ու մէկը դիտնալու է Տիկ.  
Թագւորեանի հասցէն:

ՄԻՍԱՔ.— Տիկին թագւորեանի հասցէն յուշա-  
տետրիս մէջ ունիմ, սակայն դժբախտաբար սենեակս  
մոռցած եմ:

ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.— Հիանալի: Խնդրեմ, Մուսիօ  
Միսաք, բարեկամուհիս առաջնորդեցէք մինչեւ Տիկ.  
Թագւորեանի բնակավայրը, եթէ, անշուշտ, զբաղ-  
ուած չէք: Կարծեմ ձեր սենեակը այստեղէն հեռու  
չէ: Բարեկամուհիս Պօլսէն նոր միայն եկած ըլլալով՝  
անծանօթ է Փարիզի վողոցներուն, իսկ ես ալ չեմ  
կրնար իրեն ուղեկցել, որովհետեւ յարաբերութիւն-  
ներս խղած եմ Տիկ. Թագւորեանին հետ:

ՄԻՍԱՔ.— Հաճոյքով սիստի ստանձնէի այդ  
պաշտօնը, սակայն, դժբախտաբար ես ալ յարաբե-  
րութիւններս խղած եմ Տիկը Թագւորեանին հետ, եւ  
կը խուսափիմ իրեն հանդիպելէ:

ՄԵՒԱԿ.— Ես յանձն կ'առնեմ տիկինը առաջնոր-

դելու, որովհետեւ յարաբերութիւններս Տիկ. Թագւորեանի հետ աւելի քան աղէկ են, իսկ Տիար Թագւորեան մինչեւ այսօր թշնամական տրամադրութիւններ ցցուցած չէ իմ դէմ: Սակայն իրենց նոր բնակարանին ուր ըլլալը չեմ գիտեր:

(Փայլակ կամաց-կամաց լուացքի տաւոր ոչքով ետ քելով դէպի դուռը՝ դուրս է սկլտում):

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.**— Ուրեմն, եղաւ: Դուք, Մուսիօ Սեւակ, Տիկ. Արփենիկի եւ Մուսիօ Միսակի հետ կ'երթաք մինչեւ Մուսիօ Միսաքին սենեակը, իրմէ կ'առնէք Տիկ. Թագւորեանի հասցէն եւ Տիկ. Արփենիկը հոն կ'առաջնորդէք: Իսկ ես հոս կը մնամ մինչեւ որ վերադառնաք եւ գործերս կը կարգադրեմ: Վստահ եմ Մուսիօ Գիսակ եւ Մուսիօ Շահնազարօվ սլիտի օգնեն:

**ՄԻՍԱՔ.**— (Գիսակին, աչքով մատնանելով Տիկ. Արփենիկի կողմը, ցած) Աղուոր կտոր է...:

**ԳԻՍԱԿ.**— (Ցած) Փափուկ բան մը: Եւ մանաւանդ—որբեւայրի:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— Երեւում է որ մի լուրջ միսսիայով եկած էք:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.**— Անշուշտ, լուրջ: Լսած չէ՞ք որ մեր նորակազմ Տիկնանց Բարեսիրաց Միութիւնը կը պատրաստուի հոյակապ պարահանդէս մը սարքելու: Տոմսակներ եւ յայտագրեր կը ցըռւենք արդէն: Կը խնդրեմ քանի մը հասցէներ գրելու ինձ հետ, որոնք ձեզ յայտնի են:

**ՄԻՍԱՔ.**— (Գիսակին, ցած) Պարահանդէս...: Ամեն բան կատարեալ է...: Կը մնար որ պարէինք...:

**ԳԻՍԱԿ.**— (Ցած) -Աղիքներս պարապութենէն արդէն կը պարեն կոր...:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — (Մի փոքրիկ ծրաբ յանձնելով) Արփենիկ, այս յայտադրերն ու տոմսերը կը յանձնես Տիկին Թագւորեանին։ Կարծեմ կը բաւէ սաշամիը։

**ՏԻԿ.** ԱՐՓԵՆԻԿ. — Ես պատրաստ եմ։ Կրնանք երթալ։ Ուրեմն, Վարդենիկ, դուն կը սպասես մինչեւ դառնամ։ Իսկ եթէ ուշանամ՝ պիտի հասկնաս որ չպիտի դամ հոս, եւ իրիկունը քեզ կը հանդիպեմ մեր տունը։

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Եթէ մինչեւ իրիկուան հինգը չգաս՝ դուն ինքդ ուղղակի մեր տունը եկուր։

**ՏԻԿ.** ԱՐՓԵՆԻԿ. — Շատ աղէկ, թող ատանկ ըլլայ։ Ուրեմն, կրնանք երթալ։

**ՄԻՍԱՔ.** (Աջ ձեռքի բքամատն ու ցուցամատը — իրար տփելով) Կ'ըսեն թէ կը բռնէ կոր։ Յիսուն հաղար Փրանքէն աւելի։

**ԳԻՍԱԿ.** — Իրա՞ւ։ Մատնիները նայէ՛։

**ՄԻՍԱՔ.** — Ես պատրաստ եմ։ Դուրսը կարծեմ շատ ցուրտ չէ . . . եւ դիտմամբ վերարկուս հաղած չեմ։

**ՄԵՒԱԿ.** — Ես ես, պատրաստ եմ։

**ԳԻՍԱԿ.** — Ես եւս ստիպողաբար փողոցը պիտի իջնեմ։ Կը ներէք, ՕՐ. Արփենիկ, կէս ժամէն կը դառնամ, սպատրաստ ձեզ օգնելու հասցէներ դրելու համար։

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Չը մոռնանք որ այս իրիկուն մի կօնֆերենցիա կայ սլրօգրէսիստների կլուբում ինդուստրիայի ցենտրալիզացիայի մասին եւ մի ուրիշ էլ ներկայ դիպլոմատիայի տենդենցիաների մասին Ամրօրա զալում։

**ՏԻԿ.** ԱՐՓԵՆԻԿ. — Հա՛, հա՛, հա՛ . . . պարզա-

պէս կը ճաթիմ կոր . . . : Հա՛ , Հա՛ , Հա՛ . . . : (Բոլորը դուրս են գնում քացի Օր. Վարդենիկից եւ Շահնազարօվից) :

### ՊԱՏԿԵՐ ԵՕԹԵՐԵՐԴ

ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.— ՄԵՆՔ , ԼԱՐՃԵՅ , ԿՐՆԱՆՔ անմիջապէս գործի սկսիլ (Շուրջը նայելով) բայց մենք բոլորովին մինակ մնացինք . . . (հառաչելով) Ա՛Հ . . . (նստում է) :

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.— (Շուրջը նայելով) Այո՛ , ես էլ եմ զղում , որ բոլորովին մենակ մնացինք . . . : Եւ կարծես թէ աչքերս մթնում են մի ինչ որ Փանտաստիքական միրաժներից (Հառաչում է) եւ . . . եւ . . . :

ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.— Ա՛Հ . . . :

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.— Ա՛Հ . . . :

(Կարճ լոռութիւն)

ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.— Դուք շատ կը խորհիք . . . :

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.— Այո՛ , չափազանց շատ եմ մըտածում :

ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.— Կրնա՞մ զիտնալ թէ ի՞նչ բանի մասին . . . — Եթէ , անշուշտ , գաղտնիք մը չէ :

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.— Ո՛չ , գաղտնիք չէ : Ես մտածում եմ Ռուս բանաստեղծ Պուշկինի խօսքերի մասին : Նա ասել է այսպէս . . . «Իսկ երջանկութիւնը այնքան մօտ էր , այնքան հնարաւոր» :

ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.— Իրա՞ւ նա ասանկ բան մը ըսած է :

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.— Այո՛ , ասել է իր «Եվդենիյ Օնեղին» Պօէմայում :

(Կարճ լոռութիւն)

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Դուք... ինձմէ... նեղուած  
կ'երեւիք...:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Այո', մի քիչ նեղուած եմ,  
որչափ ներելի է մի իդէալից նեղուել: (Հառաջանիք)  
Նեղուած եմ, որովհետեւ երեք ամիս է որ սպասում  
եմ թէ դուք իմ նամակին պիտի պատասխանէք, եւ  
չէք պատասխանում: Իմ բոլոր ամբիցիաներս կարծես  
խորտակուած են:

(Դրան ետեւ երեւում է Փայլակ, լրտեսելով եւ  
ծիծաղից քուլնալով):

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Ա՛չ, ատոր համա՞ր միայն:  
Ես, շիտակը, տարբեր բաներ խորհեցայ: Դուք,  
Մուսիօ Շահնազարօվ պիտի յիշէք, որ ձեզ յայտ-  
նեցի թէ երբ ձեր նամակին ընթերցումն աւարտեմ՝  
անմիջապէս կը պատասխանեմ: Եւ ուրախ եմ ըսելու,  
որ ձեր ութսուն եւ հինգ էջ նամակէն երեք ամսուան  
մէջ երեսունը չորս էջ յաջողութեամբ կրցած եմ կար-  
դալ, անշուշտ, շարունակ բառարաններու օդնու-  
թեան ապաւինելով:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — (Գոհունակ) Հասկանում եմ  
ձեզ: Դուք ուրեմն կարդացել էք նամակիս առաջին  
մասը, որի մէջ անալիզին ենթարկել եմ կեանքի ընդ-  
հանուր պրօրլէմները: Այնուհետեւ գալիս է երկրորդ  
մասը, որ մի էտիւդ է սիրոյ Փիզիոլոգիական ֆակ-  
տորների մասին: Երրորդ մասում շօշափել եմ շատ  
թեթեւ կերպով էկօնօմիական պրօրլէմները սիրոյ  
մէջ, որոնք օդտակար է սկզբից գիտնալ: Ամէնից  
վերջը, նամակիս չորրորդ մասում սիրոյ պօէզիան  
նկարագրել եմ, շատ գեղեցիկ կերպով:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Իրա՞ւ կ'ըսէք: Ա՛խ, երանի  
նիւթերու ցանկն ալ ձեր նամակին սկիզբը դնէիք:  
Այդ պարագային ես ուղղակի երրորդ մասէն կրնայի

սկսել, այսուհետեւ կը կարդայի չորրորդ մասը եւ  
վերջը միւսները:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — (Շատ զնի երեւոյթով) Ես ձեր  
խօսքերից դուշակում եմ որ դուք համակրում էք ինձ,  
եւ հասկացել էք որ դուք իմ սիմպատիա էք:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Ես... ես... անշուշտ կը  
համակրիմ ձեզ...: Սակայն, գիտէք, կ'ուղեմ ձեր  
նամակը նախապէս կարդալ ամբողջութեամբ եւ խոր-  
հիւ քիչ մը...: (Ոտքի ելնելով) Ա՛չ, այնքան կը  
յուզուիմ ատանկ բաներէն...: Սակայն... այնքան  
ծարաւ եմ...: Պարզապէս շուրթերս կը չորնան...:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Ուզում էք ասել թէ ձեր կեռ-  
ասի պէս շրթունքները ծարաւ են սիրոյ համար, ո-  
րովհետեւ գիտէք որ ես էլ ծարաւ եմ ձեր շրթունք-  
ների համար (Աւխատելով գրկել) Ախր, ես զժում  
եմ ձեզ համար...:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — (Խուսափելով) Ո՛չ, ո՛չ...  
խնդրեմ, Մուսիօ Շահնազարօվ, տակաւին ատենը  
չէ... մանաւանդ հոս ուրիշին տանը մէջ...: Գի-  
տէք, այնքան կը յուզուիմ, այնքան կը յուզուիմ  
ատանկ բաներէն... մանաւանդ որ շատ ալ փորձը-  
ւած չեմ... եւ կը վախնամ...: Ո՛չ, ո՛չ, ուրիշ  
ատեն:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Դուք կատարելապէս իրա-  
ւունք ունէք որ ուրիշի տանը անյարմար է որ ձեզ  
համբուրեմ: Մենք կարող ենք ներքեւ գնալ, մի կա-  
ֆէում նստել եւ մի քիչ խօսել, դուք էլ մի սուրճ  
կամ շօկօլաղ կը խմէք եւ յետոյ պարտէզ կը գնանք,  
մի քիչ էլ այնտեղ կը նստենք եւ մեր սիրոյ մասին  
կը խորհրդակցենք: Իսկ հասցէներն էլ յետոյ կը դը-  
րենք:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Հաճոյքով պաղպաղակ մը

կ'առնեմ, որովհետեւ չափազանց ծարաւ կ'զգամ: Եւ կրնանք, անշուշտ, խորհրդակցիւ այլեւ այլ հարցերու շուրջ:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Այսինքն ուղում էք ասել մեր սիրոյ հարցերի շուրջ: **Շնորհակալ** եմ:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Այսինքն... ըսել կ'ուղեմ... աւելի աղէկ կ'ըլլայ, որ նախապէս ձեր նամակը ամբողջովին կարդամ, եւ այնուհետեւ որոշում մը տամ....:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Ես ենթադրում եմ որ երեք ամիս էլ պիտի անցնի մինչեւ որ նամակս աւարտէք: Ուրեմն աւելի լաւ է որ ես ձեզ բերանովս բացատրեմ ամեն բան: Ես վստահ եմ որ մէկ ժամուայ մէջ կարող եմ համոզել ձեզ, որ իսկապէս եւ այն էլ չափազանց սիրում եմ ձեզ:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Ա՛հ, այնքան անպատրաստ կ'զգամ զիս այդ նոր վիճակին համար: Կ'ուղեմ խորհիւ քիչ մը... եւ այնուհետեւ որոշում մը տալ:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Ես զգում եմ որ ձեր որոշումը այն պիտի լինի, որ ինձ «այո՛» բառով պիտի երջանկացնէք: Ուրեմն այժմ կարող ենք դնալ, մէկ-մէկ շօկօլադ խմել, յետոյ կը դնանք պարտէզում կը նըստենք, ծառերի տակ, եւ մեր սիրոյ մասին կը խօսենք:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — (Դեպի դուռը ուղղուելով) Ա՛խ, ես այնչափ կը յուզուիմ... այնչափ կը յուզուիմ ատանկ խօսքերէն: Յուզմունքէս չեմ գիտեր ի՛նչ որոշում տալ....:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Ես զգում եմ որ երբ պարտէզում նստենք ծառերի տակ՝ դուք պիտի շուտով որոշէք: Եւ ես ձեզ պիտի բացատրեմ թէ ի՛նչպէս մեր սրտերի կօօպերացիայով մի իդիլիական ատմօսֆե-

բա կը ստեղծենք, որտեղ մեր բոլոր ուտօպիաները մի  
ըէալ կեանք կը դառնան:

(Միասին դուրս են գնում)

### ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

**ՓԱՅԼԱԿ.** — (Ներս վազելով) Հա՛, Հա՛, Հա՛ . . .  
Վա՛յ, պապօ՛, Վա՛յ: Ասանկ ալ անթիկա՞ կ'ըլլայ  
Եղեր: Կարծես տասը պատուիրաններ կը կարդար:  
Այս եղաւ սիրահարութի՞մ: Ախպա՛ր, Եթէ աղջկադ  
Վրայ առիւծի մը պէս չյարձակիս, չգրկես, չսեղմես,  
կողքերը չխտտցնես, սրունքները չփայփայես, Վի-  
զը չխածնես, մազերը չհոտոտես, գլխուղ Վրայ չի-  
բազմեցնես, վեր չնետես, վար չբերես, ծունկերուղ  
Վրայ չնստեցնես, թեւերուղ մէջ չառնես, չպոռաս,  
ըլլալիք եւ չըլլալիք երդումներ չընես, ա՛խ չքաշես,  
օ՛հ չսես — սիրահարութի՞մ կ'ըլլայ: Եւ, ախպա՛ր,  
այս ի՞նչ լեզու է որ կը խօսի: Ո՞ւրկէ կը հաւաքէ ա-  
սանկ բառեր: Եւ ի՞նչ բառեր: Իշու բերանը դնես՝  
չկրնար ծամել:

### ՊԱՏԿԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ

Տիկ. ԱՐՓԵՆԻԿ, ՍԻՍԱԿ

**Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.** — (Դուրսից) Վարդենիկ, Հո՞դ  
Ես:

**ՓԱՅԼԱԿ.** — Վա՛յ, պապօ՛: Ասոնք ալ անսլայ-  
ման գաղտնիք մը ունին: Եթէ այս ալ հասկնամ՝  
կուշտ-կուշտ կրնամ խնդալ այս խենթերուն Վրայ:  
Նոյն խև կրնամ գիրք մը գրել՝ Փարիզի Հայկական  
Գաղտնիքներ անունով: Հրաշալի գաղափար: (Նուր-  
ջը նայելով՝ սեղանի տակ է մտնում եւ կծկում) Հոս  
պահուիմ, տեսնենք թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ ի-

ըենց մէջ: Հա՛, Հա՛, Հա՛: Եւ գրքիս արդիւնքն ալ կը յատկացնեմ մեր գիւղի Որբախնամ ընկերութեան...:

Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.— (Դուրսից) Վարդենի՛կ, հոդ չե՞ս:

ՄԻՍԱԿ.— (Դուռը բանալով) Օրիորդը հոս չէ: Անշուշտ, անմիջապէս պիտի դայ: Խնդրեմ, ներս հրամէ՛:

Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.— (Ներս մտնելով) Վարդենիկը հոս չէ՛: Ո՞ւր կրնայ դնացած ըլլալ:

ՄԻՍԱԿ.— Անտարակոյս մօտ տեղ մը: Քիչ մը կը սպասենք, եւ եթէ ետ չդառնայ՝ սիրով կ'ուղեկցեմ քեզ մինչեւ օրիորդին տունը, կամ... ուր որ հրամայես:

Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.— Պարզապէս յոգնած կ'զգամ կոր: (Նստելով) Այդ սանդուխէն վեր ելնելը շնչառապառ ըրաւ զիս: Սակայն իրա՞ւ է թէ Տիկ. Թագւորեանը տունը չէր: Վստա՞հ ես:

ՄԻՍԱԿ.— Հարկաւ: Ես ճամբան հանդիպեցայ զինքը եւ ըսաւ որ ամբողջ օրը տունէն բացակայ պիտի ըլլայ:

Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.— Բայց ինչո՞ւ անմիջապէս ըստիր, երբ Սեւակ էֆէնտիին եւ Միսաք էֆէնտիին հետ փողոցէն կ'անցնէի, եւ քեզի հանդիպեցանք:

ՄԻՍԱԿ.— (Դիմացը նստելով) Ինչո՞ւ չըսի: Հա՛, Հա՛, Հա՛: Պարզ է թէ ինչո՞ւ: (Հետզիետէ մօտենալով, աքոռն էլ հետը սողցնելով) Ուզեցի անոնց ընկերակցութենէն ազատել քեզ, մինակ մնալու համար քեզ հետ: (Զեռքը բռնելով) Ինքդ չհասկցա՞ր այդ ռազմական խաղս, խուշիկս:

Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.— Ա՛չ, Սիսակ էֆէնտի... խնդրեմ, ատանկ բաներ մի զրուցեր, քանի որ լուրջ բան մը պատահած չէ մեր միջեւ: Եւ մանաւանդ, չեմ

ուզեր լեզու դնել ժողովուրդին բերանը բամբասանք-ներ ընելու իմ մասին:

ՍԻՍԱԿ. — Բայց, նուշիկս, անուշիկս, գիտես որ կը խենթնամ քեզ համար . . . : (Զեռքը համբուրելով) Եւ կ'ուզեմ որ իմս ըլլաս . . . Եւ կ'ուզեմ որ քուկո ըլլամ . . . :

ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ. — Ա՛չ, Սիսակ էֆէնտի, չեմ գիտեր . . . ո՛չ, ո՛չ, կը վախնամ կոր: Ո՛չ, ո՛չ: Այո՛ . . . :

ՍԻՍԱԿ. — (Գրկելով) Այո՞ : Անդամ մըն ալ կրկնէ այդ բառը, անուշի'կս:

ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ. — Ո՛չ, ո՛չ: (Գրկելով) այո՞ , այո՞ . . . :

ՍԻՍԱԿ. — Կը սիրե՞ս զիս: Կ'ուզե՞ս իմս ըլլալ, յաւիտեան . . . անվերջ:

ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ. — Իսկ դո՞ւն . . . :

ՍԻՍԱԿ. — Ես միմիայն քեզ համար կ'ապրիմ, դուն երջանկութիւններուս միակ աղրիւրն ես . . . : Դուն . . . դուն . . . պարզապէս կը խենթնամ քեզ համար:

(Փայլակ սեղանի կողքից զգոյտ գլուխը հանելով՝ նորից պահւում է, եւ ծոցից մի տետրակ հանելով՝ ինչ որ բաներ գրում):

ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ. — Ա՛չ, գլուխս կը դառնայ կոր . . . : Կատակ չե՞ս ըներ:

ՍԻՍԱԿ. — Ո՛չ, աղաւնեակս, ես . . . ալ կարծես կը մարիմ երջանկութենէս: Ինձի կը թուի թէ տիեզերական բոլոր սրբազան ուժեր բոլորուած մեր սիրոյ խորանին շուրջ՝ օրհներդ կը կարդան այն նուիրական զգացումին, որ մեզ մղեց իրարու գիրկը իյնալու:

ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ. — Ո՛չ, ի՞նչ անուշ բաներ կը զրուցես: Ո՞րչափ երջանիկ ըրիր զիս: Վերջապէս որք

չօճուխներուս հայր մը գտայ, եւ ինձի ալ... ամուսին մը:

ՍԻՍԱԿ.— (Շփռքուած) Հա՞յր մը...: Ես... ես... իրաւ որ չեմ գիտեր... ես...:

ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.— Զե՞ս հասկնար: Երբ ամուսինս կ'ըլլաս՝ բնական է որ չօճուխներս ալ զաւակներդ կ'ըլլան:

ՍԻՍԱԿ.— Այո՛, այո՛: Անշուշտ ատանկ է: Ա՛հ, խուշիկս, անուշիկս, չես գիտեր թէ հայրական ի՞նչ հազուադէպ խանդաղատանքով մը պիտի սիրեմ եւ զուրգուրամ զաւակներդ... ըսել կ'ուզեմ զաւակներս որովհետեւ զաւակներդ զաւակներս են եւ զաւակներս ալ զաւակներդ են:

ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.— (Սարսափած) Ի՞նչպէս թէ զաւակներդ զաւակներս են: Զըլլա՞յ թէ տեղ մը զաւակներ ունիս, եւ ինձի ըսած չես: Զըլլա՞յ թէ կին մը ունեցած ես... Ա՛հ, կը խենթնամ կոր...: Կը մարիմ...:

ՍԻՍԱԿ.— Ո՛չ, ո՛չ, խուշիկս: Ատանկ բան մը չկայ, բնա՛ւ: Այդ իմաստով չըսի: Սիրտս ամենայն անարատութեամբ պահած եմ քեզ համար, միմիայն քեզ համար:

ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.— Իրա՞ւ: Ա՛հ, քիչ կը մնար խելքէս ելնէի: Օ՛հ, որքան կը սիրեմ քեզ: (Թաշկինակով աչքերը սրբելով) Խե՞ղճ որբուկներս: Գրեթէ տարիէն աւելի եղաւ հայրական անուշ բառ մը լսած չեն: Այն օրէն երբ հանգուցեալ էրիկս մեռաւ (աչքերը սրբելով) Ա՛հ, ա՛հ...: Իսկ այժմ, փառք ամենակարող Տիրոջ, չօճուխներս նորէն հայրիկ մը ունեցան:

ՍԻՍԱԿ.— (Հպարտ) Եւ կրնաս վստահ ըլլաւ, որ ասպետական վայելչութեամբ պիտի տանեմ չօճուխներուդ հայրիկի պաշտօնը:

(Փայլակը սեղանին տակ խնդալով մարելու պէս է) :

**Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.** — ԽԵ՛ՂՃ Հանգուցեալ ԷՐԻԿՍ : ԽԵՆԹԻ ՄԸ ԱԼՔՍ ԿԸ ՄԻՐԷՐ ՊԽՍ : Եւ ԵՐԲ ՄԵՌԱՎ, ՔԻՉ ԿԸ ՄՆԱՐ ԻՆՔՍ ԱԼ ՄԵՌՆԷԿԻ ՎԻՉՏԷՆ : ԿԻՆ ՄԸ ԿՐՆԱ՞Յ ԱՌԱՆԳ ԷՐԻԿԻ ԱՎԱՐԻԼ : ԶԵՎԱՅ ԹԷ ՊՈՒՆ ԱԼ ՄԵՌՆԻՍ : Ո՛Չ, Ո՛Չ, ՀԵՋ Ուզեր : ԿԸ ԽԵՆԹՆԱՄ, ԵԹԷ ԱՄԱՆԿ Բան ընես : Հասկցա՞ր :

**ՓԱՅԼԱԿ.** — Տէր ողորմեա' : Տէր ողորմեա' : ԽԵ՞ՆԹ Եմ որ մեռնիմ : ԸՆԴՀԱԿԱՌԱԿՆ, ՆՈՐ ԿԸ ԾԵՆ-ՌԻՄ, ԱՎԱՐԵԼՈՒ ՄԻՐՈՅ Եւ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՊՐԱԽՄՈՒ :

**Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.** — Ա՛Հ, Ի՞՞ՆՉ ԱՂՈՒՈՐ Բաներ ԿԸ ՊՐՈՒՑԵՍ : Պարզապէս ԿԸ ԽԵՆԹՆԱՄ, ԵՐԲ ԿԸ ԼՍԵՄ : (Իր մատի մատնին հանելով՝ Սիսակի մատին է անցընում) Ասիկա թող մեր ամուսնութեան նշանը ըւ-լայ : Դուն մատնի չունի՞ս : Հոդ չէ :

**ՍԻՍԱԿ.** — Ո՛ՐՃԱՓԻ ՊՊԱՑՈՒԱԾ Եմ : Ես... չեմ գիտեր : Շատ ԵՐՋԱՆԻԿ Եմ :

**Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.** — ԶԵՎԱՅ ԹԷ ԿՈՐՄՆԳՆԵՍ : ԲԵ-ՆԱՐ ՀԱՂԻՄԻ ՆԵՐԵՄ ՔԵՂ, ՀԱՍԿՑԱ՞Ր : (Կասկածու ՇՈՒՐԳԸ նայելով) ՏԵՂԷ ՄԸ ՀՆՀԱՌՈՒԹԵԱՆ ԱԼՔՍ ՃԱՅՆ ՄԸ ԿԸ ԼՍԵՄ : ԶԵՎԱՅ ԹԷ ՄԻՒՍ ՍԵՆԵՎԱԿԸ ՄԱՐԴ ԿԱՅ :

**ՍԻՍԱԿ.** — ԱՆԿԱՐԵԼԻ է, ՎԱԽՆԱԼԻՔ ՀՈՒՆԻՍ, Ա-ՎԱՀՈՎ ԿՐՆԱՍ ԸԼՎԱԼ, ԽՈՒՇԻ՛ԿՍ :

**Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.** — Գիտես, ալ չեմ կրնար սպա-սել : Սանկ, ամուսնանալու մասին ըսել կ'ուզեմ : ԿԸ ՀԱՍԿՆԱ՞Ս : ԶԵՍ ԿՐՆԱՐ ԵՐԵւակայել ԹԷ ՈՐՃԱՓԻ ԿԸ ՆԵՂՈՒԻՄ : Զօճուխներուս ՀՈՎԸ ՋԻՂԵՐՍ ԿԸ ԿՄՐՄԷ ԿՈՐ : ԻՆՔՍ ԱԼ, ՊԻՄԵ՞Ս այնքան կ'ուզեմ ԷՐԻԿ ՄԸ ՈՒՆԵՆԱԼ, այնքան կ'ուզեմ ; — պարզապէս ԿԸ ԽԵՆԹԱՆԱՄ ԿՈՐ : Ա՛Հ (գրկելով) Ո՛ՐՃԱՓԻ ԿԸ ՄԻՐԵՄ ՔԵՂ :

**ՍԻՍԱԿ.** — ՄԻՆՉԵւ ՄՐՋԱՆԱւԱՐՄ ԸԼՎԱԼՄ ՄԱՐԻ Եւ ԿՈԹԸ ԱՄԻՍ ՈՒՆԻՄ : Ի՞՞ՆՉ Բախտաւորութիւն պիտի ըւ-

լայ այն օրը, երբ փաստաբանի վկայականը ծոցս  
պահած՝ քեզ հետ Վռամշապուհ Տէր-պապային եր-  
թանք՝ ամուսնական սրբազան կապով իրարու հետ  
միանալու:

**Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.** — Ո'չ, ո'չ, ո'չ: Ես կը մեռ-  
նիմ եթէ մէկ ու կէս տարի եւս սպասեմ: Նախ ամուս-  
նութեան մէջ շրջանաւարտ ըլլանք, իսկ միւս շր-  
ջանաւարտութիւնդ ալ իր կարգին կ'ըլլայ: Աղէկ  
չըսի՞: Ես կ'ուզեմ անմիջապէս անէն բան լմննայ:  
Դուն նորէն կրնաս ուսումդ շարունակել: Հասկցա՞ր:

**ՍԻՍԱԿ.** — Ես... շիտակը... չեմ գիտեր:

**Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.** — (Մէկ ձեռքով Սիսակի բե-  
րանը գոցելով) Աս'... չըլլա՞յ թէ հակառակիս:  
Գիտեմ, կը քաշուիս, հաւանաբար ներկայ վիճակէդ  
կը վախնաս, բայց դուն կրնաս անհոգ ըլլալ, սանկ...  
ըսել կ'ուզեմ նիւթականին համար...: Եւ չես կրնար  
երեւակայել, թէ որչափ կը տանջուիմ: Ամեն ան-  
դամ որ տեղ մը կ'երթամ՝ չօճուխներս իմ կեցած  
տան գօնսիէրժին—ըսել կ'ուզեմ դոնապանին կնոջ  
ինամքին ստիպուած եմ թողուլ: Անպիտան օտարա-  
կան կին մը: Վաղը օրինակ, բժշկի պիտի երթամ,  
ակռաներս շինել տալու: Եթէ դուն էրիկս ըլլայիր՝  
փոխանակ այդ Փրանսացի խենթ կնոջը աղաչելու,  
դուն կրնայիր մէկ, երկու ժամ տունը սպասել, հոգ  
տանիլ. չօճուխներուս, կաթ տալ փոքրիկիս: Գէ՞շ  
կ'ըլլար:

(Փայլակ սեղանի տակ խեղդում է ծիծաղից):

**ՍԻՍԱԿ.** — Կա՞թ տալ...:

**Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.** — Ա՛չ, Սիսակ էֆէնտի, ի՞նչ-  
քան ամչկոտ ես: Անշուշտ, վարժուած չես եւ ատոր  
համար կը քաշուիս:

**ՍԻՍԱԿ.** — Ինչո՞ւ Սիսակ չես ըսեր:

**ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.** — Իսկ դուն ինչո՞ւ զիս Արփեկ  
չես կոչեր:

**ՄԻՍԱԿ.** — Արփի'կ:

**ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.** — Սիսա'կ (համբոյրներ):

**ՄԻՍԱԿ.** — Ի'մ Արփի'կ:

**ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.** — Իմ Սիսա'կ (Համբոյրներ)  
(Փայլակը հաւասարակոռութիւնը կորցնելով՝ ընկ-  
նում է ծունկերի վրայ, եւ ակամայ Տիկ. Արփենիկի  
ոտքը բռնում):

**ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.** — (Զարհուրած ցատկելով,  
դեպի դուռ է վազում եւ դուրս նետում) Օ՛յ, կեն-  
դանի մը... կամ դող մը... օղնութի՛ւն....:

**ՄԻՍԱԿ.** — (Ցատկելով՝ նայում է սեղանի տակը  
եւ նկատելով Փայլակին՝ դուրս է քառում նրան) Յի-  
մա՛ր, է՛շ, ի՞նչ գործ ունիս հող: Քու խերը հիմա  
կ'անիծեմ: Մե՞զ կը լրտեսէիր:

**ՓԱՅԼԱԿ.** — Ախալա՛ր, ի՞նչ կ'ընես: Թեւս ջար-  
դեցիր:

**ՄԻՍԱԿ.** — (Կատղած) Ի՞նչ գործ ունէիր սեղա-  
նիս տակ:

**ՓԱՅԼԱԿ.** — Ի՞նչպէս թէ ի'նչ գործ: Կոճակիս  
մէկը փրթաւ եւ սահեցաւ սեղանին տակը: Ես ալ  
փնտռելու վրայ էի, երբ յանկարծ մտաք երկուքդ  
ալ: Յանցաւո՞ր եմ, ախալա՛ր:

**ՄԻՍԱԿ.** — Դուն մէկ միլիոն էշերէն բաղադրեալ  
չորքոտանի մըն ես: Հասկցա՞ր (Դուրս է վազում):

**ՓԱՅԼԱԿ.** — Դուն ատանկ խորհէ՛: Բաւական է  
որ ինքզինքս կը ճանչնամ: (Բռունցքը դեպի դուռը  
տարձելով) էշը դուն ես, Հասկցա՞ր: Հազարաւոր  
Ամերիկացիներ ինձ վրայ կը հիանային, իսկ դուն  
զիս չե՞ս հաւներ: Օլուա՛յթ: Սպասէ՛ իմ ըսած սա  
գիրքը գրեմ: Փարիզի Հայկական Գաղտնիքներ: Եւ  
ի'նչ սքանչելի անունն ալ հնարեցի: Ո՞վ չպիտի զնէ

ատանկ անունով գիրք մը: Հա՛, հա՛, հա՛: (Ծաղ-  
րանիով) Սիսակ էֆէնտի. Սիսա՛կ. Արփի՛կ: Վաղը  
արդէն այդ Արփիկ ըսուած Պօլսեցի մաման իր չօ-  
ձուխը գիրկու պիտի դնէ, որպէսզի կաթ տաս եւ  
օրօր երգես: Էւր ե՞ս եմ թէ դուն: (Դուրս է գնում):

— Վ Ա Ր Ա Գ Ո Յ Շ —





# ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

---

## ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

(Նախորդ տեսարան)

Փայլակ գծագրութեան եռոտանի յենարանի առջեւ կանգնած՝ զբաղուած է նկարելով։

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — (Ներս մտնելով) Դուք մենա՞կ էք։ Իսկ այս հոսոսը երեւում է որ տանը չէ։ Ո'վ դիտէ ի՞նչ ժուլիկութիւններ է անում։

**ՓԱՅԼԱԿ.** — Հըլօ', հայրենակից։ Վաղուց է չես երեւնար։ Կ'երեւի թէ չափազանց զբաղուած ես... սանկ... գօնֆերէնցիաներով...։

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Այո', ժամանակ շատ քիչ եմ ունենում։ Մի շարք էկօնօմիական շատ լուրջ պրօբլէմներ անալիզի եմ ենթարկում, եւ ուրախ եմ ասելու, որ աշխատութիւնս սաստիկ պրօդուկտիվ է դուրս գալիս։

**ՓԱՅԼԱԿ.** — Իրա՞ւ կ'ըսես։ Օլոա՛յթ։ Բայց բան մը հանցնեմ նէ՝ սրտիդ վրայ չպիտի՞ առնես։ Քու ըսած այդ էգօնօմիական փրոպլէմներուն եւ կամ եթէ կ'ուզես փրոպլէմներու էգօնօմիաներուն մէջ փարակա՞յթէ պարապ տեղը ջուր կը ծեծես։

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Էկօնօմիական բոլոր պրօբլէմները կապիտալիստական սիստեմից են դուրս գալիս ամեն երկրներում։ Հետեւաբար Թիւրքիայում բոլոր փարաները նրանց մէջ են, Ֆրանսիայում սանտիմները, Գերմանիայում պֆենիգները, Ռուսաստանում կօպէկները, եւ այլն։

**ՓԱՅԼԱԿ.** — Ամերիկային մէջ ալ սէնթերը . . . :  
Հասկցայ: Աղուոր բացատրեցիր: + Բայց դիտե՞ս —  
Ամերիկային մէջ այդ քու ըսած էդօնօմիական փրօպ-  
լէմները շատ աւելի զօրաւոր տեսակէն են քան հոս —  
Փարիզին մէջ: Այդ պատճառաւ ալ հոն թէ ներկը եւ  
թէ վրձինները աւելի սուղ են քան հոս: Այս վրձինը  
— կը տեսնե՞ս, վաթսուն սանթիմի գնած եմ, որ ը-  
սել է տասներկու սէնթ: Իսկ Պօսթընին մէջ ասկէ  
աւելի գէշ տեսակի վրձինին համար տալէր երեսուն  
հինգ սէնթէն մինչեւ տալէր ու կէս տուած եմ ամեն  
ատեն: Կը տեսնե՞ս տարբերութիւնը: Շո՛ւր: Ներ-  
կերն ալ նոյն համեմատութեամբ սուղ են հոն: Գի-  
տե՞ս ի՞նչ: Երբ հոս — Փարիզի գեղարուեստից ճեմա-  
րանէն շրջանաւարտ ըլլամ եւ Ամերիկա վերադառ-  
նամ՝ անպատճառ ներկի եւ վրձինի խանութ մը պի-  
տի բանամ Պօսթընի կամ նիւ Եօրքին մէջ: Բայց . . .  
թո՛ւհ . . . այս ի՞նչ ըրի, ախալա՛ր: Նկարիս աչքին  
վրայ այնչափ ներկ փակցուցի, կարծես աչքին վրայ  
կոտոշ մը բուսած ըլլայ:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Այդ ի՞նչ էք նկարում: Կար-  
ծեմ Հոռմայեցոց կայսր Ներոնի գլխի նման է:

**ՓԱՅԼԱԿ.** — Ի՞նչ կ'ըսես, ախալա՛ր. Ճիռւ գլուխ  
կը նկարեմ, չե՞ս տեսներ: Դուն կրնա՞ս աս նկարիս  
խորհուրդը ըմբռնել: Կէս օր պիտի խորհիս, մինչեւ  
որ հասկնաս: (Հպարտութեամբ) Ասիկա անձնա-  
կան գիւտս է: Ասոր մէջ անանկ արտայայտութիւն  
մը պիտի դնեմ, ինչպէս յաջող սիրահարութենէն  
վերջ ձի մը կրնայ ունենալ: Ուեէ մէկը չկրնար այդ  
խորհիլ: Այս Փրանսացիներու նկարչութիւնն ալ . . .  
եամա՞ն . . . գլուխս կը դառնայ, երբ կը յիշեմ:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Ուզում եմ բացատրէք ինձ թէ  
ինչո՞ւ է ձեր գլուխը դառնում:

**ՓԱՅԼԱԿ.** — Իսկ քու գլուխդ չի՞ դառնար: Զե՞ս

ընդունիր որ այս ժողովուրդին ըրածը աղէկ չէ։ Ա-  
սոնց նկարները, արձանները . . . ո՞ր կողմ նայիս—  
կին։ Ան ալ ի՞նչ ձեւերով—բոլորն ալ մերկ կիներու  
նկարներ, մերկ աղջիկներուն արձաններ։ Վա՛յ, պա-  
պօ՛, վա՛յ . . . Ասանկ գեղարուե՞ստ կ'ըլլայ։ Ո՞վ  
ըսաւ թէ կինը գեղարուեստ է կամ գեղարուեստը  
կին է։ Գիտե՞ս ինչ . . . եթէ ասանկ խենթ ու խելառ  
բաներ Ամերիկային մէջ փորձես՝ ա՛լ փրկութիւն չի  
կայ։ Իշու բաղանիք կը քշեն քեզ ալ, քու նկարը  
ծախող խանութպանն ալ։ Ամերիկացիները քրիստոն-  
եայ եւ չափէն աւելի բարեպաշտ ժողովուրդ մըն են։  
Անոնց հետ չես կրնար գէշ կատակներ խաղալ, եւ  
«գեղարուեստ է» պոռալով, օձիքդ աղատել։ Հաս-  
կըցա՞ր։

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— Ասացէ՛ք, խնդրեմ, Ամերիկա-  
յում ի՞նչ բաներ ամենից շատ են նկարում։

**ՓԱՅԼԱԿ.**— Հոն կը գերադասեն բնութիւնը իր  
հարազատ արտայայտութիւններուն մէջ։ Հոն կը նը-  
կարեն անտառներ, լիճեր, լեռներ։ Այնուհետեւ,  
կենդանիներէն ձիեր, շուներ, կատուներ։ Բոյսերէն  
ալ ծաղիկներ, խաղող, նարինջ, խնձոր, երբեմն ալ  
թուզ։ Կը պատահի նաեւ խիար, ձմերուկ։ Իսկ մար-  
դոցմէ ամենէն սիրուածը Ճօրճ Ռւաշինկթընին նկարն  
է, որ անպայման ամեն տան մէջ սլիտի դտնես։

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— Ծառ, շուն, կատու, թուզ,  
խիար, Վաշինգտոն գեղարուես՞տ եղաւ։ Գեղարուես-  
տը ոչ այս է, ոչ էլ այն է։ Պէտ՛ք է նկարել գոր-  
ծաւոր պրօլետարիատը իր բոլոր ֆունկցիաների մէջ,  
ինդուստրիայի այդ զոհը, որին կապիտալիզմը ան-  
կօնտրօլ էքսպլուատացիային է ենթարկում։ Պէ՛տք է  
նկարել միլիտարիզմի սարսափները, որ բուրժուա-  
կոսմոպոլիտական էլէմէնտները տարածում են աշ-  
խարհի շուրջը։ Պէտք է նկարել Մարկսի, Կառլցկու,

էնգէլսի, Բերէլի, Ժօռէսի պատկերները, որոնք  
պրօլետարիատի մէկ-մէկ առաքեալներ են:

**ՓԱՅԼԱԿ.** — Շո՛ւր: Ատանկ բաներ ալ պիտի նը-  
կարեմ — ինչո՛ւ չընեմ: Սպասէ՛, այս նկարը լմնցը-  
նեմ — այնուհետեւ քու ըսած նիւթերուն պիտի անց-  
նիմ: Եւ գիտե՞ս, ամենէն առաջ Ամերիկայի հան-  
գուցեալ Սարածեան սրբազանը պիտի նկարեմ՝ Ուս-  
տըրի առաջնորդարանը աւլած ատեն: Գիտե՞ս այդ  
խեղճ մարդը ինչե՞ր քաշած է Ամերիկայի պուրժուա-  
հոգաբարձուներու ձեռքէն: Ամիսներ շարունակ անօ-  
թի կը ձգէին — պէ՛: Իր տեսած տառապանքը հայ  
պատմութեան ամենէն սեւ էջը կը կազմէ: Եթէ գիտ-  
նաս ամեն բան՝ հինգ վայրկեանէն պիտի խենթնաս:  
Սպասէ՛ ես այն պուրժուա հոգաբարձուներուն խէրը  
պիտի անիծեմ: (Հպարտ) Հայրենակի'ց, կը տեսնեմ  
տակաւին չես կրցած հոգիիս խորքերը թափանցել:  
Ես կը ձգտիմ նոր դաղափարներուն յարմար նիւթեր  
ընտրել նկարներուս համար: Հասկցա՞ր:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Կատարելապէս հասկանում եմ  
ձեզ, եւ ձեր էմպուլսները գովելի եմ նկատում: Կա-  
մաց-կամաց աշխատեցէք պրօլետարիատի հարա-  
զատ նկարիչ դառնալ, նրա ցաւերի, իդէաների եւ  
իդէալների հաւատարիմ թարգմանը լինել ձեր վրձի-  
նով եւ ներկերով:

**ՓԱՅԼԱԿ.** — Ինքս ալ գիտեմ որ նորու-  
թիւնը աղէկ բան է, մանաւանդ երբ մէջը փարա կայ:  
Սակայն ամեն անդամ չես կրնար յաջողիլ: Զէնսը  
պիտի գայ, որ բան մը թոցնես: Ամենէն առաջ ապ-  
րուստը ապահովելու է: Գիտե՞ս, երբ Ամերիկայէն  
նոր հասայ Փարիզ՝ երեք շարաթ աղէկ անցուցի:  
Այնուհետեւ . . . գիտե՞ս, անանկ ապուր մը կերայ,  
անանկ ապուր մը, որ պարզապէս կ'ամչնամ որ ըսեմ:  
Ուէ՛լ . . . սանկ . . . փոքրիկ մամդէլ մը . . . կը հասկը-

նա՞ս, եա՛ : Եւ անանկ աղուոր, անանկ աղուոր—  
ծառէն նոր ինկած խնձորի մը պէս : Վերջը . . . (վիզը  
քերելով) . . . վերջը . . . երբ յաջորդ օրը աչքս բացէ՝  
անիծածը արդէն փախած էր, բոլոր դրամներս գող-  
նալէն վերջ : Քիչ մնաց խելքս ցնդէր : Խենթի մը  
պէս փողոցները ինկայ, բայց ո՞ւր գտնէի այս Բա-  
րելոնին մէջ :

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Դա մի ցաւալի ավանտիւրա-  
է : Դուք զգոյշ լինելու էք Պարիզի կօկոտներից, ո-  
րոնք անփորձ երիտասարդներին որսում են եւ նրանց  
քնքոյշ զգացումները էքսպլուատացիային են են-  
թարկում :

**ՓԱՅԼԱԿ.** — (Հառաչանքով) Քնքոյշ զգացում-  
նե՞ր ըսիր : Երանի թէ ատանկ զգացումները արմա-  
տէն չորնան, որպէսզի մենք ալ պէլայի չը հանդի-  
պինք : Զգացումներէս զատ գրպանս ալ քնքոյշ էր,  
որովհետեւ այդ արկածէն վերջ չորս օր անօթի  
պտտեցայ : Փողոցը երբ կ'ելնէի՝ ինձի կը թուէր թէ  
գլխուս վրայ կը քալէի : Սիրտս տեսակ մը—մարելու  
եւ նոյն իսկ փոխելու պէս կ'ըլլար : Խօսելու ոյժ չի  
մնաց : Դէմքս ալ մէկ ամսուայ մեռելին պէս : Վերջը  
յիշեցի որ չանթաներուս մէջ բաներ մը ունէի : Նոր  
քօթս որ թուղթին մէջ փաթթած կը պահէի՝ տարի  
եահուտիի մը քով հինգ ֆրանքի գրաւի դրի : Քիչ  
մը շունչ առի :

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Դա մի զարհուրելի տրագե-  
դիա է, որ գերախտաբար ամեն օր կրկնում է կա-  
պիտալիստական երկրներում :

**ՓԱՅԼԱԿ.** — Վերջը, գիտե՞ս ի՞նչ ըրի : Ուղղակի  
ամերիկեան դեսպանատուն : Գրաւոր դիմումնագիր  
մը ներկայացուցի, պահանջելով իրր Ամերիկեան քա-  
ղաքացի, որպէսզի ինձ համար թերթ ծախելու գործ  
գտնէին : Կարեւորութիւն չտուին : Քանի մը օր գացի

Եկայ, վրաս հաջող չեղաւ։ Ա՛լ կոկորդիս հասաւ։ Անգամ մըն ալ դացի եւ դեսպանատան դռնապանը զտնելով՝ ա՛լ բան չը մնաց որ չըսէի։ Սպառնացի մինչեւ Ուաշինկթըն դիմել, նախադահին բողոքել։ Պիտի տեսնէիր թէ ի՞նչպէս վախցաւ։ Մեռելի մը պէս գոյնը նետեց։ Այդ տեսակցութեան արդիւնքը այն եղաւ, որ յաջորդ օրը նպատակիս հասած էի։ Փողոցները ինկայ, թերթերուն ահագին ծրարը թեւերուս տակ։ Կը վազէի ու կը պոռայի, կը պոռայի ու կը վազէի—«Լա Փաքրի»», «Լը Մաքէնի», «Լը Ֆիկարօ’ . . .»։ Պարզապէս խենթի պէս։ Եւ առաջին օրն իսկ—դիտե՞ս—չորս ֆրանք քառասուն եւ հինգ սահթիմ վաստկեցայ։ Ա՛լ ապագաս ապահովուա՛ծ էր։

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— (Ցնցուելով, վրդովուած) Դուք մի ամօթալի պրօֆեսիա ունեցած էք։ Դա մեր կոլեգիական մօրալի դէմ է։ Դա մեր իդէալների գիտութեակցիա է։ Դուք իրաւունք չունէք բուրժուակապիտական թերթերի պրօպագանդայով զբաղուելու։ Դա մի կատաստրօֆ է։

**ՓԱՅԼԱԿ.**— Ի՞նչ կ'ըսես, ախպա՛ր։ Ես թերթ կը ծախէի։ Հոդ փրօփականտի ի՞նչ խնդիր կայ։ Ինձի ի՞նչ թէ ի՞նչ կը ծախեմ։ Բաւական է որ բան մը ունիմ, որ կրնամ ծախել։ Ինձի վարա պէտք էր Հասկցա՞ր։ Ես այդ թերթերէն ոչ մէկը նոյն իսկ մէկ անգամ կարդացած չեմ։ Ինձի ի՞նչ թէ անոնց մէջ ի՞նչ կը գրեն։ Կը կարծես թէ ծախած ատեն ոեւէ մէկուն ըսա՞ծ եմ թէ անպատճառ կարդալու են այդ թերթերը, եւ կամ թէ գովարանա՞ծ եմ ոեւէ յօդուած կամ խմբագրական։ Նօսըրի’ . . . :

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— Դուք միւս անգամ այդպիսի ուլտրա կօնսերվատիկ թերթեր ծախելու չէք։ Դա մի պրօպագանդա է կապիտալիստ էլէմէնտների կող-

մից։ Դուք պրօդրեսիստ թերթեր ծախելու էք լիբերալ իդէաները տարածելու համար։ Բայց երբ դրա հակառակն էք անում՝ ձեր վարմունքը մի լուրջ կրիտիկային չի դիմանում։

**ՓԱՅԼԱԿ.** — Իսկ քու ըսածները լուրջ գրիթիզայի կը դիմանա՞ն։ Զգէ՛, ճանըմ։ Բան մըն է որ կը դառնայ։ Սատանան ինքը չկրնար ըսել թէ աշխարհին մէջ ի՞նչ բան ծուռ է եւ ի՞նչ բան շիտակ։

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Դրանք ինտելիգէնտ ինդիվիդուումին յարմար խօսքեր չեն։ Դուք պարտաւոր էք դիտնալու թէ ի՞նչ բանը սխալ է եւ ի՞նչ բանը ուղիղ է։ Դուք Ամերիկայի կօնսերվատիվ ատմօսֆերայում կորցրած էք պրօդրեսիվ տենդենցիաները հասկնալու ամեն կարողութիւն։ Դա պատիւ չի բերում ձեզ։ Այնտեղի իդէաները ազդում են ձեզ վրայ։ Այնտեղի համալսարանները նոյն իսկ մէկ-մէկ գործարաններ են, որոնք միայն պրօֆեսիօնալ դասակարգ են պատրաստում եւ ապրանքի պէս հրապարակ հանում։ Նըրանք կապիտալի գործիքներ են դառնում։ Կլեմանսօն ասում է որ Ամերիկայի համալսարաններում գնդակի խաղերով աւելի են զբաղւում, քան դիտութիւններով։ Բայց դուք գնդակ խաղալու շնորհքն էլ չունէք։ Այնտեղ ինտելիգենցիա չկայ, այլ պսէվդօ-ինտելիգենցիա։ Դուք, օրինակ, անձամբ երկու հատ շնորքով գիրք կարդացած չէք։ Ի՞նչ տեսակ ինտելիգէնտ էք։

**ՓԱՅԼԱԿ.** — Ախպա՛ր, ինչո՞ւ կը մեղադրես։ Ինտո՞ր կարդայի։ Ցերեկը կը գործէի, գիշերը դըպ-րոց կ'երթայի։ Այնուհետեւ ցերեկը դպրոց կ'երթայի, գիշերը կը գործէի։ Ալ ժամանա՞կ կար գիրք կարդալու։ Հոն ամենքը ատանկ են, ես բացառութիւն մը չէի կազմեր։ Վանեցի մը կը ճանչնամ, որ Պօսթընի մէջ բժշկութեան կը հետեւի։ Թանապուրի

փրօֆեսօր անունը տուած էին։ Ցերեկը դպրոց կ'երթար, դիշերները ճաշարանի մը ամանները կը լուար։ Պալքանեան պատերազմի ատենն էր։ Անդամ մը իրեն հանդիպեցաւ։ «Պատերազմէն ի՞նչ լուր»—հարցուցի։ Ապուշ-ապուշ ինձի նայեցաւ։ Վեց ամիս առաջ սկըսած պատերազմին լուրը նոր միայն ինձմէ կը լսէր։ Գոնէ ես սաշափը գիտէի, թէ տեղ մը պատերազմ կար։ Նա այդ եւս չէր գիտեր։ Ամերիկան ատանկ է։ Զբաղեալ մարդը ժամանակ չունի իր անձնական դործէն դուրս տարբեր խնդիրներով հետաքրքրուելու։ Հասկցա՞ր։ Բայց կեցի՛ր։ Դուն գիտե՞ս որ պատուիս հետ կը խաղաս, ըսելով թէ գիրքեր կարդացած չեմ։ Գիտցածիդ պէս ալ խախա մը չեմ, հասկցա՞ր։ Ես անանկ գրքեր կարդացած եմ որ հազարէն մէկը չի կարդար։ Օրինակ, «Խորհրդաւոր Կղզի», «Խաչագողի Յիշատակարանը», «Անարատ Յղութիւն Սուրբ Աստուածածնայ», «Համով-Հոտով», «Սեռային Առողջարանութիւն», Պատուելի Ֆիլեանի «Երկնային Լոյսերը», «Եօհաննա Պապուհին»։ Կ'ուզե՞ս տասը հատ ուրիշ անուններն ալ շարեմ։

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.**— Այդ տեսակ մինիմումներից ոչ մի մաքսիմում չի դուրս գալիս։ Զեր ամբողջ պաշարը մի բալլաստ է, որ լաւ կանէք ծովը թափէք։ Երեւում է որ դուք թերթ էլ չէք կարդում, թէ եւ այնտեղ բաւական շատ կան նրանք։

**ՓԱՅԼԱԿ.**— Շուրպ, կան։ Եւ ես յաճախ կարդացած եմ։ Նոյն իսկ յօդուած գրած եմ։ Գիտե՞ս, անդամ մը անանկ յօդուած գրեցի, որ ամբողջ Ամերիկան հիացաւ։ Յօդուածիս անունը այս էր։ — «Շուտ հարստանալու միջոցներ»։ Ամերիկահայ թերթերը—պիտի գիտնաս—որ բազմակողմանի եւ ճոխ բովանդակութիւն ունին։

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.**— Նրանք ուլ'տրա-նացիօնալիս-

տական փալասներ են, որոնց անունը սխալմունքով  
թերթ են կոչում: Երուղիցիան պակասում է ձեզ,  
այդ պատճառով նրանց պակասութիւնները չեք նըշ-  
մարում: Նրանք սլրիմիտիվ բաներ են: Երեւում է որ  
երեխաներ են խմբագրում:

**ՓԱՅԼԱԿ.** — Ի՞նչ կը դրուցես, Հայրենակի'ց:  
Կ'աղաչեմ կամաց խօսէ': Զըլլա՞յ թէ դուրսէն մէկը  
լսէ: Սաղ աշխարհը վրադ պիտի խնդայ: Դուն պիտի  
գիտնաս որ Ամերիկահայ խմբագիրներուն մէջ անանկ  
դիւանագէտներ կան, որ ամբողջ Եւրոպայի վարչա-  
պետները կրնան մատի վրայ խաղցնել: Դուն կատա՞կ  
կ'ընես անոնց հետ:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Նրանք խելքով երեխաներ են:  
Նրանք իդիօտներ են: Մենք նրանց կաշին դարախա-  
նայից ենք ճանաչում: Հայերէն ժուլնալիզմը Ամե-  
րիկայում խուլիզանութիւն է: Այնտեղ նացիօնալիզ-  
մը տիրում է անկօնտրոլ կերպով: Դա մի կատաստ-  
րոֆ է: Ես ուղում եմ ապագայում Ամերիկա գնալ  
լուրջ կերպով ուսումնասիրելու այնտեղի ատմօսֆ-  
րան եւ էկոնօմիական սիտուացիան:

**ՓԱՅԼԱԿ.** — Ինչո՞ւ չէ: Գէշ բան չպիտի ընես,  
եթէ հոն ալ ճամբորդես: Ես կրնամ նախապէս վստա-  
հեցնել, որ կարծիքդ պիտի փոխես հայ թերթերու  
մասին: Պիտի գիտնաս որ հոն ալ սովորելիք շատ բան  
կայ: Ամերիկայի՞ հետ կը խաղաս: Պրուքլինի կա-  
մուրջը տեսնես՝ բերանդ կը բանաս, եւ ալ վեց ամիս  
չես կրնար գոցել: Հոն քառասուն, յիսուն, վաթսուն  
յարկով տուները սովորական բաներ են: Հոս կրնա՞ս  
հատ մը ցուցնել: Կամ Նիւ Եօրքի Պրօնքս ըսուած  
պարտէղը լամ՞ծ ես: Ինչ ճանավար ըսես՝ հոն կը  
գտնես: Գիտե՞ս, անզամ մը հոն այնչափ յուզուե-  
ցայ, այնչափ յուղուեցայ, որ խօսքով չեմ կրնար  
նկարագրել: Գիտե՞ս ի՞նչ տեսալ: Հայաստանէն բեր-

ուած արջ մը: Խելքդ կընա՞յ այդ բանի հասնիլ: Եւ  
ինտո՞ր ալ կը խորհին: Որո՞ւ միտքէն կընայ անցնիլ:  
Երբ վանդակին վրայ խոշոր գիրերով տեսայ գըր-  
ուած թէ Հայաստանի արջ մըն էր՝ սիրտս զարմա-  
նալի կերպով զարկաւ: Ճեղային հպարտութիւն մը  
զգացի, որ մենք ալ Ամերիկայի պէս քաղաքակիրթ  
աշխարհին մէջ ճանչցուած աղդ մըն ենք: Անշուշտ  
փէյ չըներ, որ դուն Ամերիկա ճամբորդես Հայաս-  
տանի արջ մը տեսնելու համար, այլ սանկ—ուրիշ  
շատ բաներ տեսնելու եւ քչիկ մը դրամ շինելու հա-  
մար:

**ՇԱՀՆԱԶԱՐԾՎ.**— Ես նախ եւ առաջ Ամերիկայի  
կապիտալիստական ատմօսֆերան եւ սլրօլետար մաս-  
սաների ընդհանուր տենդենցիաները լուրջ կերպով  
պիտի ուսումնասիրեմ:

**ՓԱՅԼԱԿ.**— Շո՞ւր: Ամեն բան ուսումնասիրել  
պէտք է, ինչ որ ձեռքդ կ'իյնայ: Իսկ եթէ ատոր հետ  
միաժամանակ աղուոր գործ մըն ալ գտնես եւ տարին  
քանի մը հարիւր տալէր պանքան նետես՝ ալ ամեն  
բան օլուայք կ'ըլլայ: Բան մըն ալ պիտի հարցնեմ,  
սանկ, ընկերաբար: Ամերիկա որ երթաս... այս-  
ինքն, մինա՞կ պիտի ճամբորդես, թէ օրիորդին հետ:  
Գիտե՞ս, աղուոր ընտրութիւն մը ըրած ես: Աղէկ  
աղջիկ է: Քու չափով ես ալ կը հաւնիմ:

**ՇԱՀՆԱԶԱՐԾՎ.**— Նա իմ սիմպատիա է:

**ՓԱՅԼԱԿ.**— Ի՞նչ ըսիր: Հա՛, հասկցայ: Շո՞ւտ  
պիտի ամուսնանաք: Զմոռնաս հարսնիքիդ կանչել  
զիս: Ալ չպիտի ձեռքէս աղատիս: Հասկցա՞ր:

**ՇԱՀՆԱԶԱՐԾՎ.**— Նա դեռ որոշում չէ տուած:  
Երբ որոշէ, եւ պէտք լինի այսպէս ասած ամուսնա-  
կան ֆօրմալիզմը—դա մի ուրիշ հարց կը լինի:

**ՓԱՅԼԱԿ.**— Հիանալի բացատրեցիր: Այժմ բան  
մըն ալ ըսեմ: Դուն ի՞նչ կը խորհիս այս տղաքնե-

ըուն մասին։ Ախալա՛ր, ասոնք խենթ չե՞ն։ Ասոնց  
ըրածը գո՞րծ է։ Ասոնց կեանքը կեա՞նք է։ Միշտ ա-  
նօթի, միշտ պարտքերուն մէջ խրուած։ Առնել գի-  
տեն, դարձնելու քաղաքականութենէն կը փախին։  
Այս գո՞րծ եղաւ։

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Դա մի ժուլիկութիւն է։

**ՓԱՅԼԱԿ.** — Եւ գիտե՞ս, մեզի ալ չեն հաւնիր։  
Ամերիկահայերու վրայ կը խնդան։ Երբ լաթերս կը  
լուամ՝ բան չեն ձգեր, որ չըսեն։ Երբ թերթ կը ծա-  
խեմ, կ'ուզեն կասլիկի պէս խաղցնել զիս։ Բայց օրը  
տասն անգամ փարա կ'ուզեն, առանց խպնելու։ Ես  
ինքնօգնութեամբ կը կառավարուիմ, երբեմն ալ եղ-  
բօրմէս դրամ կառնեմ, իսկ իրենք, —մեղա՛, մեղա՛,  
ալ աշխարհի վրայ հարուստ հայ մը չեն թողուցած,  
որուն նամակ դրած չըլլան, դրամ ուզելու։ Ժամերով  
սրճարանները կը նստին, կամ թավլի կը խաղան,  
կամ փողոցէն անցնող կիները կը դիտեն, եւ անանկ  
աչքերով, անանկ աչքերով, որ ուրիշ մը իրենց փո-  
խարէն կը կարմրի։ Այս ձեւով ուսո՞ւմ պիտի առ-  
նեն, Հայ ազդին ալ օգտակար զաւակնե՞ր ըլլան։

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Դա մի ժուլիկութիւն է։ Նը-  
րանք էկօնօմիական նեղատիվ սիստէմի զոհեր են։ Եւ  
որովհետեւ էրուդիցիան պակաս է իրենց մէջ, այդ  
պատճառով էլ նրանք շուտ կոտրւում եւ պասսիվ  
տիպեր են դառնում։ Յետոյ նրանք միշտ դլորւում են  
ցած եւ իրենց Փիզիօնօմիան էլ մետամօրֆօզներին է  
ենթարկւում։

**ՓԱՅԼԱԿ.** — Ախալա՛ր, Ես կը մեռնիմ ու քու ը-  
սած այդ մօրֆօզ կամ խօրֆօզներուն չեմ ենթարկ-  
ուիր։ Հասկցա՞ր։

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Հասկանում եմ ձեզ։ Բայց  
պիտի զիտենաք, որ Երբ նրանք կեանքի մէջ մտնեն  
եւ իրենց էկօնօմիական սիտուացիան լաւանայ, իրենք

էլ կը փոխուեն եւ պօղիտիվ տիտեր կը դառնան։ Նրանք ինտելիգէնտ ժուլիկներ են, բայց վերջը լաւ կը լինեն։

**ՓԱՅԼԱԿ.** — Անոնք ինթելիկէնթ . . . ի՞նչպէս ըսիր . . . անոնք ինթելիկէնթ սարսաղներ են։ Հասկըցա՞ր։

## ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Միսաֆ, Գիսակ, Սեւակ ներս են մտնում, գըլխարկները նակատի վրայ քաշած, ձեռքերը գրպանների մէջ։ Բոլորը մռայլ եւ յուսահատ։

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Ահա ինտելիգէնտ պրօլետարների լեզոնը գալիս է։

**ԳԻՍԱԿ.** — Թութիւնդ տո՛ւր։

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Ես պապիրոսներ ունեմ միայն։ (Տուփը մեկնում է նրան։ Գիսակը վերցնում է մէկ հատ, Միսաֆ եւ Սեւակ եւս լուր մօտենալով՝ մէկ-մէկ հատ էլ իրենի են վերցնում։ Երեքն էլ սկըսում են ծխել։ Երկար լոռութիւն։)

**ՓԱՅԼԱԿ.** — (Նկարելով։ Ինի նիրեն) Անգամ մը գրութիւն մը ձեռքս անցաւ, որուն հեղինակը անպայման ոռւսահայ մը ըլլալու էր։ Վերնագիրը մտքիս մէջ տպուեցաւ, «Քաղցածների Երգերից»։ Թուափրան մը ըլլալու էր, բայց չկարդացի, խորհելով թէ արդէն վերնագիրը կը բաւէր՝ բովանդակութիւնը հասկնալու համար։ Եթէ ներկայիս նոյն գրութիւնը ձեռքս իյնայ՝ ծայրէ ի ծայր պիտի կարդամ։

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Պրօլետարիատի իսկական բանաստեղծները միմիայն այդպիսի պօէզիա են ստեղծում։

**ՓԱՅԼԱԿ.** — Շո՛ւր։ (Գիսակին) Ինչո՞ւ տխուր ես։ Եւ բոլորդ ալ այնքան թթուած դէմքեր ունիք։

ԹԵՐԵՅՈ քաղաքական դէշ լուրե՞ր կան թերթերուն մէջ: Զըլլա՞յ թէ Պօլսոյ Պատրիարքը հիւանդ է:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Ֆինանսական կրիզիս է տիրում իրենց գրապաններում: Այդ պատճառով էլ թըթուած են: Եթէ էկոնոմիական էվոլյուցիան մեզանից հազար տարի առաջ սկսուած լինէր՝ հիմա այս տեսակ տրագիկ ֆիզիօնօմիաներ գոյութիւն չպիտի ունենային, որովհետեւ կեանքը բոլորի համար մի իդիալիս կը լինէր եւ ամենքը երջանիկ կը լինէին:

**ՄԻՍԱՔ.** — Մեր վրա՞յ կը խնդաք, հա՞: Իմ քընացած յաւերժահարս արձանը տակաւին կը քնանայ: Ատկէ ալ դէշ: Ամբողջ մարմինը պատրաստ է, սակայն պէտք եղած կաւը չունիմ, որ գլուխը շինեմ: Արձանս առանց գլուխի կը մնայ: Եւ կ'ուզէք որ խնդամ, պարեմ, երդեմ:

**ՓԱՅԼԱԿ.** — Ախսլա՛ր, ատանկ պարապ պատճառներէն ինչո՞ւ կը նեղուիս: Անունը փոխէ, եւ փոխանակ քնացած յաւերժահարս կոչելու՝ գլխատուած յաւերժահարս ըսէ՛, եւ իրը ծանօթութիւն աւելցուր թէ Հայաստանէն եկած է: Ատով նոյն իսկ հայանը-սլաստ փրօպականու մը ըրած կ'ըլլաս, որովհեեւ ամեն ոք թիւրքերուն պիտի վերազրէ այդ յանցանքը:

**ՄԻՍԱՔ.** — Ըստածդ արդէն յանցանք մըն է գեղարուեստին դէմ: Մեղք որ նկարիչ անունը վրադ կ'առնես:

**ՓԱՅԼԱԿ.** — Ախսլա՛ր, ինչո՞ւ: Գէ՞շ ըսի: Թելադրութիւնս ամենէն գործնական բան մըն է: Յանցաւո՞ր եմ որ զիս չես գնահատեր:

**ՄԵՒԱԿ.** — Պուրժուական առաքինութեան ամենէն հոյակապ միջոցներ—խորհուրդ, խրատ, թելադրանք:

**ՓԱՅԼԱԿ.** — Մեղա՛, մեղա՛: Ախսլա՛ր, նախանձելու ի՞նչ պատճառ ունիք: Քովս հազիւ երեսուն

Փրանք կը մնայ եւ ութ օր եւս պիտի սպասեմ, մինչեւ որ Ամերիկայէն եղբօրմէս քանի մը տալէր ստանամ: Ես պուրժուա՞ եղայ: Սպասէք մինչեւ իրիկուն: Ամեն մէկուդ երկու Փրանք կուտամ, մինչեւ որ տեսնենք թէ ի՞նչ կ'ըլլայ խեղճ հայ ազգին վիճակը:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — (Փայլակին) Ես ձեր էմպուլսները չատ գովելի եմ գտնում, որովհետեւ նրանք համապատասխանում են ուսանողների բոհեմական ազնիւ տրադիցիաներին: (Դառնալով միւսներին) Այս իրիկուն Սպանիական զալում մի չափազանց կարեւոր կօնֆերենցիա կայ Հարաւային Աֆրիկայի ոսկի հանքերում աշխատող նեղլողործաւորների սիտուացիայի մասին: Անգլիական բուրժուազիայի բոլոր մախինացիաները երեւան պիտի բերուեն եւ Լորդ Չեմբերլէնի եւ իր նմանների էքսպլուատացիան, որով նա իր այս գրանք եւ այն գրանք միլիոնաւոր ֆունտ ստերլինգներ է լցնում: Կօնֆերենցիայում պիտի հանդիպեմ իմ բարեկամ մի Եազօնացի ուսանողին, որ ինձ քսան Փրանկ պարտք ունի եւ այսօր պիտի վճարի: Այդ փողը կ'առնեմ, կօնֆերենցիայից յետոյ կը գընանք Օդէոն կաֆէ, մէկ-մէկ սուրճ կը խմենք եւ կօնֆերենցիայի նիւթերը լուրջ կերպով անալիզի կ'ենթարկենք: Հիանալի ժամանց կունենանք: Այն փողից էլ ձեզ քիչ-քիչ բաժին կը հանեմ: Ուզում եմ որ ամենքդ անպատճառ դաք:

**ՄԵՒԱԿ.** — (Աւխոյժ) Արդէն ինքս կը պատրաստուէի մինակ հոն երթալու այս իրիկուն:

**ՄԻՄԱՔ.** — Ես ալ այն իրիկուն մասնաւոր զբաղում մը չունիմ... եւ կարծեմ կրնամ դալ... որովհետեւ ինքս ալ կը հետաքրքրուիմ այդ գօնֆերանսով: Դուն ի՞նչ կը խորհիս, Գիսակ:

**ԳԻՄԱԿ.** — Ես... (Չեռքերը շփելով գոհունակութեամբ) Ես... նոյնպէս կ'ուզեմ ներկայ ըլլալ այդ

գօնֆէրանսին . . . որովհետեւ անկեղծօրէն շահագըր-  
դուռած եմ Ասիրիկէի սեւամորթ գործաւորներու գը-  
րութեամբ։ Դժբախտաբար այդ խնդրին շուրջ այն-  
չափ քիչ պաշար ունիմ, որ կը փափաքիմ նախապէս  
միտքս պատրաստել այդ ուղղութեամբ։ Այդ պատ-  
ճառաւ աւելի օգտակար կը գտնեմ որ սկիզբէն գաֆէ  
մը երթանք, մէկ-երկու ժամ հոն նստինք, մէկ-մէկ  
կամ երկու-երկու սուրճ խմենք, այնուհետեւ գօն-  
ֆէրանսին նիւթերը նախապէս անալիզին ենթար-  
կենք, ինչպէս Շահնազարօվը կ'ըսէ, եւ վերջը եր-  
թանք բուն գօնֆէրանսին։ Առաջարկս տրամաբանա-  
կան չէ։ Դուն ի՞նչ կը խորհիս, Միսա՞ք։

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — Ես այժմ անմիջապէս սենեակս  
պիտի զնամ եւ (Ժամացոյցին նայելով) ժամը չորսին  
ձեզ կը հանդիպեմ Օդէոն կաֆէում։ Այնտեղից կը  
զնանք կօնֆերենցիայի զալը։ (Դուրս է գնում, դրան  
մօտ) Ցը։

**ՓԱՅԼԱԿ.** — Ախպա՛ր, դուք զնացէք, ես ատանկ  
բաներու համար ժամավաճառ չեմ ըլլար։

**ԳԻՍԱԿ.** — Ինչո՞ւ։ Միթէ՞ չես հետաքրքրուիր  
Ասիրիկէի խափշիկներու ողբալի կացութեամբ։ Գոնէ  
ինձի կենսական հարց մը կը թուի այն, քանի որ . . .

## ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

**ՄԻՍԱԿ.** — (Ներս նետուելով, գլխարկը ծուռը  
դրած) Հէ՛յ, ի՞նչ էք սատկածներու պէս սենեակս  
թափուեր։ Ելէ՛ք դուրսը։ Հրաշալի օդ կայ։ (Վե-  
րարկուն նետելով Փայլակի կողմը) Դուն, Ամերի-  
կացի բարեկամ, այս Շահնազարօվի վերարկուին վը-  
րայ քիչ մը սապօն քսէ եւ Վաշինկթըն Դրկէ, Ազգա-  
յին թանգարանին մէջ պահուելու։

**ՓԱՅԼԱԿ** — Ախալա՛ր, առանկ ալ կատա՞կ կ'ըլլայ:  
Ներկերս իրարու խառնեցիր:

**ՄԻՍԱԿ**. — Գիսակ, գիտե՞ս ո՞վ տեսայ: Երեւա-  
կայէ՛, — ՍԵՆԵՔԵՐԻՄ Ալիփունարեան, Հապեշիստանի  
ՄԵՆԵԼԻՔ կայսեր հայ գոհարավաճառը: Հարիւր  
ֆրանք փոցուցի անկէ, եւ խոստացայ վաղը իրիկուն  
իրեն ընկերանալ — սանկ — զանազան դաֆէներն այ-  
ցելելու:

**ԳԻՍԱԿ**. — Իրա՞ւ կ'ըսես: Բախտդ կը բացուի  
կոր:

**ՄԵՒԱԿ**. — Տիար ՍԵՆԵՔԵՐԻՄ Ալիփունարեանը ես  
չատ մօտէն կը ճանչնամ: Չորս տարի առաջ տեսած  
եմ զինքը ժան կուժօն փողոցը, Հայոց եկեղեցիին  
մէջ: Եռանդով դէմքը կը խաչակնքէր եւ կ'աղօթէր:  
Պատուական ազգային մըն է: Փարիզուհիներուն հա-  
մար հոգին Բեհեղզերուղին քով գրաւի կը դնէ:  
Սքանչելի մարդ մըն է: Սիսա՛կ, հաճոյքով պատ-  
րաստ եմ ընկերանալու վաղը իրիկուան ձեր արշա-  
ւանքներուն:

**ՄԻՍԱՔ**. — Ես եւս պատրաստ եմ փորձառու-  
թիւններս ձրի տրամադրելու Տիար ՍԵՆԵՔԵՐԻՄ Ալի-  
փունարեանին:

**ՄԻՍԱԿ**. — (Փութկոտ, օձիքը փոխելով) Ժամա-  
նակ չունիմ ձեզ հետ երկար զրադուելու: Միսա՛ք,  
ա՛ռ քեզի տասը ֆրանք: Գիսա՛կ, քեզ եւս, տասը  
ֆրանք: Մեւա՛կ, քեզ եւս, տասը ֆրանք: Դուք դա-  
ցէ՛ք, ձեր գործին նայեցէք, վերջը ձեզ կը հանդի-  
պեմ Ռիշարին Գաֆէն:

**ՄԻՍԱՔ**. — Կեցցէ՛ Տիար ՍԵՆԵՔԵՐԻՄ Ալիփունար-  
եան: Բնացած Յաւերժահարս արձանիս գլուխը պատ-  
րաստ է: (Դուրս է թռում):

**ԳԻՍԱԿ**. — Կեցցէ՛ Հապեշիստանի ՄԵՆԵԼԻՔ կայս-  
րը: Ես նորին մեծութեան անունը պիտի յաւերժա-

ցընեմ ստամոքսիս մէջ՝ պատուական ճաշով մը:  
(Դուրս է քոռում):

**ՍԵՒԱԿ.**— Կեցցէ՛ Հասլեշիստանի Կայսրուհին:  
Նախ վաղեմ ճերմակեղէնս ազատեմ լուացարարի Բա-  
րելոնական դերութենէն: (Դուրս է քոռում):

**ՓԱՅԼԱԿ.**— (Երեսը խաչակինքելով) Մեղա՛, մէ-  
ղա՛: Այս ի՞նչ խենթերու մէջ ինկած եմ:

**ՍԻՍԱԿ.**— (Մահմակալի տակից իր հին պայու-  
սակը հանելով) Քանի մը վայրկեան եւս, եւ ամեն  
բան կարգադրուած կ'ըլլայ: Ամեն բան: Հերոսա-  
կան վերջին ճիդ մը, եւ կենսական ամենէն կնճռոտ  
հարցերէն մէկը լուծուած կ'ըլլայ: (Հագուստներն  
ու քուլքերը հաւաքելով) Դուն մասնաւոր զբաղում  
մը ունի՞ս ճիշտ այս վայրկեանին: Կրնա՞ս քչիկ մը  
օդնել, որպէսզի իրերս չանթայիս մէջ հաւաքեմ:

**ՓԱՅԼԱԿ.**— Շո՛ւր: Ինչո՞ւ չօդնեմ: Քրիստոնէա-  
կան պարտքս թող ըլլայ: Բայց կրնա՞մ հարցնել թէ  
ո՞ւր կը պատրաստուիս ուխտի երթալու:

**ՍԻՍԱԿ.**— Սենեակս կը փոխեմ: Վատառողջ ծակ  
մըն է հոս: Բժիշկս պատուիրեց անմիջապէս փոխա-  
դրուիլ ասկէ, այլապէս թոքախտի ենթակայ եմ: Կը  
տեսնե՞ս ո՛րչափ աղտոտ է հոս: Կատարեալ խոզա-  
նոց մը: Իսկ նոր բնակավայրս իսկական դղեակ մըն  
է: Մաքուր եւ ընդարձակ սենեակ մը, փափուկ ան-  
կողին մը, չորս հատ աթոռ, լայն սեղան մը, բոլոր  
ոտքերը հաստատուն վիճակին մէջ, ջուր—ամեն բան  
մէջը, կը հասկնա՞ս: Եւ ասկէ ալ աժան:

**ՓԱՅԼԱԿ.**— Շատ աղէկ կ'ընես որ կը փոխադր-  
ուիս: Եւ հաճոյքով պիտի օգնեմ, երբ օգնութեանս  
պէտք ունիս, հոգ չէ թէ նեղուած եմ քենէ:

**ՍԻՍԱԿ.**— Նեղուա՞ծ: Ես ի՞նչ չարիք հասցուցած  
եմ քեզ:

**ՓԱՅԼԱԿ.**— Մոռցա՞ծ ես: Զե՞ս յիշեր ի՞նչպէս

մուրի տակառին մէջ կոխեցիր ու հանեցիր զիս: Ճիշտ  
ինչպէս Ամերիկայի հայ խմբագիրները իրարու կ'ը-  
նեն:

**ՍԻՍԱԿ.** — Զեմ կարծեր թէ ես ընդունակ եմ այդ  
ներկարարութեան: Դուն սխալուած չե՞ս:

**ՓԱՅԼԱԿ.** — Ինչո՞ւ սխալուած ըլլամ: Դուն մէկ  
միլիոն էշերու բաղադրութիւն չկոչեցի՞ր զիս: Ախ-  
պա՛ր, մարդու մը երեսին էշ կ'ըսուի՞, եւ ան ալ՝  
ֆրանսայի մայրաքաղաքին մէջ:

**ՍԻՍԱԿ.** — Այդ բառի՞ն համար նեղուած ես: Կը  
կարծէի թէ աւելի նուրբ ջիղեր ունիս, եւ ատանկ ա-  
ծականներ վրադ չես առներ: Բայց չե՞ս գիտեր որ  
դուն ալ ոճրադատ օրէնսդրութեան ենթակայ յան-  
ցանք մը գործեցիր:

**ՓԱՅԼԱԿ.** — Ե՞րբ, ի՞նչ ձեւով: Ախպա՛ր, ինչո՞ւ  
կը դրպարտես: Ես ի՞նչ ըրած եմ որ:

**ՍԻՍԱԿ.** — Ի՞նչպէս թէ ի'նչ ըրած ես: Հապա  
չե՞ս գիտեր որ օրէնքով արդիլուած է երկրորդ անձի  
մը սեփականութիւնը եղած կնոջ սրունքներուն մատը  
դիպցնել: Իսկ քանի մը մատներ դիպցնելը աւելի  
ծանր յանցանք կը սեպուի: Դուն Հոռմէական օրէնս-  
դրութեան հիմնադիր Օգոստոս կայսեր օրինադրքի  
երկրորդ հրատարակութեան տեղեակ չե՞ս, այն որ  
լոյս տեսաւ Տիբերիոս կայսեր օրով, ասկէ երկու  
հաղար տարի առաջ:

**ՓԱՅԼԱԿ.** — Ախպա՛ր, ես սեղանին տակը մնա-  
ցեր էի կծկուած, երբ դուք ներս մտաք: Եւ երբ դուք  
սիրաբանութեան սկսաք՝ ես ալ յուզմունքէս հաւա-  
սարակշոռութիւնս կորսնցուցի, սահեցայ, որով եր-  
կու ձեռքերս ակամայ քու այդ խուշիկին սրունքնե-  
րուն դիպան: Այդ եղաւ ոճի՞ր: Օգոստոս կայսը  
ի՞նչ կապ ունի այդ դէպքին հետ:

**ՍԻՍԱԿ.** — Այն կապն ունի, որ ատիկա ուրիշ

իրաւունքներու դէմ ոտնձգութիւն կը նկատուի եւ  
Ենթակայ է Օգոստոս կայսեր օրինագրքի 375-րդ  
յօդուածի տրամադրութեան, որ երկու ամիսէն մին-  
չեւ տասներկու տարուայ բանտարկութեան կընայ  
յանգիլ:

**ՓԱՅԼԱԿ.** — Մեղա', մեղա': Այս ի՞նչ օրերու հա-  
սանք: Ուրեմն դուն կուզես զիս բա՞նտը դրկել:

**ՍԻՍԱԿ.** — Քա'ւ լիցի: Ըսել կ'ուզեմ որ միւս ան-  
դամ զգոյշ ըլլաս, սեղանին տակը չժտնես եւ մանա-  
ւանդ ուրիշի կնոջ ոտքերուն հետ չխաղաս: Այն գեր-  
քերը ինձի տա՞ս:

**ՓԱՅԼԱԿ.** — Ահաւասիկ: Յայսմաւուրքի պէս ալ  
ծանր է: Սաշափ գիրքեր ինչո՞ւ կը պահես, ախ-  
պա՛ր: Մէկ-երկու հատն ալ կը բաւէ: Գիտե՞ս, ես  
ալ գիրք մը կ'ուզեմ գրել, սանկ, Փարիզի Հայկա-  
կան Գաղտնիքներ անունով: Աղուոր անուն չէ՞:

**ՍԻՍԱԿ.** — Ինչո՞ւ Ամերիկայի Հայկական Գաղտ-  
նիքներ անունով գիրք մը չես գրեր: Փարիզի գաղտ-  
նիքներուն հետ ի՞նչ գործ ունիս: Այդ միւզը ինձի  
կը պատկանի, որովհետեւ դուն նոր անձ մըն ես հոս,  
իսկ ես գրեթէ հոս մեծցած եմ:

**ՓԱՅԼԱԿ.** — Ի՞նչ կը զրուցոս, ինձ հե՞տ կը խա-  
ղաս: Ես սեղանին տակը եղածս ատեն նոյն իսկ ձեր  
խօսակցութիւնը գրի անցուցեր եմ: Կը հասկնա՞ս:  
Բայց, հոդ մի՛ ըներ: Թշնամանքի համար չէ որ ըրած  
եմ: Սիրահարութեան ձեւեր կ'ուզեմ սովորիլ, որ ինձի  
ալ պէտք կուգայ: Բան մը հարցնեմ նէ՛ շիտակը  
կ'ըսես: Ե՞րբ պիտի ամուսնանաս խուշիկիդ հետ:

**ՍԻՍԱԿ.** — Երբ երկրորդ անգամ ջրհեղեղ ըլլայ:  
Ես իր չօճռւխները ի՞նչ ընեմ: Գլուխս պէլայի մէ՞ջ  
ձգեմ:

**ՓԱՅԼԱԿ.** — Ինչո՞ւ, հայրենակից: Աղուոր տի-  
կին մը, փախլաւայի պէս անուշիկ, ծիծաղկոտ, հա-

բուստ, Երկու հատ ալ պատրաստի չօճուխ—ալ ի՞նչ  
կուզես: Բախտը ինքը եկեր է եւ դուռդ կը ծեծէ,  
իսկ դուն, ինչպէս հայ քրիստոնեաները կ'ըսեն՝ նազ  
կը ծախես:

**ՍԻՍԱԿ.**— Պեռլինի վեհաժողովին 61-րդ յօդ-  
ուածը աւելի դիւրութեամբ կրնայ կարգադրուիլ,  
քան ըսածներդ: (Ուշադրութեամբ նայելով Փայլա-  
կին) Դուն ինչո՞ւ վերջերս այդչափ գունատ դէմք  
ունիս: Զըլլա՞յ թէ հիւանդ ես:

**ՓԱՅԼԱԿ.**— Ի՞նչ կը զրուցես, Հայրենակից:  
Ինչո՞ւ հիւանդ ըլլամ: Գոյնս գոյն է:

**ՍԻՍԱԿ.**— Ո՛չ, չափազանց փոխուած կը տեսնեմ  
քեզ: Գիտե՞ս, քեզ համար անկեղծօրէն կը ցաւիմ եւ  
շարունակ կը խորհիմ, թէ ի՞նչ կրնամ ընել քեզ օդ-  
տակար ըլլալու համար:

**ՓԱՅԼԱԿ.**— Իրա՞ւ կ'ըսես: Ամենէն օդտակար  
գործը որ կրնաս ընել՝ քեզի փոխ տուած քսան Փը-  
րանքս վերադարձնելու պիտի ըլլայ:

**ՍԻՍԱԿ.**— Հասարակ բան մըն է ըսածդ: Արդէն  
այս իրիկուն իսկ պիտի տայի քեզ այդ չնչին գու-  
մարը: Իսկ քանի մը օր վերջ, կրնամ չօշափելի գու-  
մար մը քեզ տրամադրել, որպէսզի կրթութիւնդ շա-  
րունակես ի փառս եւ ի պարծանս ազգիս Հայոց: Այդ  
չէ ըսածս: Այլ այն, որ դէմքիդ գոյնը շատ գէշ կ'ե-  
րեւի աչքիս, եւ կը վախնամ որ առողջութիւնդ վերջ-  
նականապէս քայքայուի, քու այս անպիտան խոռո-  
չին մէջ բնակելով:

**ՓԱՅԼԱԿ.**— Ախպա՛ր, ինքս ալ կը վախնամ:  
Անպայման պիտի փոխադրուիմ այս անիծեալ որջէն:  
Խոր Վիրապէն աւելի գէշ տեղ մըն է:

**ՍԻՍԱԿ.**— Հոգ մի ըներ: Ես սքանչելի սենեակ մը  
կը գտնեմ քեզ համար: Այս Երկու գիրքերը ինծի  
տա՞ս:

**ՓԱՅԼԱԿ.** — Ահաւա՛սիկ:

**ՍԻՍԱԿ.** — Մարքսի «Քաղիթալ» — Շահնազարովի անժխտելի ստացուածք մը: Ա՛լ իր ձեռքէն չի պիտի ազատուիմ, եթէ հոս մոռնամ: Վա՛յ խենթ, վա՛յ: Իր ամենօրեայ ժամագիրք է: Ծայրէ ի ծայր դոց ըրած է: Եւ կարդացած ատեն կարծես երգ Երդոց է որ կը կարդայ:

**ՓԱՅԼԱԿ.** — (Ծրարուած քուղբի միջից մի խուռ փետուր հանելով) Վա՛յ, պատօ՛: Աղջկայ գլխարկի փետուր մը: Հը՛մ . . . հը՛մ . . . : (Հանդիսաւոր ձեւով պայուսակի մէջ դնելով): Աս ալ հոս: Անշուշտ այս փետուրը սրտաշարժ պատմութիւններու բանալի մըն է:

**ՍԻՍԱԿ.** — Խորոզի փետուր չկարծես, հա՛: Իսկական ջայլամի փետուր մըն է, ամենէն արժէքաւոր տեսակէն, Մատակասգար կղզիէն եկած: Հասկըցա՞ր:

**ՓԱՅԼԱԿ.** — Թո՛ւհ, ախպա՛ր, այս գուլպաներուդ կոյտը չե՞ս կրնար լուալ: Հոտը մինչեւ Զինաստան կը հասնի, պէ՛:

**ՍԻՍԱԿ.** — Ես լուացարա՞ր եմ որ հոտած գուլպաներս լուամ:

**ՓԱՅԼԱԿ.** — Իսկ ես լուացարա՞ր եմ որ շապիկներս, գուլպաներս եւ այլն կը լուամ: Ո՞ր մէկը աղէկ է, — աղտոտ ու քրքրուա՞ծ պտտիլ եւ բան մը չընե՞լ, թէ մաքուր եւ կոկիկ երեւոյթ ունենալ, շաբթուան մէջ մէկ ժամ զոհելով լաթերը լուալուն համար: Այս գինիի պարապ շիշե՞րն ալ կուզես չանթայիդ մէջ տեղաւորել:

**ՍԻՍԱԿ.** — Խե՞նթ ես: Գինետո՞ւն պիտի բանամ: Ատոնք Մատամ կուկուին յիշատակ կը թողում, իբր երախտիքիս ապացոյց մը իր վեհանձն հովանաւորութեան համար:

**ՓԱՅԼԱԿ.** — (Աղջկաց մի գուլպայ բարձրացնելով  
թուղթերի միջից) **Օ'**, **ՃՈ'**: **Աղջկայ գուլպայ մը:**  
**Հը' մ... հաւանաբար մեծ մամայէդ ժառանդած ես**  
**կտակով մը...: Աս ալ հոս:** **Զըլլայ թէ կորսնցնես**  
(Պայուսակի մէջ է դնում):

**ՍԻՍԱԿ.** — **Ալ բան չմնաց:** **Կրնամ չանթաս կա-**  
**պէլ** (Կապում է եւ փորձում բարձրացնելու) **Ո՛ւֆ...**  
**Նոյեան տապանէն ծանր եղաւ:** **Դուն երկրաչափու-**  
**թեան մասին գաղափար ունի՞ս:**

**ՓԱՅԼԱԿ.** — **ԽԵ՞նթ ես:** **Որո՞ւ հետ կը խօսիս:**  
**Աշխարհի երեսին կա՞յ գիտական ճիւղ մը,** **որու մա-**  
**սին գաղափար չունենամ:**

**ՍԻՍԱԿ.** — **Հիանալի:** **Կրնա՞ս ըսել թէ փողոցէն**  
**մինչեւ այս պատուհանը քանի՞ ոտք բարձրութիւն**  
**կայ:**

**ՓԱՅԼԱԿ.** — **Շո՞ւր:** **Եօթանասունը ութը օր է հոս**  
**կը բնակիմ եւ օրը երեք անգամ կ'իջնեմ եւ երեք ան-**  
**գամ կ'ելնեմ,** **ամեն անգամ սանդուխին աստիճաննե-**  
**րը հաշուելով:** **Ութսան ութը աստիճան սանդուխ,**  
**որ ըսել է մօտ յիսուն կամ յիսուն եւ հինգ ոտք բարձ-**  
**րութիւն:**

**ՍԻՍԱԿ.** — **Ես ալ նոյնչափ կը հաշուէի:** **Ուրեմն**  
**սխալուած չեմ:** **Այժմ կը հաճի՞ս փողոցը իջնել եւ**  
**պատուհանիս տակը սպասել մինչեւ որ չուանով մը**  
**չանթաս վար կախեմ:** **Այս սոսկալի ծանրութիւնը**  
**անկարելի է սանդուխէն ձեռքով վար տանել,** **առանց**  
**չնչասպառ ըլլալու:** **Ես պատուհանէն կը կախեմ,**  
**դուն կ'առնես եւ քովը կը սպասես,** **ես անմիջապէս**  
**վար կ'իջնեմ եւ կերպով մը նոր բնակավայրս կը փո-**  
**խադրեմ:** **Հասկցա՞ր:** **Իսկ իրիկունը չըլլայ թէ տեղ**  
**մը երթաս:** **Մօնփառնաս փողոցին անկիւնը կը սպա-**  
**սես ժամը ճիշտ ութին:** **Հոն կուգամ եւ միասին տեղ**  
**մը կ'երթանք թեթեւ ժամանցի մը համար:**

**ՓԱՅԼԱԿ.** — Շուրբ: Ինչո՞ւ չընեմ: Ասկէ դիւրին  
ի՞նչ կայ: Ես վարը կ'իջնեմ, եւ երբ սուլեմ, դուն  
չանթաղ կախէ՛: Ի՞նչ աղուոր ալ խորհեցար: Եթէ  
կ'ուզես՝ ինքդ ալ չանթայիդ վրայ նստէ եւ փողոցը  
իջիր: (Դուռը քանալով) Ախպա՛ր այս սանդուխէն  
իջնելն ու ելնելը պատուհաս մըն է: Ամերիկայի մէջ  
ո՞վ լսած է ասանկ խայտառակութիւն: Հոն ամենէն  
մէծ անքաղաքավարութիւն կը սեպուի, եթէ մէկը  
ոտքով նոյն իսկ մէկ յարկ ելնէ կամ իջնէ: (Դուրս  
է գնում):

**ՍԻՍԱԿ.** — (Մինակ) Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛....  
Ի՞նչքան չուտ համոզեցի մեր պարոն ներկարարը:  
Հա՛, Հա՛, Հա՛....: (Շուրջը նայելով) Սակայն....  
չուան չունիմ: Նզովք: Ի՞նչպէս չխորհեցայ: Այժմ....  
ի՞նչ ընեմ: Ի՞նչպէս կախելու է չանթան (Զդայնա-  
ցած սենեակին մէջ դառնալով) Արդեօք փողո՞ցը իջ-  
նեմ եւ խանութէ մը գնեմ....: Բայց ինչո՞ւ դրամ  
ծախսեմ.... թո՛ւհ.... ի՞նչպէս սկիզբէն նկատի չա-  
ռի.... (Մահնակալին առջեւ կանգնելով) Հը՛մ....  
կարծեմ ուրիշ միջոց չունիմ, փողոցը իջնելու եմ,  
խանութէ մը գնելու.... (Յանկարծ վերմակը գետին  
է նետում եւ սաւանը յափստակում) Գտա՛յ: Այս է  
փնտռածու: (Սաւանը պատոելով երկարութեամբ՝  
սկսում է իրար կապել ծայրերը) Թէ ժամանակի եւ  
թէ դրամի խնայողութիւն (չափելով) Այս մէկ կը-  
տորը գրեթէ վեց եւ կէս ոտք: Տասը կտոր—կ'ընէ  
վաթսումը հինգ ոտք: Աւելի, քան սէտք է: (Փոր-  
ձելով կտրել) Երկաթէն աւելի զօրաւոր: Եթէ Մա-  
տամ կուկուն ալ կախեմ չանթայիս Հետ՝ չկտրուիր:  
Եթէ Մատամի փեշերէն իր կատուն ալ կախուի նորէն  
չկտրուիր: Իսկ եթէ ինքս ալ մատամի վիզէն կախ-  
ուիմ եւ չանթայիս Հետ վար իջնեմ՝ Հաւանաբար  
նորէն չկտրուիր: Թո՛ւհ.... ի՞նչքան տղեղ ճաշակի

տէր պիտի ըլլամ, որ այդ ընեմ։ Կեցի՛ր, նզովեալ  
եահուտի։ Կարծեցիր խե՞նթ եմ, որ սլարտքս վճա-  
րեմ։ Դրամ ունենամ, ինքս ծախսելու ձիրք չունի՞մ,  
որպէսզի բաց աչքով ձեռքդ լեցնեմ, եւ դուն ալ եր-  
թաս պանքալին մէջ պահ տաս։ (Պայուսակը բարձրա-  
ցընելով) Ո՞ւֆ, կարծես կապարով լեցուած ըլլայ։  
(Կապելով) Այս չանթաս կախեմ նէ՝ ինքս ալ հրեշ-  
տակային անմեղ երեւոյթով սանդուխէն կ'իջնեմ ա-  
ռանց ոեւէ կասկած արթնցնելու պառաւին մտքին  
մէջ։ Վերջը, թող վազէ ու փնտոէ այս դժոխքին մէջ։  
Փարիզին մէջ մէկը գտնելու համար տարիներ պէտք  
է։ Եւ զտնէ ալ՝ ի՞նչ կրնայ ընել։ (Պատուհանից  
դուրսը նայելով) Հա՛, հա՛, հա՛ . . . Մեր եանքի բա-  
րեկամին ուրւազիծը կը նշմարեմ եւ կարծես ինքս մո-  
լորակի մը վրայէն տարբեր մոլորակ մը կը դիտեմ։  
Էյֆէլի աշտարակէն ալ բարձր կը թուի սենեակս։  
(Պայուսակը կախելով նախ ձեռքով նշաններ է անում  
վարը եւ ապա սկսում է իջեցնել) Այս մէկ յարկ . . .  
անցաւ . . . երկրորդ յարկ եւա . . . իջաւ . . . : Տէր Յի-  
սուս, տասներկու առաքեալներ, երեք հարիւր վաթ-  
սուն եւ հինգ հայրապետներ . . . օգնեցէք ձեր հաւա-  
տացեալ ծառային . . . : Վա՛յ . . . : Օ՛հ . . . կտրուե-  
ցա՛ւ։ Ինկա՛ւ վարը։ Կրնայ ըլլալ եանքիի գլխուն  
վրայ։ Բան մը չեմ տեսներ։ Մութ անդունդ մը կար-  
ծես կը բացուի առջեւս։ Օ՛հ, օ՛հ . . . (Սենեակին մէջ  
խենթի պէս վազվզելով) Օ՛հ . . . օ՛հ . . . եթէ մարդ  
մը սպանուած ըլլայ։ Այն ահոելի ծանրութիւնը փղի  
մը գլխուն վրայ իյնար՝ կը ճեղքէր, ո՞ւր կը մնայ  
մարդկային փափուկ դանկ մը։ Ա՛հ . . . կը խենթնամ։  
Կը ցնդիմ։ Գլուխս կը ճաթի կոր։ (Կրկին պատուհա-  
նին մօտենալով) Արդէն մութ է եւ մառախուղի պէս  
բան մը . . . : Ինքս ալ չցատկի՞մ, եւ եւ անձնասպան  
չըլլա՞մ, մէկ անգամէն հաշիւներս մաքրեմ աշխարհին

Հետ . . . : Վա՛յ ապո՛ւշ, ի՞նչ յիմար բաներ կը զրուցեմ, առանց կարմրելու: Փախիմ: Ամենէն մեծ հերոսութիւնս այս պիտի ըլլայ: Տեսնենք, այս քաւթառ եահուտին կրնա՞յ զիս բռնել (Դուռը բաց է անում եւ կամացուկ դուրս սահում):

(Կարն դադար)

## ՊԱՏԿԵՐ ԶՈՐՈՈՐԴ

Ներս են մտնում Փայլակ՝ պայուսակը տակած, Սիսակ՝ գրեթե եւ հագուստներ ձեռքը եւ Ոստիկան:

**ՈՍՏԻԿԱՆ.** — (Փայլակին) Ուրեմն դուք կ'ըսէք որ իրերը այս պարոնի՞ն կը պատկանին: Եւ ինքը այս սենեակին մէ՞ջ կը բնակի:

**ՓԱՅԼԱԿ.** — Այո՛, մուսիօ:

**ՍԻՍԱԿ.** — Կ'ուզեմ շտկել փոքրիկ թիւրիմացութիւն մը: Ատենօք հոս կը բնակէի, սակայն ոչ ներկայիս, քանի որ արդէն փոխադրուած եմ ասկէ:

**ՓԱՅԼԱԿ.** — Ի՞նչ կըսես, ախպա՛ր, շիտակ խօսէ: Այս ի՞նչ պէլայ փաթթեցիր գլխուս:

**ՈՍՏԻԿԱՆ.** — Կ'ուզեմ հասկնալ թէ այս պատուհանէ՞ն կախեցիք ձեր պայուսակը:

**ՓԱՅԼԱԿ.** — (Գլուխը հաստատական ձեւով տարձելով) Հաւանաբար . . . սակայն, կը հասկնաք . . . անմեղ սխալմունք մը . . . եւ անշուշտ, վեհանձնօրէն պիտի ներէք . . . :

**ՈՍՏԻԿԱՆ.** — Եւ միայն փաստերը պիտի ստուգեմ, եւ երկուքդ ալ առաջնորդեմ ոստիկանատուն, նկատելով որ դուք հանրային ապահովութեան դէմ վտանգաւոր քայլ մը գործած էք: Որոշ է որ կրնար սպանութիւն մը տեղի ունենալ, եթէ այս ծանր պա-

յուսակը ոեւէ մէկու վրայ իյնար: Դուք ձեր բացա-  
տրութիւնները հոն—ոստիկանատան մէջ կրնաք ը-  
նել . . . :

### ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐԵՐԴ

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— (Ծումբի նման ներս է նետ-  
ում, աւելը ձեռքը) Աւազա'կ, կողոպտիչ, անխիղճ,  
չէ՞ք ամչնար: Գաղտնի խոյս կուտաք, առանց ձեր  
պարտքը վճարելու: Այդ ազնութի՞ւն եղաւ: Վեց ա-  
միս է հոս կը բնակիք եւ առաջին ամսուան վարձքը  
վճարելէն ետք՝ մէկ սանթիմ չէք տուած հինգ ամ-  
սուան ընթացքին: Ատկէ զատ՝ վաթսուն ֆրանք եւս  
փոխ առած էք, որ ըսել է՝ հարիւր վաթսուն ֆրանք  
տալիք ունիք ինձ: Զէ՞ք ամչնար:

### ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

**ԶԻԶԻ.**— (Ներս նետուելով) Դուք, մուսիօ Սի-  
սակ, տղեղ բաներ կ'ընէք: Դուք ուզեցիք փախի՞ւ,  
առանց մեր խանութին տալիքը վճարելու: Սիթէ՞  
մոռցաք մեր երշիկները, մեր հացերը, պանիրը, զի-  
նին . . . :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— Զէ՞ք ամչնար:

**ԶԻԶԻ.**— Զէ՞ք ամչնար:

**ՄԻԱՍԻՆ.**— (Ճշալով) Զէ՞ք ամչնար, չէ՞ք ամը-

**ՓԱՅԼԱԿ.**— Ախպա'ր, այս ի՞նչ է քու ըրածը:  
Քիչ կը մնայ ինքղինքս պատուհանէն վար նետեմ,  
այնքան կ'ամչնամ:

**ՄԻԱՍԿ.**— (Կիսաճայն) Զգէ', ճանըմ, օրինական  
ճամբայ մը կը դտնեմ այն փոքրիկ կնճիռը լուծելու:  
Դուն ինչո՞ւ կը յուզուիս:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Զէ՞ք ամչնար:  
**ԶԻԶԻ.** — Զէ՞ք ամչնար:  
**ՄԻԱՄԻՆ.** — Զէ՞ք ամչնար, չէ՞ք ամչնար:

### ՊԱՏԿԵՐ ԵՕԹԵՐՈՐԴ

Գիսակ, Սեւակ եւ Միսաք ներս են մտնում եւ շփոքուած կանգնում պատի տակ:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Ասոնք ալ այս պարոնին ընկերներ են: Բոլորն ալ մէկ խումբ են: Բոլորն ալ զիս կողոպտել կ'ուզեն: Զէ՞ք ամչնար:

**ԳԻՄԱԿ.** — Ինձ ոեւէ բան յայտնի չէ, մատամ, եւ չեմ հասկնար, ինչո՞ւ մեզ կ'անարդէք:

**ՄԻԱՄԻՔ.** — Ես ալ չեմ հասկնար թէ հոս ի՞նչ կ'անցնի-կը դառնայ:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Զէ՞ք հասկնար, հա՞: Իսկ իմ հարիւր վաթսուն ֆրանք առնելի՞քս: Զէ՞ք ամըշնար:

**ԶԻԶԻ.** — Իսկ մեր երշիկնե՞րը, մեր հա՞ցը, մեր պանի՞րը, մեր դինի՞ն: Զէ՞ք ամչնար:

**ՄԻԱՄԻՆ.** — Զէ՞ք ամչնար, չէ՞ք ամչնար:

**ՓԱՅԼԱԿ.** — Ախսլա՛ր, ես պիտի խենթնամ: Հայստանի անունը խայտառակուեցաւ, եւ ան ալ՝ Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ:

**ՈՍՏԻԿԱՆ.** — Ամօթ բան է այս, պարոններ:

### ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — (Դուրսից պոռալով) Դուք ժուլիկութիւններ էք անում: Դուք ինտելիգէնտի ֆիզիօնօմիա չունէք: Կօնֆերենցիային պիտի գայիք, բայց ստիպում էք որ ես Պարիզի բոլոր վողոցները չափչիեմ, ձեր հետքը դտնելու: Զեր վարձունքը մի

**Լուրջ կրիտիկային չի դիմանում:** (Նկատելով ոստիկանին եւ միւսներին՝ տփոքուած) **Բայց այստեղ մի ինչ որ դրամատիքական էպիզօդ է կատարուել...**

**ՈՍՏԻԿԱՆ.**— **Մուսիօ', ի՞նչ կը պոռաք:** **Զէ՞ք խորհիր որ այս տան մէջ կրնան հիւանդներ կամ մանուկներ գտնուիլ, որոնց հանգիստը կը վրդովէք ձեր կոկորդի թնդանօթային գողգոռոցով:**

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— **Այս պարոնն ալ ասոնց խումբէն է:** **Բոլորն ալ կողոպտիչներ եւ խարերաներ են:** **Զէ՞ք ամչնար:**

**ԶԻԶԻ.**— **Զէ՞ք ամչնար:**

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— **Ես բոլորովին չեմ հասկանում թէ ինչե՞ր էք խօսում:**

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— **Հապա իմ սենեակիս վա՞րձքը, հարիւր վաթսուն ֆրա՞նքը, որ այս պարոնը չի վճառած կը փախի:** **Իբր թէ չէք հասկնար, հա՞:** **Իրերը պատուհանէն կը կախէք, կծիկը կը դնէք, եւ նորէն չէ՞ք հասկնար:**

**ԶԻԶԻ.**— **Իսկ մեր խանութին հաշի՞ւը:** **Մեր երշի՞կը, մեր հա՞ցը, մեր պանի՞րը, մեր դինի՞ն:** **Զէ՞ք ամչնար:**

**ՄԻԱՄԻՆ.**— **Զէ՞ք ամչնար, չէ՞ք ամչնար:**

**ՈՍՏԻԿԱՆ.**— **Պարոննե՛ր, ես ձեր փոխարէն կ'ամըչնամ:**

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— **Ախըր ես շատ եմ ամաչում:**

**ՓԱՅԼԱԿ.**— **Ի՞նչ կը զրուցես, հայրենակից:** **Անգամ մը խորհէ՛, որ Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ տեղի կ'ունենայ այս ամենը:** **Ամբողջ Հայ ազգի պատիւը ոտքի տակ գնաց, պէ՛:**

**ՄԻԱՄԿ.**— **Թոյլ տուէ՛ք, այս բոլոր մեղաղըականները լսելէ վերջ՝ իմ փաստերս պարզեմ հոս, որովհետեւ գոյութիւն չունի որեւէ աշխարհամասին մէջ դատարան մը, ուր ամբաստանեալ մը դատա-**

պարտուի, առանց պատեհութիւն ունենալու ինքզինքը պաշտպանելու: (Ոստիկանին) Դուք, մուսիօ, որ հանրային ապահովութեան յարգելի ներկայացուցիչ մըն էք, նախապէս պէտք է ծանօթանաք ինդրի էութեան, ձեր պաշտօնի վսեմութիւնը իր բարձրագոյն աստիճանին վրայ պահելու... եւ ձեր դիրքը ներդաշնակելու համար օրէնքի վսեմ տրամադրութիւններուն հետ: Ինչպէս նաեւ (Մատամ կուկուին) Դուք ամենայարգելի Մատամ, ըմբռնելու համար իմ պայուսակի պատուհանէն հանելու եւ իր օդային ճամբորդութեան միջոցին դժբախտ արկածի մը զոհ երթալու պարագաները....:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.**— Ես անմիջապէս դրամս կ'ուզեմ եւ տրամադիր չեմ ձեր փաստարանական հմտութիւնները ծախու առնելու հարիւր վաթսուն ֆրանքի (Ամելը սպառնական ձեւով շարժելով) Դրամս, եթէ ոչ գիտեմ թէ ինչպէս վարուեմ ձեզ հետ:

**ՄԻՄԱԿ.**— Ես... Ես... նախապէս թոյլ տուէք, մատամ....:

**ՈՍՏԻԿԱՆ.**— Մուսիօ, հոս դատարան չէ, որպէսզի դուք ճառախօսութիւններ ընելու հարկին տակ դանուիք: Իմ պարտքս է ձեզ ոստիկանատուն առաջնորդել, ուր կրնաք ձեր պաշտպանողական ատենախօսութիւնն ընել ճարտասանական բոլոր ձեւերով: Ինչպէս նաեւ դուք, մատամ, կրնաք այս պարոնին դէմ ձեր ունեցած պահանջը դատարանի ներկայացնել: Իսկ այժմ (Սիսակին) Հաճեցէք, մուսիօ, ինձ ընկերանալ....:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.**— Ես թոյլ չեմ տար որպէսզի այս մարդը ձեզ հետ տանէք: Թող նախ վճարէ իր պարտքը, կամ եթէ կ'ուղէք դուք վճարեցէք իր տեղ, այնուհետեւ միասին կրնաք ոստիկանատուն կամ նոյն իսկ պարահանդէս մը երթալ:

**ՈՍՏԻԿԱՆ.**— Ե՞ս վճարեմ առ պարոնին պարտքը:  
Մատամ, ձեր փափաքը աւելի քան օտարոտի  
կը գտնեմ:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— (Արագ յափտակելով գետնի  
վրայ թափուած գրքերի կոյտից երկու հատոր) Իմ  
Մարքսի «Կապիտալ»՝ քիչ էր մնում որ մոռանայի:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— (Յարձակուելով՝ խլում է  
նրա ձեռքից գրքերը) Դուք իրաւունք չունիք այս  
սենեակէն մէկ ասեղ նոյն իսկ վերցնելու:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— Այդ գրքերը իմս են, մաղամ:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— Եթէ ձերը ըլլային՝ իմ տան  
մէջ ի՞նչ դործ ունին:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— (Կատղած) Ես ձեզ ասում եմ,  
մաղամ, որ այդ գրքերը իմս են: Եւ պահանջում եմ  
որ այս վայրկեանին ետ տաք իմ «Կապիտալ»:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— Հարիւր վաթսուն Փրանք  
առնելիքս տուեցէք, եւ գրքերը թող ձեզ ըլլան:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— Ես ձեզ ասում եմ մաղամ, որ  
գրքերը իմս են, եւ իմ անունը ամեն երեսի վրայ գը-  
րած եմ իմ սեփական ձեռքով: Վերջին անգամ զգու-  
շացնում եմ որ վերադառնէք ինձ, եթէ ոչ մի զար-  
հուրելի կատաստրօֆ պիտի պատահի այստեղ:

**ՈՍՏԻԿԱՆ.**— Թոյլ տուեցէք, մատամ, նայելու  
այդ գրքերը (Մատամ կուկուի ձեռքից առնելով)  
Մուսիօ', ի՞նչ է ձեր անունը:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.**— Նիկալայ Շահնազարօվ:

**ՈՍՏԻԿԱՆ.**— Իրաւ որ գիրքերու ամեն մէկ էջին  
վրայ կայ այդ անունը: Կ'երեւի այս երիտասարդը  
չափաղանց կը սիրէ այս գրքերը, կամ իր անունը:  
Անուրանալի է որ իրեն կը պատկանին այս երկու հա-  
տորները, հետեւաբար, մատամ, ինքը իրաւունք ունի  
ստանալու իր ստացուածքը (Գրքերը յանձնելով Շահ-  
նազարօվին) կընաք ունենալ, երիտասարդ:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Շնորհակալ եմ, մուսիօ:  
**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — (Զայրոյքով) Օրէնքի ա-  
նունով ասոնց անիրաւութիւնները կը պաշտպանուին:  
Ճիշդ հիմա պիտի հաստատեմ թէ ասոնք ի՞նչ դասա-  
կարգի արարածներ են: (Միսաֆին) Դուք, մուսի՞օ,  
կ'ուղէ՞ք ձեր բարեկամի տալիքը վճարել եւ խնդիրը  
անուշութեամբ կառել:

**ՄԻՍԱՔ.** — Ես, մատամ, սկզբունքով հակառակ  
եմ ուսէ բարեկամիս պարտքերը վճարելու զաղափա-  
րին:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Աղուոր սկզբունք, — իսոսք  
չուղեր: (Գիսակին) Իսկ դո՞ւք, մուսիօ':

**ԳԻՍԱԿ.** — (Աջ ձեռքի քամատով մատևանելով  
Միսաֆի կողմ) Ես ընկերոջս սկզբունքներու հետեւող  
մըն եմ, մատա'մ:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — (Սեւակին) Անշուշտ, դուք  
եւս նոյն սկզբունքներուն հաւատացող էք, այնպէս  
չէ՞ (Սեւակը տարակուսական ձեւով ուսերը քոքում  
է) Հասկցայ ձեզ ալ: (Փայլակին) Եւ դուք, պարոն  
ամերիկացի լուացարար, ի՞նչ կ'ըսէք:

**ՓԱՅԼԱԿ.** — Ի՞նչ կ'ուղէք հասկնալ, մատամ:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Այն կ'ուղեմ հասկնալ թէ  
կը փափաքի՞ք ձեր բարեկամի փոխարէն վճարելու  
հարիւր վաթսուն ֆրանք, եթէ կ'ուղէք զինքը աղա-  
տել անախորժութիւններէ:

**ՓԱՅԼԱԿ.** .— Ես ձեզ տալիք մը ունի՞մ:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Ո՛չ: Սակայն կ'ուղեմ ձեր  
ի՞նչ ըլլալն ալ հասկնալ, մուսիօ լուացարար:

**ՓԱՅԼԱԿ.** — Այսինքն կ'ուղէք հասկնալ թէ խելքս  
թոցուցե՞ր եմ, որպէսզի ուրիշին պարտքը վճարեմ:  
Ո՛չ, մատամ: Եւ կը խնդրեմ պատուիս հետ չխաղալ,  
ամերիկացի լուացարար կոչելով զիս: Հասկցա՞ք:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Դուք շարունակ ձեր սենեակին մէջ լաթեր չէ՞ք լուար:

**ՓԱՅԼԱԿ.** — Իմ սենեակին մէջ կը լուամ լաթերս: Եթէ ձեր սենեակին մէջ լուամ՝ կրնաք դիտողութիւնընել: Հասկցա՞ք:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Դուք ի՞նչպէս կը համարձակիք այդ եղանակով ինձ հետ խօսիլ:

**ՓԱՅԼԱԿ.** — Իմ եղանակը ամերիկեան եղանակ է, մատամ, եւ հետեւարար ամենէն գործնական եղանակը: Հասկցա՞ք:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — (Ճշալով) Իսկ իմ եղանակն ալ ի'մ եղանակ է, եւ այդ եղանակով կ'արդիլեմ որպէսզի ոեւէ մէկը լուացարարութեամբ պարապի իմ տան մէջ: Հասկցա՞ք: Զեր աղտոտ լաթերուն ջուրը շարունակ վարը կեցող պատուաւոր ընտանիքի մը խոհանոցը կը թափուի ամեն անդամ, եւ այսօր ալ անոնց ապուրի կաթսային մէջ կաթած է: Մարդիկ քանի անդամներ զգուշացուցին, եւ ալ համբերութենէն ելած՝ կը սպառնան դատարանի դիմել: Հետեւարար լաւ կ'ըլլայ որպէսզի անմիջապէս մաքրուիք այստեղէն եւ զիս աղատէք ձեր ներկայութենէն: Հասկցա՞ք:

**ՓԱՅԼԱԿ.** — Ես մինչեւ եկող հինգշաբթի հոսմնալու իրաւունք ունիմ, վճարած դրամիս համար: Եւ կը յիշեցնեմ մինչեւ հինգշաբթի իրիկուն, ժամը ութէն քառասուն վայրկեան անցած: Հասկցա՞ք:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Ես ձեզ ժամանակ կուտամ մինչեւ այս իրիկուն ժամը ութէն քառասուն վայրկեան անցած կորսուիլ այստեղէն, այլապէս ձեր սնտուկն եւ իրերը ճիշտ այս պատուհանէն փողոցը կը նետեմ: Ոչ թէ կը կախեմ այս պարոնի պէս, այլ կը նետեմ, (ճշալով) կը նետեմ, կը նետեմ, եւ դարձեալ կը նետեմ: Հասկցա՞ք:

**ՓԱՅԼԱԿ.** — Իսկ ես ալ ամերիկեան դեսպանատունը կը վազեմ եւ . . . (սպառնական) պատասխանատուն դուք կ'ըլլաք դիւանագիտական այն կնճռոտութիւններուն համար որ ձեր պատճառաւ պիտի ծագին։ Հասկցա՞ք։

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Ամերիկայի անունո՞վ կը սպառնաք։ Կրնաք գիտնալ, որ Ֆրանսան Ամերիկային չի վախնար։ Հասկցա՞ք։

**ՓԱՅԼԱԿ.** — Դուք ալ կրնաք վատահ ըլլալ, որ Ամերիկան Ֆրանսային հաղարապատիկ չի վախնար։ Հասկցա՞ք։

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Դուք ի՞նչպէս կը համարձակիք Ֆրանսայի պատուի հետ խաղալ։ Գիտէ՞ք թէ ո՛ւր կը գտնուիք։

**ՓԱՅԼԱԿ.** — Իսկ դուք ի՞նչպէս կը համարձակիք Ամերիկայի պատուի հետ խաղալ։ Գիտէ՞ք թէ ո՛ւր հետ է որ կը խօսիք։

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Մուսիօ' . . . :

**ՓԱՅԼԱԿ.** — Մատա՛մ . . . :

**ՇԱՀՆԱԶՄՈՒ.** — (Գիսակին, կիսաձայն) Սա մի վտանգաւոր սիտուացիա է։

**ՈՍՏԻԿԱՆ.** — (Սիսակին, հեգնական) Կը տեսնէ՞ք, մուսիօ', ձեր պայուսակի օղային ճամբորդութիւնը ի՞նչ հետեւանք ունեցաւ։ Ամերիկայի եւ Ֆրանսայի միջեւ պատերազմը անխուսափելի կը դառնայ . . . :

### ՊԱՏԿԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ

Օր. Վարդենիկ, Տիկ. Արփենիկ

Օր. ՎԱՐԴԵՆԻԿ. — Մուսիօ Շահնազմօվ . . . :

Տիկ. ԱՐՓԵՆԻԿ. — Սիսակ էֆէնտի . . . :

Երկուսն էլ ներս մտնելով՝ տիոքուած կանգնում են պատի մօտ։

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Միայն դուք պակասս էիք  
Հոս: Բաէ'ք, դուք ո՞վ էք: Ի՞նչ գործ ունիք իմ տան  
մէջ:

**ՓԱՅԼԱԿ.** — (Շահնազարօվին, ցած) Վա՛յ, պա-  
պօ' . . . : Ամբողջ Հայ ազգը խայտառակ պիտի ըլլայ  
այժմ . . . :

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — (Ցած) Այո՛, սա մի զարհու-  
րելի կատաստրօֆ է դառնում: (Արագ մօտենալով  
Օր. Վարդենիկին, ցած) Ինձ Համար մի կօլոսալ եր-  
ջանկութիւն է ձեզ հանդիպել, սակայն ցաւում եմ որ  
մենք յարմար հիւրեր չենք այստեղ, եւ աւելի լաւ  
կը լինի որ գնանք մի պարտէզում նստենք եւ խօսենք  
մեր . . . :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Բաէ'ք, ինչո՞ւ կը լոէք:  
(Ոստիկանին) Կը տեսնէ՞ք, մուսիօ: Ինչպէս Երկուքն  
ալ շփոթուեցան: Բոլորը մէկ խումբ են: Բոլորը զիս  
կողոսլու կուզեն: Եկած են այս պարոններուն օդ-  
նելու . . . :

**ՄԻՍԱԿ.** — (Զգոյշ ժալուածքով մօտենալով Տիկ.  
Արփենիկին, ցած) Շատ անյարմար վայրկեանին Հոս  
եկաք: Կը ցաւիմ . . . : Հոս վոքրիկ թիւրիմացութիւն  
մը կայ, որ անշուշտ, ձեզի չի վերաբերիր . . . : Եթէ  
կարելի է, (Բոլորովին ցած) Խուշիկս, տուն գնա',  
ես իրեկունը կուղամ քովդ . . . :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Բաէ'ք, ինչո՞ւ կը լոէք:  
Կը կարծէք չե՞մ հասկնար թէ ի՞նչ գաղտնի նպատա-  
կով Հոս եկած էք: Պայուսակներ կը կախէք ու կը  
փախի՞ք: Չէ՞ք ամչնար:

**ԶԻԶԻ.** — Չէ՞ք ամչնար:

**ՄԻՍԱԿԻՆ.** — (Ճշալով) Չէ՞ք ամչնար, չէ՞ք ամըչ-  
նար:

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — (Օր. Վարդենիկին) Ախր, ես

սաստիկ ամաչում եմ, եւ ուղում եմ որ գնանք այս-  
տեղից:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— (Ոստիկանին) Ես կը պա-  
հանջեմ, մուսի'օ, որպէսզի այս աղնուավայլ տիկին-  
ներու անուններն ու հասցէները առնէք եւ անմիջա-  
պէս ինձի յանձնէք: Կուղեմ ասոնց ինչ ըլլալը հաս-  
տատել:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.**— Մատամ, ես ամենեւին չեմ  
հասկնար թէ ի՞նչ կ'ըսէք:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— Ըստածներս չէ՞ք հասկնար:  
Իսկ հարիւր վաթսուն ֆրանք առնելի՞քս: Հիմա հաս-  
կըցա՞ք: Չէ՞ք ամչնար:

**ԶԻԶԻ.**— Իսկ մեր խանութին պա՞րտքը: Մեր  
երշիկնե՞րը: Մեր հա՞ցը: Մեր ոլանի՞րը: Մեր դի-  
նի՞ն: Չէ՞ք ամչնար:

**ՄԻԱՍԻՆ.**— (Ճշալով) Չէ՞ք ամչնար: Չէ՞ք ա-  
մըչնար:

**ՓԱՅԼԱԿ.**— Վա՛յ, պապօ՛....:

**ՄԻԱՍԻՆ.**— (Տիկ. Արփենիկին, ցած) Ի ոչը Աս-  
տուծոյ, հեռացէ՛ք: Այս կինը խենթ մըն է եւ ոստի-  
կանը եկած է որպէսզի հիւանդանոցը փոխադրէ...  
աղմուկ կը հանէ... վտանգաւոր տեսակի խենթ մըն  
է: Շուտ տուն գնա՛... կ'աղաչեմ....: Վերջը...  
ամեն բան կը բացատրեմ քեզ....:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.**— Ես բնաւ չեմ կրնար հասկը-  
նալ, թէ հոս ի՞նչ կ'անցնի, կը դառնայ: Արփենի'կ,  
կարծեմ մենք երթանք: Ներքին խողիրներ կան հոս,  
որ մեզի չի վերաբերիր:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.**— (Ոստիկանին) Մուսի'օ, կը  
պահանջեմ որպէսզի ասոնց բոլորին ալ անուններն ու  
հասցէները առնէք եւ յանձնէք ինձ:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.**— Ի՞նչ նպատակով կը փափա-  
քիք մեր անունները հասկնալ:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — ՈՐՈՇՍՊԻ ՃԵՐ ԻՆԸ ԸԱՄԱՌ  
ԴԻՄՈՒՄԱՅ : ՀԱՍԼԳՎԱ՞Ք :

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Իսկ ես կը խնդրեմ ինձ հետ  
խօսած ատեն վայելուչ եղանակով խօսէք :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Իսկ ես կը փափրաքիմ ճեր  
հասցեն ունենալ : ՀԱՍԼԳՎԱ՞Ք : Պիտի հաստատեմ որ  
դուք ալ ասոնց խումբէն էք եւ եկած էք օդնելու որ-  
պէսպի պայուսակը պատուհանէն կախէք :

**ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.** — Ի՞նչ ըսել է այս ամենը :  
ԶԵՂՎԱ՞Յ թէ . . . :

**ՄԻՍԱԿ.** — (Ցած) Բան մը չկայ . . . թեթեւ թիւր-  
իմացութիւն մը . . . : Ինչպէս ըսի . . . խենթ մըն է . . .  
եւ հիւանդանոց պիտի փոխադրենք զինք . . . :

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Եթէ անպայման մեր ո՛վ ըլ-  
լալը կ'ուղէք գիտնալ, մատամ , — ուրեմն գիտցէ՛ք :  
ՄԵՆՔ Փարիզի ՏԻԿՆԱՆՑ Բարեսիրաց Միութեան վար-  
չութեան անդամուհիներ ենք : Սա չափը կը բաւէ՞  
ճեր հետաքրքրութիւնը գոհացնելու համար :

**ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.** — (Սիսակին) Տեսակ մը . . .  
գէշ կ'զգամ կոր . . . :

**ՄԻՍԱԿ.** — Բան մը չկայ . . . բայց կ'աղաչեմ,  
հեռացէ՛ք երկուքդ ալ . . . :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — (Յանկարծակի մեղմացած ,  
նատելով) Շատ աղէկ : Թող ատանկ ըլլայ : Ուրեմն  
դուք բարեսիրական նպատակո՞վ եկած էք հոս :

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Կրնայ ըլլալ :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Ինչո՞ւ չէք ըներ : Ալ ինչո՞ւ  
կ'ուշացնէք :

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Ի՞նչ բան : Ի՞նչ ըսել կ'ու-  
ղէք , մատա՛մ :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Այն ըսել կ'ուղեմ , որ եթէ  
բարեսիրութեան համար եկած էք՝ ինչո՞ւ բարեսի-  
րութիւն չէք ըներ , որ հաւատամ :

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Ո՞վ կտրիք ունի ձեր բարե-  
սիրութեան:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — (Զեռքով ցոյց տալով ներ-  
կաների վրայ) Ասո՛նք, բոլորը: Վճարեցէք իրենց  
պարտքը, կ'ըմննայ, կ'երթայ: Ասկէ աւելի աղէկ  
բարեսիրութի՞մ:

**ՓԱՅԼԱԿ.** — Մատա՛մ, պատիւ կը պահանջեմ:  
Ես ձեզ տալիք մը ունի՞մ:

**ՄԻՍԱՔ.** — Ես ալ ոչ մէկ հաշիւ ունիմ ձեզ հետ,  
մատա՛մ:

**ՄԵԽԱԿ.** — Կեանքիս մէջ ձենէ առնելիք, եւ  
մանաւանդ տալիք չեմ ունեցած:

**ԳԻՍԱԿ.** — Ես ալ: Ոչ մէկ տալիք, եւ մանաւանդ  
առնելիք չեմ ունեցած:

**ՈՍՏԻԿԱՆ.** — Մատա՛մ, դուք իրաւունք չունիք  
կողմնակի անձանց ինքնասիրութեան դիպելու: Եթէ  
ոեւէ մէկէն առնելիք ունիք՝ նախ հաստատեցէք ձեր  
պահանջին օրինականութիւնը՝ այնուհետեւ միայն  
կրնաք պատասխանատու անձէն պահանջել ձեր առ-  
նելիքը:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Իսկ ես կ'ըսեմ որ ասոնք  
բոլորը պատասխանատու են (Սիսակի կողմը մատ-  
նանելով) այդ պարոնի պարտքին համար: Հասկը-  
ցա՞ք: Ամենքը, ամենքը պատասխանատու են (Ճշա-  
լով), բոլոր ուսանողները, բոլոր ոստիկանները, բո-  
լոր դատաւորները (Փայլակի կողմ), նոյն իսկ Ամե-  
րիկան ալ պատասխանատու է:

**ՓԱՅԼԱԿ.** — Ես Ամերիկայի անունով կը բողո-  
քեմ, մատա՛մ:

**ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.** — Տէ՛ր եմ Աստուած, կը մա-  
րիմ կոր . . . :

**ՄԻՍԱԿ.** — Խնդրեմ, հանդարտուէ՞ . . . (ցած)  
ինքու կը տեսնես որ խենթ մըն է այս կինը . . . :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — (Ճշալով) Եւ ամենէն շատ  
(ցոյց տալով) Օր. Վարդենիկի եւ Տիկ. Արփենիկի  
կողմ) ասանկ թռչնակները պատասխանառու են: Ե-  
թէ ասոնք խելքէ չհանեն երիտասարդները՝ բնական  
է որ ասանկ չարիքներ տեղի չեն ունենար:

ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ. — Մատա'մ, դուք իրաւունք  
չունիք մեր պատուին դիպելու:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Ես բողոքում եմ: Դուք իրա-  
ւունք չունէք այս օրիորդին անպատուելու:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Զըլլա՞յ թէ սիրուհիդ է,  
կամ կինդ է, հէ՞:

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Սա իմ սիմպատիա է, մաղամ  
եւ երբ որոշում տայ անշուշտ իմ կինը կը լինի: Եւ  
ես պահանջում եմ որ գգոյշ լինէք եւ իր ինքնասիրու-  
թեան չդիպէք:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Երբ որոշում տա՞յ...: Հէ՞:  
Ես ալ ատենօք օրը հազար տեսակ որոշումներ կու-  
տայի եւ հազար հատ քեզ պէս այծի գլուխներ մատ-  
ներուս վրայ կը խաղցնէի...: Իսկ այժմ դրամս կու-  
զեմ (Աւելը շարժելով օդի մէջ) դրամս... Եթէ  
ոչ...

ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ. — Մենք երթանք, Արփե-  
նիկ...:

**ՈՍՏԻԿԱՆ.** — (Սիսակին) Երիտասարդ, եթէ  
իրաւ տալիք ունէք այս տիկնոջ, խնդիրը կերպով մը  
կարգադրեցէք, այս աղմուկին վերջ դնելով:

**ՄԻՍԱԿ.** — Ես... պիտի գիտնաք, մուսիօ', որ  
միշտ ալ պարտաճանաչ դտնուած եմ, մանաւանդ ա-  
սանկ մանր-մունր վճարումներու ատեն: Իսկ այս  
յարգելի տիկնոջ հետ ունեցած հաշիւներուս մէջ  
փոքրիկ յապաղում մը տեղի ունեցաւ բոլորովին ան-  
կախ պատճառներէն, որոնք կրնային դիւրութեամբ  
կարգադրուիլ, եթէ...:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Ի՞նչ: Կէս տարի է ապառիկ  
կ'ասլրիք տանս մէջ, դրամ չէք տար, ատկէ զատ  
փոխ դրամ կ'առնէք — եւ այդ ամենը փոքրիկ յասլա-  
ղո՞ւմ կը կոչէք:

**ՈՍՏԻԿԱՆ.** — (Յատակի վրայից մի բուլք  
բարձրացնելով՝ ուշադրութեամբ կարդում է) Հը՛մ...  
հը՛մ...: Մատամ, կրանք վստահ ըլլալ որ այս երի-  
տասարդը իրապէս նիւթական խիստ անձուկ վիճակի  
մատնուած է: (Հազարով) Նոյն իսկ իր մատանին գը-  
րաւի դրած է (հազարով) քառասուն ֆրանքի... հե-  
տեւաբար պիտի սպասէք իր տնտեսական դրութեան  
բարուոքման...:

**Տիկ. ԱՐՓԵՆԻԿ.** — Ի՞նչ...: Մատանին գըրաւի  
դրա՞մ... (Նայելով Սիսակի ձեռքին) Իմ մատա-  
նի՞ն...: Ա՛չ, Սիսակ էֆէնտի (մարելով) Սի-  
սա՞կ...:

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — (Գրկելով Տիկ. Արփենիկին) Տէ՛ր իմ Աստուած... Ա՛չ...: Արփենիկ, ի՞նչ պա-  
տահեցաւ քեզ: Արփենիկ...:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — (Ոստիկանին) Սպասեմ,  
հէ՛: Հազար տարի Ե՞ւս սպասեմ:

**ՓԱՅԼԱԿ.** — (Սեղանի վրայից մի գաւաք առ-  
նելով՝ զուր է լեցնում արագ շարժումներով. Սիսա-  
կին) Ի՞նչ կ'ընես, ախտա՛ր, վա՞յտ կտրեցար: Գոնէ  
դաւաթ մը ջուր տուր... քու խուշիկին... ըսել կ'ու-  
ղեմ տիկնոջդ, պէ՛...:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — (Նկատելով անկողինը խառ-  
նուած, նչալով) Աւազա՛կ, բաւական չէ որ դրամս  
կուտէք, եւ սաւանս ալ կտոր կտոր ըրեր էք...:  
Անխիղճ, անամօթ... (Ամելը Սիսակի գլխին իջեց-  
նելով) Ահաւասիկ...:

**ՍԻՄԱԿ.** — (Զանալով ազատուել) Մատա՛մ, կը  
սխալիք... իրաւունք չունիք...:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — (Հարուածները տեղալով) ԱՀԱ' քեզ իրաւունք, անպիտան, խարդախ . . . :

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — Մաղամ, դուք իրաւունք չունէք աւելով որեւէ մէկին խիելու: Դա ցիլիլիղացիայի դէմ է:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — ԱՀԱ' քեզ ցիլիլիղացիա, (Աւելը Շահնազարօվի գլխին իջեցնելով):

**ՕԲ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — (Ճշալով) Մատամ, դուք իրաւունք չունիք այդ երիտասարդին զարկելու: Կը բողոքեմ: Եւ դուք (Ոստիկանին) Մուսի'օ, կը հաճիք զսպել այդ կինը . . . :

**ԶԻԶԻ.** — Իսկ մեր երշիկնե՞րը, մեր հա՞ցը, մեր դինի՞ն: Զէ՞ք ամչնար:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — (ՕԲ. Վարդենիկին) Ի՞նչ ըսիր: Կը պաշտպանես, հա՞: Զըլլա՞յ թէ որոշում տուիր ասոր հետ անմիջապէս պսակուելու: Հէ՞: Ատա՞նկ է: Կ'ուղե՞ս հատ մըն ալ գլխուղ իջեցնեմ, ճիշտ հոս աղուոր հարսնիք մը սարքեմ երկուքիդ համար:

**ՕԲ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Փորձէ՛ անդամ մը: Ես ալ եղունքներովս այդ ճպոռտ աչքերդ կը փորեմ . . . :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Մաղերէդ կը բոնեմ եւ այս պատուհանէն քեզ փողոցը կը նետեմ . . . :

**ՕԲ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Ես ալ կօշիկս կը հանեմ եւ այդ քօմաթէս քիթդ հաղարապատիկ կը կարմցնեմ:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Քիթս թօմաթէ՞ս եղաւ . . . (յարձակելով) դուն . . . դուն . . . :

**ՇԱՀՆԱԶԱՐՈՎ.** — (Առաջը կտրելով) Ես բողոքում եմ, մադա՛մ: Դա, նորից ասում եմ, ցիլիլիղացիայի դէմ է:

**ՈՍԻԿԱՆ.** — (Արագ խլելով աւելը) Մատամ, հանդարտուեցէ՛ք, եթէ ոչ կը ձերբակալոմ ձեզ եւ ոստիկանատունը կ'առաջնորդեմ:

**ՓԱՅԼԱԿ.** — Վա՛յ, պապօ՛... չօպանի կատղած  
շուն ըլլայ կարծես...:

**ՄԻՍԱՔ.** — Մենք կը բողոքենք այդ կնոջ  
դէմ...:

**ՄԵԽԱԿ.** — Պատիւ կը պահանջենք...:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Ի՞նչ... պատուի անունով  
կը խօսիք...:

**ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.** — (Սրափուած, տկար ձայ-  
նով) Վարդենի՛կ, ա՛ռ քսակս եւ վճարէ թէ սենեա-  
կին եւ թէ երշիկներուն հաշիւր...: Մէջը բաւա-  
կանաչափ դրամ կայ... կը բաւէ... (Ոտքի ելնելով՝  
Սիսակի քեւի տակ) Եւ կ'ուղեմ անմիջապէս եր-  
թանք... անմիջապէս... հասկցա՞ր...: Պարզապէս  
կը ճաթիմ կոր... ասանկ անախորժութեան կեանքիս  
մէջ չէի հանդիպած...:

**ՄԻՍԱԿ.** — Ես... իրաւ որ կ'ամչնամ...: Կը  
ներես, անշուշտ...: Երբ շրջանաւարտ ըլլամ, բնա-  
կան է որ երախտապարտ պիտի ըլլամ... Եւ...  
Եւ...:

**ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.** — Ո՛չ, ո՛չ, ո՛չ: Հասկցա՞ր:  
Ճիշտ այս իրիկուն շրջանաւարտ կ'ըլլանք երկուքս  
ալ: Ա՛լ չեմ կընար սպասել: Պարզապէս կը խենթնամ  
կոր: Հասկցա՞ր: Երթանք, անմիջապէս Վոամշապուհ  
տէր պատպան գտնենք եւ ամեն բան թող լմննայ...:  
Ասանկ բաներուն ալ վերջ կըլլայ...: Տէ՛ր իմ Աս-  
տուած, չանթան պատուհանէն կախե՛լ... ատանկ  
բան ո՞վ լսած է:

**ՕԲ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Մատամ, առէք ձեր դրամը:  
Այլեւս պահանջ մը ունի՞ք:

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒ.** — Այո՛, սաւանին արժէքը...  
Հինգ ֆրանք...:

**ՕԲ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Ահաւասիկ: Եղա՞ւ: (Զիզի-  
ին) Առէ՛ք ձեր դրամը: Այլեւս պահանջ ունի՞ք:

**ԶԻՉԻ.** — Ո՞չ :

**ՈՍՏԻԿԱՆ.** — Կարծեմ պաշտօնս լմնցաւ : (Սիսակին) Երիտասարդ, չեմ ուզեր ձեզ այլեւս հետապընդել : Զանացէք, սակայն, ձեր պայուսակներուն այլեւս օղանաւի պաշտօն չյանձնել : Ատի'օ (Դուրս է գնում) :

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — (Մատամ կուկուին եւ Զիգիին) Այժմ կարգը ինձի կուզայ որ ըսեմ : Այս բոլոր խայտառակութիւններուն համար չէ՞ք ամչնար :

**ՄԱՏԱՄ ԿՈՒԿՈՒԻ.** — Իսկ դուք չէ՞ք ամչնար որ քիթս թօմաթէս կը կոչէք :

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Չէ՞ք ամչնար .

**ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.** — Վարդենիկ, կը բաւէ եղածը : Պարզապէս կը ճաթիմ կոր : Երթա՛նք : Ամեն բան լմնցնելու է այսօր, այս իրիկուն իսկ : Ուր որ աւ ըլլայ, Վոամշապուհ տէր-պապան գտնելու ենք : Երթա՛նք . . . :

**ՄԻՄԱՔ.** — Ուրեմն հարսնիք պիտի վայելենք : Կեցցե՛ն հարսն ու փեսան . . . :

**ՓԱՅԼԱԿ.** — Կեցի՛ր, ախպա՛ր, ի՞նչ կը բառանչես անօթի հորթի պէս : Նախ թող ամուսնանան, վերջը ամէնքս կեցցէ կը պոռանք :

**ՏԻԿ. ԱՐՓԵՆԻԿ.** — Երթա՛նք : Վարդենիկ :

**ԳԻՄԱԿ.** — (Սեւակին) Սիսակին բաղդը կը բանի կոր : Այժմ կընայ շրջանաւարտ ըլլալ . . . :

**ՓԱՅԼԱԿ.** — Շո՛ւր : Ինչո՞ւ չըլլայ :

**ՕՐ. ՎԱՐԴԵՆԻԿ.** — Երթա՛նք, մուսիօ Շահնազարօվ : Արփենիկը որոշում տուաւ անմիջապէս ամուսնանալու եւ անշուշտ ամենքս հիւր պիտի ըլլանք հարսանեկան ինձոյքին :

**ՇԱՀՆԱԶԱՐՕՎ.** — (Հառաչանիքով) Այո՛, ես էլ եմ զգում որ այդպիսի բան պատահեց . . . : (Ցած) Եթէ դուք եւս այդպիսի մի որոշում տաք . . . : Մենք

կարող ենք մեր սրտերի կօօպէրացիայով մի իդիլիական կեանք ստեղծել . . . :

**ՄԻՍԱՔ.** — Հարսնի՞ք, հարսնի՞ք . . . հա՛, հա՛, հա՛ . . . :

**ՍԵՒԱԿ.** — Ուրե՞մն . . . աղէկ սլիտի ուտենք, չէ՞ . . . :

**ԳԻՍԱԿ.** — Ի՞նչ: Հապա չպիտի՞ խմենք:

**ՓԱՅԼԱԿ.** — Ախպա՛ր, չէ՞ք տեսներ: **ՄԷԿԻ** փոխարէն երկու հարսնիք պիտի ունենանք: (Բոլորը դուրս են գնում բացի Մատամ կուկուից եւ Զիզիից):

**ՕՐ.** **ՎԱՐԴԵՆԻԿ.** — (Մինակ, դրան մօտ) **Մատա՛մ**, չէ՞ք ամչնար:

**ՏԻԿ.** **ԱՐՓԵՆԻԿ.** — Չէ՞ք ամչնար:

**ՍԻՍԱԿ.** — **Մատա՛մ** . . . չէ՞ք . . .

**ՓԱՅԼԱԿ.** — **Մատա՛մ.** Ես ֆրանսայի փոխարէն կ'ամչնամ:

## Վ Ե Ր Զ




## ՆԱՀԱԶԱՐՕՎԻ ԲԱՌԱՐԱՆ


— · · · —

ԱԲՍՈՒՐԴ—Անհեթեթ, անհեթեթութիւն:  
ԱԴՐԵՍԻՎ—Յարձակողական:  
ԱԿՏԻՎ—Դրական, ներդործական:  
ԱՄԲԻՑԻԱ—Պատուոյ իղձ, փառասիրութիւն:  
ԱՆԱԼԻՉ—Վերլուծում, տարրալուծում:  
ԱՆԿՈՆՏՐՈԼ—Անսանձ, հոկողութիւնից զերծ:  
ԱՏՄՈՍՖԵՐԱ—Մթնոլորտ, միջավայր:  
ԱՐԻՍՏՈԿՐԱՏ—Էզնուական:  
ԱԻԱՆՏԻԻՐԻՍ—Արկածախնդիր, բախտախնդիր:  
ԲԱԼԼԱՍ—Աւելորդ ծանրութիւն:  
ԴԵՄՈՐԱԼԻՉԱՑԻԱ—Բարոյալքում:  
ԴԻՊԼՈՄԱՏԻԱ—Դիւանագիտութիւն:  
ԴԻՍՏՐՈՒԿՑԻԱ—Կործանում, քայլայում:  
ԶԱԼ—Մրաչ:  
ԷԼԷՄԵՆՏ—Տարր:  
ԷԿՈՆՕՄԻԱ—Ծնտեսութիւն, խնայողութիւն:  
ԷՄԱՆՍԻՊԱՑԻԱ—Ազատագրութիւն:  
ԷՄՊԵՐԱՏԻՎ (իմպերատիվ)—Հրամայական:  
ԷՄՊՈՒԼՍ (իմպուլս)—Մղում, ազդում:  
ԷՊԻՉՈՐ—Միջադէպ:  
ԷՊԻՏԷԹ—Ածական, ծաղրանուն:  
ԷՎՈԼԻԻՑԻԱ—Բարեշրջում, բարեփոխում:  
ԷՏԻՔԱԿԱՆ—Բարոյագիտական:  
ԷՔՍՊԼՈԻԱՏՈՒՑԻԱ—Շահագործում:  
ՃՈՒԼԻԿ—Խարդախ, սրիկալ, չարաճճի:  
ԻԴԷԱ—Գաղափար:  
ԻԴԻԼԻԱԿԱՆ—Հովուերդական, բանաստեղծական:  
ԻԴԻՕՏ—Ապուշ:  
ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ—Նուաճողական, աշխարհակալական:  
ԻՆԴԻՎԻԴՈՒՈՒՄ Անչատ:  
ԻՆԴՈՒՍՏՐԻԱ—Արդիւնագործութիւն:  
ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ—Մտաւորականութիւն, կրթուած դասակարգ:  
ԼԵԳԵՌՆ—Զօրախումբ, հոռմէտական գունդ:


ԱԻԲԵՐԱԼ—Ազատամիտ, աղատական:  
ԽԱՐԱԿՏԵՐԻՍՏԻԿԱԼ—Նկարագիր, բնույթ:  
ԽՈՒԼԻԳԱՆ—Ամբոխավար, ամբոխալին:  
ԿԱՏԱՍՏՐՕՖ—Դժբախտութիւն, աղէտ:  
ԿԼՈՒԲ—Ակումբ:  
ԿՈՒԼՏՈՒՐԱ—Մշակույթ:  
ԿՐԻԶԻՍ—Ճղնաժամ:  
ԿՐԻՏԻԿԱ—Քննադատութիւն:  
ԿՈԼԵԳԻԱՆ—Դպրոցական, ընկերական:  
ԿՈԼՈՆԻԱ—Գաղութ:  
ԿՈԼՈՍԱԼ—Հսկայական, վիթխարի:  
ԿՕԿՕՏ—Կիսաշխարհիկ կին:  
ԿՈՄԲԻՆԱՑԻԱ—Համադրութիւն:  
ԿՈՄԵԴԻԱՆՏ—Կատակարան, ծաղրածու:  
ԿՕՆՍԵՐՎԱՏԻՎ—Պահպանողական:  
ԿՕՆՅԵՐԵՆՑԻԱ—Ժողով, համագումար:  
ԿՈՍՄՈԳՈՒԻՏԻԿԱՆ—Աշխարհաքաղաքացիական:  
ԿՈՕՊԵՐԱՑԻԱ—Համագործակցութիւն:  
ՄԱԽԻՆԱՑԻԱ—Մեքենայութիւն:  
ՄԱՆՈՒՅԱԿՏՈՒՐԱ—Գործարանալին արտադրույթ:  
ՄԱՍՍԱ—Զանգուած:  
ՄԱՔՍԻՄՈՒՄ—Առաւելագոյն:  
ՄԵՏԱՄՈՐՖՈԶ—Այլակերպութիւն, կերպարանափոխում:  
ՄԻՆԻՄՈՒՄ—Նուազագոյն:  
ՄԻՐԱԺ—Ցնորք, տեսողական սկատրանք:  
ՄԻՍՍԻՎ—Պաշտօն, առաքելութիւն:  
ՄՈՄԿՆՏ—Վայրկեան:  
ՄՈՐԱԼ—Բարոյական, բարոյականութիւն:  
ՆԵԳԱՏԻՎ—Ժխտական, բացասական:  
ՆԱԽՎ—Միամիտ:  
ՆԱՑԻՕՆԱԼԻՍՏ—Աղղայնական:  
ՊԱԼԻԱՏԻՎ—Կիսամիջոց, մեղմիչ պարագայ:  
ՊԱՍՍԻՎ—Կրպւորական:  
ՊՐԱԿՏԻԿԱԼ—Գործնական:  
ՊՐԵՍԻԺ—Վարկ:  
ՊՐԻՄԻՏԻՎ—Նախնական, վայրենի:  
ՊՐՈԲԼԵՄ—Խնդիր, առաջադրութիւն:  
ՊՐՈԴՐԵՍԻՍՏ—Առաջադէմ:

ՊՐՈԴՈՒԿՏԻՎ—Արտադրող:  
 ՊՐՕՖԵՍԻԱԼ—Արհեստ, գրադում:  
 ՊՈՉԻՏԻՎ—Դրական:  
 ՊՈԼՄԱԼ—Բանաստեղծական քերթուած:  
 ՍԱԶԵԼ—Յարմարուել, վայելել:  
 ՍԻՄՊԱՏԻԱԼ—Համակրանքի առարկայ, սիրուհի:  
 ՍԻՒՐՊՐԻԶ—Անակընկալ:  
 ՍԻՏՈՒԱՑԻԱԼ—Դրութիւն, կացութիւն:  
 ՍՖԵՐԱԼ—Միջավայր, շրջանակ:  
 ՎՈՒԼԳԱՐ—Վարնոց, փողոցային:  
 ՏԵՄՊԵՐԱՄԷՆՏ—Նկարագիր, ներքին խառնուածք:  
 ՏԵՆԴԵՆՑԻԱԼ—Հակամիտութիւն, հակում:  
 ՏԵՐՄԻՆ—Խօսք, ոճ, անուն:  
 ՏՐԱԳԵԴԻԱԼ—Ողբերգութիւն:  
 ՌԵԱԼ—Իրական:  
 ՑԵՆՏՐԱԼԻՉԱՑԻԱԼ—Կենտրոնացում:  
 ՑԻՎԻԼԻՉԱՑԻԱԼ—Քաղաքակրթութիւն:  
 ՕՊՏԻՄԻՍՏ—Լաւատես:  
 ՖԱԶԻԱՄ—Փոխանցման շրջան:  
 ՖԱԿՏՈՐ—Ազդակ, դործոն:  
 ՖԻԶԻՕՄԻՒԱԼ—Կերպարանք, դիմադիմ:  
 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ—Դրամական, ելեւմտական:  
 ՖՈՒՆԿՑԻԱԼ—Գործողութիւն, արարք:  
 ՖՈՐՄԱԼԻՉՄ—Զեւականութիւն:









A 11  
99603